

Կիպրահայ

«ՆԱՆՕՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵՂՈՆ

Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2013-ին, առաւօտեան ժամը 7.00-ին, կիպրահայ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով, իր դռները բացաւ եւ սկսաւ գործել «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեղրոնը՝ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի հողատարածքին վրայ:



«ՆԱՆՕՐ»ը պիտի գործէ ամենօրեայ դրութեամբ, առաւօտեան ժամը 7.00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6.00-ը, իր գուրգուրալից հոգածութեան տակ ունենալով 4 ամսականէն մինչեւ 3 տարեկան հայ երեխաներ:

Շուրջ մէկ տարի տեւած շինարարական, ներքին կահաւորման եւ վարչական ու յարակից աշխատանքները՝ իրենց լրումին հասած ըլլալով, ա՛յս խիստ էական ու կենսական հաստատութիւնը վերջապէս կեանքի կոչուեցաւ, մարմին տալով վաղուց փայփայուած երագի մը: Հաստատութիւն՝ որ հնարաւորութիւն պիտի ընձեռէ հայ ծնողներուն, որ իրենց մանուկները վստահին ջերմ հոգածութեանը որակեալ եւ փորձառու

մանկավարժներու, Նարեկի հայաբոյր մթնոլորտին մէջ:

Կեղրոնը ոչ-հասութաբեր դրութեամբ պիտի գործէ եւ պիտի կառավարուի հինգ անդամներէ բաղկացեալ, նշանակովի Վարչական Խորհուրդին կողմէ:

«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեղրոնը նախաձեռնութիւնն է Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի: Անիկա վստահաբար մեծ բաց մը



գոցած պիտի ըլլայ կիպրահայ գաղութի կեանքէն ներս եւ, անտարակոյս, պիտի նպաստէ հայապահպանման նուիրական նպատակին:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ»ը ջերմագին զգացումներով կ'ողջունէ «ՆԱՆՕՐ»ի ստեղծումը գաղութիս կեանքէն ներս, յոյս յայտնելով որ ան նպաստէ նաեւ մեր փոքրաթիւ հայազաղութի թիւին բարձրացման եւ մաղթելով անոր անխափան երթ եւ լաւագոյն յաջողութիւններ:

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Երկուշաբթի 9 Սեպտեմբեր 2013-ին, առաւօտեան ժամը 8:00-ին, Կիպրոսի Նարեկ վարժարանները վերաբացին իրենց դռները 2013-2014 ուսումնական տարեշրջանին համար: Խանդավառ եռուզեռը՝ աշակերտներու, ուսուցիչներու եւ ծնողաց, նոր կենսունակութեամբ, խինդ ու ծիծաղով լեցուցեր էր Նիկոսիոյ Նարեկ վարժարանի շրջափակը առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ: Ամառուան երկար արձակուրդէն ետք, աշակերտ-ուսուցիչ-ծնողք վերահանդիպման ուրախութեամբ կը խայտար մթնոլորտը՝ հայ դպրոցին տալով վերանորոգ աշխուժութիւն ու կեանք:



Հաւատարիմ տարիներու իմաստալից ասանդութեան, բոլորը համախմբուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ խնկաբոյր կամարներուն տակ, հոգեպարար աղօթքով սկսելու համար կրթական նոր տարին: Միասնաբար երգուած Տէրունական աղօթքէն ետք, բարեգալուստի ջերմ խօսք արտասանեց Տէր Սոմիկ քահանայ Հապէշեան, շեշտելով որ կրթութիւնն ու ուսումն են որ պիտի զօրացնեն մեր

մանուկներուն եւ պատանիներուն թելերը, որպէսզի յետագային՝ անոնք կարենան ամրութեամբ սաւառնիլ կեանքի դժուարութեանց եւ մարտահրաւերներուն դէմ յանդիման: Ան կարեւորեց յատկապէս՝ Հայոց լեզուի, հայոց պատմութեան եւ հայալեզու դասերու մէջ նախանձախնդրութիւնը՝ հայ աշակերտներուն մօտ, որ պարտին դառնալ արժանաւոր ժառանգորդները Մեսրոպ Մաշտոցի եւ մեր մեծամեծ ուսուցիչներուն իրենց փոխանցուած սրբազան կտակին...: Ապա, ան իր եւ Վարուժան Արքեպիսկոպոսին անունով, բոլորին մաղթեց բարի, յաջող եւ արդիւնաշատ տարի:

Յունարէնի աւագ ուսուցչուհի Տիկ. Մարիաննա Խրիսթոտուլուն կարդաց Կիպրոսի Կրթական Նախարարին խօսքը ուղղուած կղզիին բոլոր աշակերտներուն: Կրթական նախարարը իր խօսքին մէջ կոչ կ'ընէր՝ լաւ սորվելու, գիտելիքով եւ հոգեմտաւոր կարողութեամբ զինուելու, դառնալու լաւ մարդ ու քաղաքացի, անդրադառնալով ի մասնաւորի որ կրթական տարին սկիզբ կ'առնէր Կիպրոսի տնտեսական ճգնաժամային ծանր պայմաններու տակ, զորս քաջաբար յաղթահարելով, մեզմէ իւրաքանչիւրը պիտի դառնար առաւել ուժեղ եւ ամուր: Խօսք-պատգամին մէջ, կը նշուէր նաեւ որ շուրջ քառասուն տարիներէ ի վեր, կղզիին մէկ երրորդը բռնագրաւուած կը մնար թրքական բանակին կողմէ, եւ կը կարեւորուէր՝ կիպրական հայրենիքի բռնագրաւուած հողն ու կոթողները, յուշն ու յիշատակը չմոռնալու էական հանգամանքը: Կրթական նախարարը

աշակերտութեան եւ ուսուցչական կազմին կը մաղթէր բարի, յաջող եւ բեղուն, բովանդակալից տարի:

Հուսկ, խօսք առաւ տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեան, եւ իր բարի գալուստի խօսքէն ետք, անդրադարձաւ դպրոցէն ներս կարգ մը կրթական-արհեստագիտական նոր եւ արդի



հնարաւորութիւններու ստեղծումին, ուսման ընթացքը աւելի արդիւնաբեր ընծայելու դիտաւորութեամբ:

Տնօրէնուհին մասնաւորաբար ուրախութեամբ յայտնեց, որ այս տարի դպրոցին կը վերամիանար յունարէնի նախկին ուսուցչուհի Տիկ. Մարիաննա Խրիսթոտուլուն, որպէս Յունարէն լեզուի լիաժամ ուսուցչուհի, որ դպրոցէն ներս պաշտօնավարած ըլլալով մինչեւ 2005 թուականը, ցուցաբերած է ուսուցչական բժախնդիր եւ բարեխիղճ նկարագիր: Պատգամեց

աշակերտութեան լաւ սորվիլ բոլոր դասերը, յատկապէս Հայոց լեզուն, մեր պատմութիւնը, մաս կազմել նաեւ դպրոցի երգչախումբին ու պարախումբին, որոնք հնարաւորութիւն կ'ընձեռեն նաեւ հայ արուեստը հրամցնելու հայ եւ օտար հանրութեան: Տիկ. Վերա Թահմազեան բոլոր աշակերտներուն եւ ուսուցիչներուն մաղթեց յաջող եւ արդիւնաբեր տարի, եւ իր յատուկ շնորհակալութիւնները յայտնեց Կրթական Նախարարութեան, որ իր անվերապահ աջակցութիւնը կ'ընծայէ դպրոցին, յատկապէս տնտեսական այս դժուար պայմաններուն տակ, հայ մանուկներուն մատուցելով անհրաժեշտ բոլոր միջոցները, որպէսզի անոնք կարենան ստանալ հայեցի դաստիարակութիւն:

Այնուհետեւ, աշակերտները ուղղուեցան իրենց դասարանները, նոր եռանդով ու խանդավառութեամբ սկսելու 2013-2014 ուսումնական տարին:

«ԱԶՍՏ ԽՕՍՔ»ը կը շնորհաւորէ Նարեկի ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը՝ ուսումնական տարեմուտին առիթով եւ բոլորին կը մաղթէ ԲԱՐԻ, ՕՐՀՆԱԲԵՐ, ԱՐԴԻԻՆԱՇԱՏՍ ուսումնակրթական տարի:

ԱԶՍՏ ԽՕՍՔ

ՄԱՆՍՏՐՈ ՍԵՊՈՒՀ ԱՐԳԱՐԵԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԵԾ

ԲԱՐԵԼԱԻՈՒՄ Կ՛ԱՐՁԱՆԱԳՐԷ

Մանստրո Սեպուհ Արգարեանը 26 յունիսին է վեր, գլխուն մէջ յառաջացած արեան կուտակումի մը որպէս հետեւանք, Նիկոսիոյ հիւանդանոցներէն մէկուն մէջ դարմանումի կ'ենթարկուէր: Վերջին շաբաթներու ընթացքին անոր առողջական վիճակը բարելաւում սկսած է արձանագրել դէպի աւելի կայուն իրավիճակ:

«ԳՈՀԱՐ»-համոյթի համայն ընտանիքի ցանկութիւնն է տեղեկացնել իր երկրպագուներուն ու բարին կամեցողներուն, որ մանստրո Արգարեանի առողջութիւնը օրէ օր մեծ առաջընթաց կ'արձանագրէ շնորհիւ զինք շրջապատող բժիշկներուն: Ներկայիս ան կը բոլորէ լիարժէք վերականգնումի շրջան մը՝ վերադառնալու համար իր կայտառ առողջութեան:



Մտահոգ մանստրոյի առողջական վիճակի վատթարացումէն, բարի ապաքինման մաղթանքներու եւ սրտանց յուզական մեկնաբանութիւններու հոսք մը տեղադրուած էր «ԳՈՀԱՐ»-ի կայքէջին մէջ յատկապէս մեկգոնեանցի ուսանողներու կողմէ: Անոնք երախտապարտ ոգիով շնորհակալութիւն կը յայտնէին իրենց ոգեշնչող ուսուցիչին, որ կոփած է զիրենք կրթադաստիարակչական ու մշակութային մարզին մէջ:

Ներկայիս, մանստրոն արդէն վերադարձած է տուն ու կը բոլորէ հանգիստի շրջան մը: Պատասխանատուութեան գիտակցութեամբ կը հետեւի վերականգնման դարմանումներուն եւ շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք աշխարհի չորս ծագերէն բարին կամեցան իրենց հեռաձայնային կապերով, բացիկներ ուղարկելով եւ բարի ապաքինման մաղթանքներ յղելով «ԳՈՀԱՐ»-ի կայքէջին միջոցով թէ այլապէս:

Աղբիւր՝ ԱԶԳ օրաթերթ

«ԱԶԱՏ ԽՕՍԲ»ը, իր հերթին, բարի ապաքինում եւ լիակատար առողջութիւն կը մաղթէ ՄԱՆՍՏՐՈ ՍԵՊՈՒՀ ԱՐԳԱՐԵԱՆԻՆ, ինչպէս եւ՝ շուտափոյթ վերադարձ ԳՈՀԱՐ-ի մեծ ընտանիքին եւ ստեղծագործական աշխատանքին:

Խմբագրական

«ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ...»

Ուսումնական տարւոյն ամէն վերամուտին, նորովի կը փորձենք իմաստաւորել ու արժեւորել՝ աւելի քան 1600 տարուայ վաղեմութիւն ունեցող,



հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը՝ «*Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ*»: Արդարեւ, Գիրերու Գիւտէն ետք, 5-րդ դարուն, այս նախադասութեամբ արտայայտուած միտքը, գաղափար-ապրումը դարձաւ հիմքերու հիմքը՝ հայ ազգային ինքնագիտակցութեան, ինքնաճանաչման հզօր զարթօնքի, տուն տալով հայ գիր ու գրականութեան, հայ Բառ ու Բանի, հայ երգ ու տաղի նորանոր բնկումներուն...: Դարձաւ բանալին հայ ոսկեղենիկ մշակոյթի ոսկեղենիկ կուտակումներուն, որոնք՝ ոգեղէն հրայրքի ժայթքումով մը կարծէք, հրաշակերտութեան իրերայաջորդ ստեղծագործութիւններով,

արուեստի եւ մշակոյթի բոլոր բնագաւառներէն ներս ալ, ընդգրկելով նաեւ մեր հիասքանչ ճարտարապետութեան, քանդակագործութեան, մանրանկարչութեան, ձեռագրական արուեստի եւ այլ ոլորտները..., 5-րդ դարը իրաւամբ ընծայելով ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՍԿԵԴԱՐ:

Ոսկեղենիկ այդ մշակոյթի կուտակումները դարձան վիթխարի ոգեղէն ոյժ, ազգային ինքնաճանաչման եւ ինքնապահպանման հզօրագոյն եւ անխորտակելի վէմ, «*Դարերու ղիմաց կեցող աղամանդեայ ապառաժ*», որ միաւորեց, պահեց-պահպանեց մեզ որպէս ազգ հայոց, լուսաւորեց մեր ճամբան՝ դարերու մութ բաւիղներուն ընդմէջէն...:

Ճանաչողութիւնը կամ իմացութիւնը, ամենալայն ու ամենախոր իմաստով, հիմքերու հիմքն է մշակոյթի եւ կրթութեան, քանզի անիկա կ'ենթադրէ, գերազանցօրէն, ապրուած գիտակցութիւն, որ աւելին է քան պարզ, վերացական գիտակցութիւնը: Աւելին՝ քան զուտ բանականութեամբ ընկալուածը, ուրկէ բացակայ է զգացումը, ապրումը...: Կարելի՞ է, օրինակ, բանականութեամբ միայն ընկալել լոյսն ու խաւարը, բոյրն ու թոյրը, տաքն ու պաղը, առանց զանոնք զգալու եւ ապրելու ունակութեան: Նոյն այս ճանաչողութեան էական կարեւորութիւնը շեշտեր էր դարեր առաջ Հելլէն մեծ փիլիսոփայ Սոկրատեսը, «*ՄԱՆԻՐ ԶՔԵԶ*»ը համարելով ճշմարիտ կրթութեան հիմքը: «*Ծանիր Զքեզ*», այսինքն ճանչցիր կամ իմացիր քու մարդկային էութիւնդ, ինքնութիւնդ, եւ անշուշտ՝ ազգային ինքնութիւնդ, քանզի վերացական մարդ չկայ եւ մարդկային ինքնութիւնը կը դառնայ քոնքրէթ՝ իւրաքանչիւր մարդու ազգային դիմագիծով, ազգային գոյնով ու երանգով, բոյրով ու թոյրով...: Ազգային տեսակով:

Դարեր շարունակ, «*Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ*»ը դարձաւ մեր ժողովուրդի դաստիարակութեան, կրթութեան Ուղեցոյց սկզբունքը, առանց որուն մենք վստահաբար



պիտի խարխափէինք ուղեմուր՝ պատմութեան փոթորկայոյց հողմերուն մէջ, կորսնցնելով մեզ բնորոշող ազգային ինքնութիւնն ու էութիւնը, հայեցիութիւնը, հայ հոգին.....:

Իսկ՝ հիմա՞: Ներկայիս, սպառողական, նիւթապաշտ եւ շահամոլ «քաղաքակրթութեան» յորձանքին մէջ, ուշագրաւ է որ մատղաշ սերունդը, եւ ոչ միայն, կը դառնայ ենթակայ՝ էապէս շահոյթ ու գերշահոյթ հետապնդող, պաստառներէն ու հրապարակներէն շարունակաբար գովազդուող զանգուածային հակա-մշակոյթի եւ հակա-կրթութեան տարրերուն, աղմկարար երգ-երաժշտութենէն մինչեւ գոեհիկ ու գոեհկացնող գուարճանքները, ապառոջ սննդատեսակներէն մինչեւ արդի ապրելակերպը ցուացնող ապագային, ապաբարոյ վարքն ու բարքը, նիստ ու կացը..., որոնք օրն ի բուն կը խուժեն անոր մատղաշ ուղեղէն եւ կենցաղէն ներս, եղծանելով ու ժխտելով մարդկային աւանդական արժէքները, խափանելով անոր ինքնաճանաչողութիւնը, ինքնագիտակցութիւնը, խաթարելով անոր ճաշակը:

Զուգահեռաբար, արագասոյր եւ վիթխարածաւալ տեղեկատուութեանց, սրընթաց աճող գիտահնարքներու, թեքնիք «հրաշք»ներու նորօրեայ խառնիճադանձին մէջ, ունի՞ մարդ էակը, առ հասարակ, թափանցամտութիւնը ըմբռնելու դարերէն եկող այդ պատգամին խորհուրդը: Հարց կու տա՞նք նորովի եւ ըստ էութեան, թէ ի՞նչ է վերջապէս ճշմարիտ կրթութիւնը: Գիտելիքներու, տեղեկութեանց, ծանօթութեանց քանակական կուտակո՞ւմը...: Լեզուներու իմացութի՞ւնը...: Թեքնիք սարքերու օգտագործո՞ւմը...կամ ուսողութեան բարդ խնդիր լուծելու ունակութի՞ւնը...: Ճիշդ է որ այս բոլորը կ'աճանցուին ուսման ու կրթութեան հետ: Սակայն, բուն դաստիարակութիւնը, անոր վախճանական նպատակը՝ դարձեալ եւ դարձեալ իմաստութեան ճանաչողութիւնն է, որ կը սորվեցնէ մարդ էակին՝ կեանքը ճիշդ ապրելու արուեստը: Ճշմարիտ կրթութիւնն է որ մարդ էակին, մատղաշ սերունդին ի մասնաւորի, կը փոխանցէ համամարդկային ու ազգային մշակութային ժառանգութեան արժէքները, զայն հաղորդակից կը դարձնէ բարիին ու ազնիւին, առաքինութեանց, կեանքի իտէալներուն, բնութեան ու տիեզերքի ներդաշնակութեան, բարոյական բարձրագոյն օրէնքներուն հետ, միաժամանակ անոր մէջ կը մշակէ գեղեցիկի ու ճշմարիտի ճաշակը, ինքնուրոյն մտածելու, դիտելու եւ դատելու, երեւոյթները իմաստաւորելու եւ արժեւորելու հոգեմտաւոր վարժութիւնը....:

Առանձնապէս ընդգծելու է, որ բազմապատիկ դժուար է դարձած մեր օրերուն՝ ուղղորդել մատղաշ սերունդի դաստիարակութեան ընթացքը, երբ տակաւ ան կը դառնայ զոհը նաեւ ու յատկապէս՝ սրընթաց աճող ժամանակակից գիտահնարքներու, թեքնոլոգիի: Համակարգիչը, համակարգչային բազմապիսի խաղերը, բջիջային վիրթուալ տարածքի սարքերը՝ իրենց բիրտ հնարաւորութիւններով, կլանած կը թուին ըլլալ անոր համակ ուշադրութիւնը, զայն հեռացնելով մարդկային բնական կապերէն, զիր ու գրականութենէն, իրա՛ւ արուեստէն ու մշակոյթէն....: Ճշմարիտ դաստիարակութենէն: Տակաւ տխուր ականատեսը կը դառնանք, թէ ինչպե՞ս այդ թեքնիք «հրաշալիքները» կը սպառնան ռոպոթացնել մատղաշ ուղեղները, բթացնել մարդկային սիրտն ու զգացումները, բրտացնել հոգին....: Եւ մանաւանդ՝ տարրականացնել գիտակցութիւնը, զայն դարձնել դիւրաւ կառավարելի....:



Հրամայական, ճակատագրական հիմնախնդիր է այսօր՝ խեղաթիւրուած դաստիարակութեան այս ընթացքէն Վերադարձը դէպի ճշմարիտ դաստիարակութիւն, որ կրնայ, անտարակոյս, դառնալ յոյսն ու լոյսը մարդկութեան բարոյական-մշակութային Վերածնունդին:

Մեր փոքր ածուն նոյնպէս որքան խոցելի է դարձած այս հակակրթութեան եւ հակամշակոյթի ահարկու հոսանքին դէմ յանդիման, ուր հայ երեխան ու հայ պատանին եւս հաւատարիմ յաճախորդ-զոհն են՝ նիւթապաշտ, օգտապաշտ եւ շահամոլ քաղաքակրթութեան ստեղծած թեքնիք «Բարիքներուն», թէ խորթ չարժէքներուն, որոնք կ'իշխեն անոնց դեռատի հոգիներուն վրայ, կը սպառնան այլասերել բուն մարդկայինն ու ազգայինը անոնց մէջ, խափանել անոնց ինքնաճանաչումն ու ինքնագիտակցութիւնը՝ Ո՞Վ ԵՄ ԵՍ, ՈՒՐԿԷ՞ ԿՈՒ ԳԱՄ ԵՒ Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՄ էական հարցադրումները...: Չանոնք յատկապէս կը հեռացնեն իրենց ազգային ինքնաճանաչման բուն հիմքը կազմող Մեծաքանչէն, հայ բնիկ ու հարազատ մշակութային համակարգի արժէքներէն:

Կրթական վերամուտի այս օրերուն, հայ նորահաս սերունդին համար ի մասնաւորի, նորոգ իմաստով եւ ահագանգային զարթուցիչի նման կը հնչէ՝ «*Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, Իմանալ զբանս հանճարոյ*» դարաւոր ՈՒՂԵՅՈՅՑ-ՊԱՏԳԱՄԸ, որպէս ինքնաճանաչման, ինքնագիտակցութեան կոչ ու հրաւեր՝ ազգային ու համամարդկային առումներով ալ: Խորիմաստ այս պատգամին ճիշդ ըմբռնումն ու լիարժէք կենսագործումը անոր կեանքէն ներս դարձեր են ներկայիս, առաւել քան երբեք, ազգային փրկութեան լաստ, մի նոր «ԵՂԻՑԻ ԼՈՅՍ», երաշխիք Հայեցի Լինելութեան եւ Ազգային Վերածնունդի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

«ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ» ԿԱՄ «ԿԻԼԻԿԵԱՆ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԵԾ ՀԱՅՔԸ» XI-XIV դարերում (LARMENIE DU LEVANT)

Հարցազրույց՝ ԳՈՀԱՐ ԱՃԷՄԵԱՆԻ

Հարցազրույց պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱ արտասահմանեան անդամ, ԵՊՀ պատուաւոր դոկտոր՝ Արմէն-Քլոտ Մուրաֆեանի հետ «... Հայաստան եկայ ուշացումով, երբ 35 տարեկան էի՝ 1980-ին ԵՊՀ հրաւերով: Այն ժամանակ հասկցայ, որ Հայաստանը կայ, հայութիւնը կայ...» Արմէն-Քլոտ Մուրաֆեան

Հարցում.- Պարոն Մուրաֆեան, տարիների հեռուից մեր բոլոր հանդիպումներն ու հարցազրույցները եղել են ոտքի վրայ, միկրոֆոնային. արդեօք ժամանակը չէ՞ անցնել գրաւոր հայերէնի:



Պատասխան.- Մեծ սիրով:

Հարցում.- Երկար տարիների մաթեմատիկական գիտությունների դոկտորը ինչպե՞ս դարձաւ պատմական գիտությունների դոկտոր, ի՞նչը յեղափոխեց Ձեզ, ինչո՞ւ նման շրջադարձ: Գուցէ վերլիշեցիք Ձեր ծնողների՝ Ցեղասպանութիւնից մազապուրծ եղած գեղանկարիչ Զարեհ Մուրաֆեանի եւ

Հայկուհի Դամլամեանի կրած տառապանքնե՞րը Եղեռնի տարիներին:

Պատասխան.- Իսկական շրջադարձ մը չէր, ես միշտ հետաքրքրուած եղած եմ հին ու միջնադարեան ժամանակաշրջաններու պատմութեամբ: Մօտ 18 տարեկան հասակիս, երբ պէտք էր ապագայ ուղղութիւնս որոշուէր, իմ դասատուներս մօրս թելադրեցին որ գիտութեան մարզին մէջ շարունակեմ. այդ տարիներուն այդ ուղղութեամբ շատ աւելի ճամբաներ կը բացուէին, քան պատմութեան մարզին մէջ, ու քանի որ թուաբանութեան մէջ բաւական յաջող էի, այդ ուղիով շարունակեցի: Սա խելօք որոշում էր. թուաբանութիւնով կեանքս կապահովէի ու ազատօրէն կրնայի պատմութիւնով զբաղիլ, առանց որեւէ դպրոցի հետեւելու:

1977-ի ամառը, երբ պիտի որոշէինք արձակուրդի ո՛ր երթալ, կինս մէկէն ըսաւ. «Քու նախնիներուդ հողերը այցելենք»: Նման բան միտքէս չէր անցներ... Մեր մեքենայով Փոքր Ասիան ծայրէ ի ծայր շրջեցանք, մանաւանդ Սեւ ծովուն ափը՝ ծնողներուս ծննդաշրջանը, Անիին, ու Կիլիկիայով վերադարձանք: Այդ հսկայ ու վեհ բերդերը վրաս այնքան մեծ տպաւորութիւն թողուեցին, որ 1979-ին կրկին Կիլիկիա այցելեցինք. այսպէս սկսաւ իմ «Կիլիկիամոլութիւնս»:



Հարցում.- Տարօրինակ է, որ Հայոց Կիլիկեան շրջանի լաւագոյն մասնագէտը, բազմաթիւ աշխատութիւնների հեղինակը, նորից ու նորովի է անդրադարձել այդ շրջանին ներառնելով XI-XIV դարերը:

Փարիզի համբաւաւոր «Les Lettres» հրատարակչութիւնը, որը տարիներ առաջ հրատարակել էր նաեւ Ձեր նախորդ երկհատորեակը՝ նուիրուած Կիլիկիային, ցանկութիւն է յայտնել հրատարակել «L'Armenie du Levant» աշխատութիւնը եւս:

Հագուադէպ է, երբ հրատարակիչն է դիմում հեղինակին գրքի հրատակչութեան հարցում: Ի՞նչը առիթ եղաւ ձեռք մեկնելու Ձեզ:

Պատասխան.- «Les Belles Lettres» հրատարակչատունը 1988-ին իմ «Կիլիկիան կայսրութիւններու խաչմերուկին» գործս հրատարակած էր, որը Կիլիկիոյ ընդհանուր պատմութեան նուիրուած էր, հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը: Կիլիկեան Հայաստանը բուն նիւթը չէր, միայն բաղադրիչ մըն էր: Սակայն հինգ տարի ետք, 1993-ին, վերջին հայոց թագաւորին՝ Լեւոն Ե-ին մահուան 600 ամեակին առիթով, մեծ ցուցահանդէս մը պատրաստեցի, այս անգամ գուտ Կիլիկեան Հայաստանին նուիրուած, Սորպոնի համալսարանի մատուոյն մէջ: Այդ թուականէն ի վեր այս նիւթին շուրջ կեդրոնացայ ու 2002-ին պաշտպանեցի աւարտաճառս՝ «Հայոց դիւանագիտութիւնը Խաչակրաց ժամանակաշրջանին»:

Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Արամ Ա, այս գործը հրատարակելու պատրաստ էր, բայց ուզեցի նիւթը ընդլայնել ու խորացնել՝ նկատի առնելով այդ վերջին հայոց թագաւորութեան բոլոր երեսակները: Գործը դեռ կիսաւարտ էր, երբ «Les Belles Lettres»-ի կողմէն հեռախօսազանգ մը ստացայ. 1988-ի գիրքը սպառած էր ու կը խնդրէին համաձայն էի վերահրատարակելու: Պատասխանեցի, որ գրեթէ 20 տարի յետոյ նոյնութեամբ լոյս ընծայելը անիմաստ էր, բայց աւելցուցի, որ ուրիշ առաջարկ մը ունէի. արդեօք Կիլիկեան Հայաստանի վերաբերեալ ընթացքի մէջ գործս իրենց կը հետաքրքրէ՞ր: Ժամադրուեցանք, խօսակցեցանք ու համաձայնեցանք: Առաջարկած վերնագիրս «L'Armenie du Levant» էր, որովհետեւ ֆրանսերէն լեզուով «Levant» բառը Միջերկրական ծովու արեւելեան ափը կը նշանակէ, Տարոսէն մինչեւ Նեղոս գետը, ներառնելով Կիլիկիան, Սուրիան, Լիբանանը, Պաղեստինը ու Եգիպտոսի մէկ մասը: Սակայն քանի գործը կառաջանար, քանի կը նկատէի որ Կիլիկեան հայոց թագաւորութիւնը մեկուսացնելը բոլորովին արուեստական է, Մեծ Հայքին հետ ու տարբեր գաղութներուն հետ անոր կապերը մշտական եղեր են, այնպէս որ կամաց-կամաց նիւթը փոխեցի դէպի «Հայոց աշխարհը 11-րդ դարէն մինչեւ 14-րդը». վերնագիրը պահեցի, որովհետեւ հայոց իշխանութիւնները՝ թագաւոր ու կաթողիկոս «Levant» տարածքին մէջ էին:

Բարեբախտաբար «Les Belles Lettres»-ը այս ընդլայնման համաձայնեցաւ:



Հարցում.- Այժմ ընթերցողի սեղանին է Փարիզի «Les Belles lettres» հրատարակչության հրատարակած «L'Armenie du Levant» աշխատությունը 1200 տպաքանակով, ուր Կիլիկիայից բացի ներառում է ՄԵՐ ՀԱՅՔԸ, այսինքն XI-XIV դարերի ողջ Հայաշխարհը:

Ըստ Ձեր գիտական նոր աշխատության, հայոց վերջին թագաւորութեան անհետացումից յետոյ (1045թ.) զարմանալիօրէն Հայաստանը պիտի ապրէր իր պատմութեան ամենից փայլուն ժամանակաշրջանը, որի մասին պատմութիւնը ոչինչ չգիտի, եւ յանկարծ XIII դարի կէսերին Հայաստանը ամենից հզօր քրիստոնէայ պետութիւնն էր Մերձաւոր Արեւելքի մէջ: Ճիշդ ենք նկատել:

Պատասխան.- Կատարելապէս ճիշդ է: Այս երեւոյթը հրաշքի պէս բան մըն է, որուն նմանը ուրիշ ոչ մէկ ազգի պատմութեան մէջ գոյութիւն ունի: Երեւակայեցէք, ժողովուրդ մը իր պետութիւնը կը կորսնցնէ, «պետական արտագաղթ» մը կը կազմակերպէ ու իր հայերնիքէն մօտ 1000 քմ անդին, լրիւ տարբեր աշխարհագրական միջավայրի մը մէջ նոր թագաւորութիւն մը կը ստեղծէ, որ շուտով կը դառնայ քրիստոնէայ Մերձ. Արեւելքի ամենահզօր պետութիւնը:

Հարցում.- Հայերը լատինական պետութիւնների հետ յարաբերութիւններում օգտագործել են նաեւ խնամիական՝ ամուսնական կապերը:

Պատասխան.- Հետաքրքրական են անշուշտ Ձապէլ թագուհու ժամանակաշրջանը ու նաեւ Հեթումեանների մասին նոր յայտնութիւնները:

- Նման յաջողութիւն մը իրագործելու համար նուրբ դիւանագիտութիւն անհրաժեշտ էր, ու հայ ժողովուրդը բախտը ունեցաւ ճկուն ու խելօք իշխողներ ունենալու, Ռուբինեան ու Հեթումեան: Այս իշխաններն ու թագաւորները երկու ներխուժումներու դիմաց գտնուեցան. արեւմուտքէն Խաչակիրները 12-րդ դարուն ու արեւելքէն Մոնղոլները 13-րդ դարուն: Կրնային ոչնչացուիլ. ընդհակառակը՝ յաջողեցան այդ երկու դէպքերը հայոց շահին օգտագործել:

Այդ քաղաքականութեան փայլուն օրինակ մը «ամուսնական դիւանագիտութիւնն» է, քանի որ այդ ամուսնական կապերը քաղաքական դաշնակցութիւններ կը ցոլացնէին: Իբրեւ օրինակ նշենք, որ 12-րդ դարուն ընթացքին Ռուբինեան ուր իշխաններ տիրեցին, որոնց բոլորը, բացի մէկէն, լատին կամ յոյն իշխանուհիներ առին: Իսկ Լեւոն Ա Մեծագործը հազիւ թագադրուած՝ Կիպրոսի Լուսինեան թագաւորին աղջկան հետ վերամուսնացաւ եւ այս գոյգին դուստրը՝ Ձապէլ թագուհին դարձաւ եւ առիթ տուաւ, որ Հեթումեանները գահի վրայ բարձրանան:

Հարցում.- Հսկայածաւալ այդ աշխատութիւնը աչքի է ընկնում հրատարակչական արուեստի բացառիկութեամբ: Բացառիկ են մասնագիտական 74 պատմական քարտեզները, 840 տոհմաճառը, 230 գունաւոր լուսանկարները, մանրանկարների հիանալի վերարտադրութիւնը. հիասքանչ են միջնադարեան արուեստի յուշարձանների, դրամների, կնիքների, վիմագրերի, վաւերագրերի տպագրութիւնները: Յատկապէս աչքի են ընկնում գունաւոր նկարների որակն ու ընտրութիւնը:



Թուով է՝ գործ ունենք հայ պատմագրութեան մի շրջանի հանրագիտարանի հետ: Ուրեմն հարց է ծագում. ովքե՞ր են Ձեր բարեգործներն ու բարեկամները, ովքե՞ր են աշխատակցել Ձեզ:

Պատասխան.- Առաջին հերթին կուգեմ շեշտել որ «Les Belles lettres»-ը սքանչելի գործ տարաւ, թէ նիւթական ձեւով, թէ տպագրիչի ընտրութեան: Սակայն ամենամեծ երախտագիտութիւնս իմ 6 աշխատակիցներուս կը պարտիմ, որոնք կը կազմէին «ուրախ ստրուկներ»-ու խումբ մը: Առաջինը Ազնէս Ուզունեանն է, գրաբարի ու միջին հայերէնի հմուտ մասնագիտուի, որուն անընդհատ կը դիմէի իմ լեզուաբանական թուլութեան պատճառով: Քարտիսագիտութեան տաղանդաւոր վարպետը Eric van Lauwe-ն էր՝ Աբրահամ Ճինեան բարերարին թոռը, որուն հետ 15 տարիէ ի վեր կը համագործակցիմ: «Համակարգչային սերունդ»-էն դուրս ըլլալով, տեխնիկական օգնութեան կարիք ունէի. երիտասարդ Յուշիկ Ունճույեանը բոլոր խնդիրները լուծեց: Ազգաբանական ծառերը իրագործելու եւ անուանացանկը կազմելու օգնութիւն տրամադրելու համար երկու ոչ հայ ընկերներ մեծագոյն նպաստ բերին: Վերջապէս, բախտս բերաւ բացառիկ լուսանկարչի մը կերպարով՝ Հրայր Բազէ Խաչերեանը հանճարեղ արուեստագէտ ըլլալէն զատ անսահման առատաձեռն է ու միշտ պատրաստ է իր անթիւ գանձերը տրամադրելու:

Զմոռնամ իմ երեւանցի սերտ ընկերներուս բերած օգնութիւնը, ինչպէս լուսանկարիչ Զաւէն Սարգսեանը, Լեւոն Տէր-Պետրոսեանը, Գեորգ Տէր-Վարդանեանը, Անելկա Գրիգորեանը, Շահէն Խաչատրեանը, Ազատ Բոգոյեանը, Ալեքսան Յակոբեանը, Մերուժան Կարապետեանը եւ ուրիշներ:

- Եվ վերջապէս, համարո՞ւմ էք Կիլիկեան թագաւորութեան պատմական դարաշրջանն աւարտուած:

- Կիլիկեան թագաւորութիւնը չտեսնուած ժառանգութիւն մը թողուց բոլոր մարզերուն մէջ, ու կը ջղայնանամ, երբ մարդիկ, նոյնիսկ որոշ հայեր, այդ պետութիւնը կը համարեն «լուսանցքային», այն պատրուակին տակ, թէ պատմական Հայաստանի հողէն դուրս էր: Այդ պետութիւնը «Սփիւռք» մը չէր, «Փոքր Հայք» կամ «Նոր Հայք» չէր: Արքաները կանուանուէին «Թագաւոր Հայոց», երբեմն նոյնիսկ «Թագաւոր Ամենայն Հայոց» ու այդպէս ոգեկոչուած էին յիշատակարաններուն մէջ, մինչեւ անգամ Մեծ Հայքի մէջ ընդօրինակուած ձեռագրերուն մէջ:

ԱԶԳ- ՄՇԱԿՈՅԹ

Յօդուածներ

ՀԱՅ ԴՊՐՈՑԸ

ԳԻՏԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄԻՏՔԻ ՎՐԱՅ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Մեկնակէտ. Հայ Դպրոցը՝ հայ ժողովուրդի, եւ ուրեմն Հայ Սփիւռքի գոյութեան ու գոյատեւման խարիսխն է: Հայ Սփիւռքի հայեցի կենսունակութիւնը, անոր ընկերային, հասարակական, քաղաքական, մշակութային եւ եկեղեցական կառոյցներուն ամրութիւնն ու տեւականութեան երաշխիքը պայմանաւորուած է Հայ Դպրոցին տեսլականի, ծրագրի, գիտական հիմքի, մարդուծի, նիւթական կարողականութեան եւ ծառայութեան դաշտի-դաշտերու սահմանագիծերու ամրապինդ առկայութեամբ: Այս առումով, ժամանակ է վերատեսութեան ենթարկելու Հայ Դպրոցի հանդէպ որդեգրուած կեցուածքը, գնահատանքի արժեչափերը, բայց մանաւանդ միանգամընդմիշտ որոշելու թէ ի՞նչ է հայ մարդուն ակնկալութիւնը Հայ Դպրոցէն:



Ժամանակ է սթափելու: Հարցադրումներու, վերաքննութիւններու եւ վերարժեւորումներու անյետաձգելի ժամանակաշրջան է: Հայ Դպրոցը չի կրնար հեռու մնալ այս բոլորէն: Դեռ պիտի ըսել որ ան Սփիւռքի հայկական կառոյցներուն մէջ առաջինը պիտի ըլլայ ենթարկուելու այս բոլորին: Եթէ կը հաւատանք Հայ Դպրոցի Մեսրոպեան Առաքելութեան, այլ ընտրանք գոյութիւն չունի:

Այսօր, Հայ Դպրոցը Հայ Սփիւռքին մեծագոյն յաղթանակն է, բայց եւ....մեծագոյն տագնապը:

Վերջին տասնամեակներուն, Հայ Դպրոցը տեղքայլ կ'արձանագրէ՝ լճացումի բոլոր երեւոյթները դրսեւորելով: Բազմաթիւ են պատճառները, բայց հարկ է անդրադառնալ

էականին: Առանց երկմտելու ըսենք՝ որ շուկայական աշխարհի արժեչափերու ճնշումով, մտքերուն մէջ Հայ Դպրոցը սկսաւ հանրախանութի (սիւփըրմարքէթ) ծառայութեան պաշտօնին կոչուիլ: Ծնողք, իրենց զաւակները պիտի տանին դպրոց, սակարկեն, վճարեն կրթաթոշակը, ու....սպասեն որ տարեվերջին անոնք տուն վերադառնան պրեվէի կամ պաքալորիայի վկայականով: Ու այս պահանջ-սակարկութեան դիմաց, դպրոցներուն առաւելագոյն ճիգը՝ գովազդել իրենց «վաճառած» ապրանքին որակը, որ պայմանաւորուած է դպրոցին՝ պրեվէի ու պաքալորիայի քննութիւններուն յաջողած իրենց աշակերտներուն թիւով: Այլապէս ի՞նչ կ'ըսեն տարեվերջին՝ օրաթերթերուն մէջ կատարուած մրցակցային ծանուցում-գովազդները...,թէ՝ որ դպրոցը յաղթանակի ինչ մրցանիշ հաստատած է:



Տարրական, բայց մոռցուած ճշմարտութիւն է, թէ՛ դպրոցէն ներս տարուած կրթական-ուսումնական-դաստիարակչական աշխատանքի արդիւնքներէն միայն մէկն է պրեվէի կամ պաքալորիայի վկայականը, եւ պրեվէն կամ պաքալորիան առանձին ոչինչ կ'ըսէ մարդու կրթութեան ու դաստիարակութեան մասին: Եթէ միայն պրեվէ ու պաքալորիա, ապա ո՞ր է մարդը: Նախ՝ մարդը, յետոյ հայը, քրիստոնեան ու ազգային ծառայութեան կողմնորոշումը, որուն որակն ու տարողականութիւնը պայմանաւորուած են առաջին երեքով:

Ու եթէ Հայ Դպրոցի հանդէպ ամէն օր քիչ մը աւելի արմատաւորուող շուկայական այս մտայնութենէն դուրս չգան ծնողք, աշակերտ ու դպրոց, կը նշանակէ Հայ Դպրոցը կը կորսնցնէ իր Մեսրոպեան Առաքելութիւնը, որ պայմանաւորուած չէ միայն հայերէնի ու հայագիտական առարկաներու դասաւանդումով, այլ՝ դպրոցի հանդէպ գիտական-քննադատական նոր հասկացողութեան տարազումով: Ժամանակ է անդրադառնալու, հասկնալու եւ ընդունելու որ դպրոցը գիտական օճախ է, գիտական հիմնարկ եւ հաստատութիւն, որ իր զարգացման դարաւոր պատմութիւնը ենթահող ունենալով, իր նորէնոր հասակ առնելուն հետ, նաեւ պիտի նորանայ, գիտակցելով այն տիեզերական ճշմարտութեան որ դպրոցը շարժակն է քաղաքակրթութեան, ու եթէ այդ շարժակը ժամանակի պահանջներուն չընդառաջէ գիտական հիմքերու վրայ նորանալով, կը ձախողի իր առաքելութեան մէջ, ինչ որ կը նշանակէ՝ հաւաքականութիւնը, որուն ծառայութեան կանչուած է ան, կը դատապարտուի լճացումի:

Ու մեկնելով այս ճշմարտութենէն, ո՞ր է Սփիւռքահայ Դպրոցը այսօր:

Հարցում մը: Ո՞վ կը յիշէ թէ վերջին տասնամեակներուն, հայ մամուլի մէջ ե՞րբ, ո՞ր եւ քանի՞ մանկավարժական յօդուածի հանդիպեր է, ու կարդացեր: Խօսքը չի վերաբերիր Հայ Դպրոցի աշակերտներու թուաքանակի շուրջ արծարծուած մտահոգութիւններուն, պատ քանդելուն կամ բարձրացնելուն, դրամ կայ ու չկայի եղերեղութեան: Հարցումը, Հայ Դպրոցի՝ աշակերտ, ծնողք, ուսուցիչ, տնօրէն, հոգաբարձութիւն աշխատանքի ու համագործակցութեան հետազօտութիւններու, ու կրթական օճախին մանկավարժութեան, գիտական որակի ու մակարդակի բարեշրջման ընթացքը խթանող յօդուածներու մասին է: Չենք հարցնէր թէ ո՞ր են Հայ Դպրոցի տնօրէններն ու հայ ուսուցիչները, եթէ երբեք անոնք տէր են մանկավարժական մասնագիտութեան: Իրենց դպրոցներուն մանկապարտէզի հանդէսներուն ծաւալուն, նկարազարդ տեղեկագիրները օրաթերթերու մէջ անպայման հրատարակութիւնը հետապնդող մարդիկ ինչո՞ւ օր մը չեն խօսիր նոյն այդ մանկապարտէզներուն դիմագրաւած մանկավարժական հարցերու մասին: Բայց միա՞յն մանկապարտէզներուն:

Հայ Դպրոցի՝ այսօր տիրող իրականութեան դիմաց, եւ անոր՝ վաղը սպառնացող անխուսափելիին մասին մտածելով, անյետաձգելի ժամանակ է բարեկարգութեան յեղաշրջող քայլերը առնելու, որոնց իրագործումով միայն կարելի կ'ըլլայ Հայ Դպրոցը դուրս բերել իր նահանջի անհեռանկար զանդեմութեն:

Կրկնենք: Պրեվէն ու պաքալորիան Հայ Դպրոցի յաղթանակի միակ ու բացարձակ մրցանակը չէ: Դեռ առանց խօսելու պետական այդ ծրագրին ու քննութիւններուն



մանկավարժական իրա՛ւ արժէքին, տարողութեան ու արժանահաւատութեան մասին: Պարտադրուած դրուածք մըն է, զոր պիտի կրել, բայց այդ երբեք չի նշանակեր անոր ստրկանալ՝ մոռացութեան մատնելով Հայ Դպրոցի կրթութեան, դաստիարակութեան, պատասխանատու ու մտածող հայ մարդ ու քաղաքացի պատրաստելու առաքելութիւնը:

Հիմա փրկութեան լաստեր են պետք Հայ Դպրոցը դուրս բերելու իր նահանջի զառիթափէն: Հոս, առաջնահերթ մտահոգութիւն է կեդրոնանալ՝ Հայ Դպրոցը գիտական օճախի, հիմնարկի ու հաստատութեան վերածելու անհրաժեշտութեան: Եւ այս նպատակը իրագործելու ճանապարհին վրայ առաջին քայլը՝ մանկավարժական մտքի զարթոնքն է, որուն շօշափելի արտայայտութիւնը պիտի ըլլայ մանկավարժական գիտական հանդէսի մը հրատարակութիւնը: Հանդէսը բաց հրաւեր պիտի ըլլայ մանկավարժութիւնը իրենց համալսարանական մասնագիտութիւն ըրած մարդոց, որոնք գոյ են, կ'ապրին, ու կը գործեն հոս, մեր անմիջական շրջանակին մէջ, ինչպէս եւ սահմաններէն անդին:

Եթէ Սփիւքի մէջ Հայ Դպրոցը բազմատեսակ հարցեր կը դիմագրաւէ (ոչ որ կրնայ ուրանալ այս իրողութիւնը), ապա ուրեմն կը նշանակէ որ այդ հարցերը սերտելու, լուսաբանելու, անոնց լուծումներ գտնելու եւ առաջարկելու հեղինակաւոր բեմ մը անհրաժեշտ է: Առաջադրուած մանկավարժական գիտական հանդէսը պիտի ըլլայ այդ բեմը:

Հայ Դպրոցը հեռանկարային առողջ ճանապարհի վրայ դնելու համար պիտի սկսիլ վիճակագրական տուեալներու մէկտեղումով, դասաւորումով, ուսումնասիրելով, ու ձեռք բերուած եզրակացութիւնները հրապարակելով, որպէսզի անգամի մը համար՝ գիտական տուեալներու ապաւինած, կարելի ըլլայ լուծումներու մասին մտածել ու բարեշրջումի քայլերը առնել:

Բայց ոչ միայն այդ. Հանդէսի էական առաքելութիւններէն մէկը պիտի ըլլայ մանկավարժական միջազգային հրապարակներու վրայ ճամբայ հարթող գիտական նոր միտքն ու մտածողութիւնը, վարկածներն ու տեսութիւնները ներկայացնել ու ծանօթացնել Հայ Դպրոցը իրենց ձեռքերուն մէջ պահող ասպարէզի մարդոց եւ ուսումնական-դաստիարակչական կեանքին հասարակական ճամբով ծառայողներուն:

Հանդէսը պիտի ծառայէ հաստատելու որ Սփիւքահայ Դպրոցը իր մտասէւեռումով շարունակութիւնն է 1600-ամեայ Հայ Դպրոցին, ու ժառանգորդը անոր մանկավարժական միտք ու մտածողութեան, նուաճումներուն եւ առաքելութեան:

Հանդէսը ե՛ւ պիտի ըլլայ Սփիւքահայ Դպրոցի պատմութեան արձանագրողը, սկսած՝ Սուրիա-Լիբանանէն: Դպրոց՝ իր համապարփակ իմաստով:

Եւ հոս, խնդրանք մը՝ պահանջելու պէս: Մանկավարժութիւնը իրենց համալսարանական մասնագիտութիւնը ըրած հայորդիները հրաւիրուած են հրապարակաւ եւ հայ մամուլի էջերէն իրենց մասնագիտութիւնը ի սպաս դնելու Հայ Դպրոցի բարեշրջման: Եթէ կ'ակնկալենք որ զիր ու գրականութեան մասին գրողն ու գրականագէտը խօսի, գեղանկարի մասին՝ գեղագէտ արուեստաբանը, պատմութեան մասին՝ պատմաբանը, ապա պարտադիր



պահանջ է որ դպրոցի մասին՝ մանկավարժութիւնը իրեն մասնագիտական ասպարէզ ընտրած մանկավարժը խօսի:

Ու պիտի սպասել որ տասնամեակ մը ու աւելի ուսուցչական ասպարէզի կամ դպրոցի վարչական գործի մէջ եղող մարդիկ, տարիներու իրենց փորձն ու փորձառութիւնը քննութեան տակ առնեն, պարզեն քննարկելի հարցերը, տեսութիւններ առաջադրեն ու լուծումներու մասին խորհրդածեն:

Կրկնենք. Հայ Դպրոցը խարխիսն է հայ ժողովուրդի գոյատեւման պայքարին: Ահա թէ ինչու ժամանակ է որ վերջ տրուին դպրոցին շուրջ արուեստականօրէն բարդուած բոլոր զգացական ու եսակեդրոն նեղ ու լայն հաշիւներուն, դպրոցը հանրախանութի հետ շփոթելու շուկայական ախտին, մանկավարժական կեանքէն ներս «դպրոց իմացութիւն»ի անտեղեակ մարդոց՝ Հայ Դպրոցի ճակատագիրը որոշելու իրաւունքին, ու ամէն ինչ սկսիլ Այր-էն՝ գիտական ու քննադատական մտածողութեամբ ծրագրելու, որոշելու ու գործադրելու:

Հայ Դպրոցը խարխիսն է հայ ժողովուրդի գոյատեւման պայքարին: Կը հաւատա՞նք:

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

29 Յուլիսի, 2013, Պէյրութ

Յ.Գ. Մանկավարժական գիտական հանդէսի մը հրատարակութեան անհրաժեշտութիւնը տարիներ շարունակ եղած է մեր մտահոգութեան առարկաներէն մէկը: Այդ առումով, ատենին, մեր դատողութեամբ դիմեցինք առ որ անկ է, ու մինչեւ իսկ գրաւոր ծրագիր մը ներկայացուցինք՝ հանդէսի բովանդակութեան առնչուած: Դրապէս դիմաւորուեցաւ առաջարկը, սակայն, դժբախտաբար մնաց անպատասխանի:

Մենք տակաւին կը կարելորենք ծրագիրը, ու կը յուսանք հնարաւոր կ'ըլլայ զայն իրականացնել:

Ե.Հ.Ք.


Մենք Ենք՝ Մեր Ցաւերը Շարքէն

Պարոյր Աղապաշեան

Հայոց լեզուի գոյավիճակը, իր ներկայի եւ ապագայի ճակատագիրով, տակաւ կը դառնայ տագնապեցուցիչ, իր երկճիւղութեամբ, անմիատարրութեամբ,

անմիասնականութեամբ, աններդաշնակութեամբ եւ մանաւանդ՝ սխալախօսութեամբ ու սխալագործութեամբ:

Գաղտնիք չէ, Հայոց լեզուն՝ իր արեւմտահայ թէ արեւելահայ տարբերակներով, սրընթացօրէն կը նահանջէ, կ'աղաւաղուի, կը գունաթափուի, բոլոր մարզերէն ներս եւ բոլոր մակարդակներու վրայ:



Ոսկեդնիկին նկատմամբ անգրագիտութիւնը համատարած է, խաթարուած է անոր գրաւոր թէ բանաւոր գործածութիւնը, խորթացած է ան իր ծննդոցէն եւ էութենէն:

Անտարբերութիւն կայ Հայոց լեզուին նկատմամբ, հակառակ զայն “փրկելու” ճիգերուն, որոնք, սակայն, հատու եւ ազդու չեն, բարեկարգելի կամ դարմանելի առողջ հունաւորումի մէջ դնելու համար զայն:

Խօսակցական հայերէնը դարձած է ահաւոր խառնարան մը, դպրոցականէն մինչեւ համալսարանականի լեզուին մէջ, ընտանիքէն մինչեւ շրջապատը, կազմակերպութիւններէն մինչեւ միջավայրը, նոյնիսկ խելահասներէն մինչեւ մտաւորականութիւնը:

Գրաւոր հայերէնը ուրիշ ողբերգութիւն մըն է, հրատարակութիւններէն մինչեւ խմբագիրը, ստեղծագործական գրականութենէն մինչեւ հեղինակը, հետազօտական ուսումնասիրութենէն մինչեւ գիտնականը:

Ո՛ր անկիւնէն ալ նայինք կամ խորաչափենք այս զարտուղութիւնները, ներելի կամ ընդունելի ի՞նչ կրնանք գտնել հոն, այնքան ատեն որ սրբապղծուողը ու խոցոտուողը Հայու ինքնութիւնը բնորոշող ՀԱՅԵՐԷՆՆ է:

Այս լեզուաքանդ կացութեան դիմաց, կա՞ն յուսադրող նախաձեռնութիւններ ու քայլեր, որոնք կրնան Հայերէնի պահպանման եւ անաղարտման նպաստել, զայն դուրս բերելով իր մահացու ոլորապտոյտէն:

Դժբախտաբար, լաւատես ըլլալու այնքան ալ լուրջ պատճառներ չկան, ի լուր թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի մէջ Հայերէնի գիտակութեան եւ իմացութեան շարունակուող սայթաքումին ու հաշմումին:

Ճիշդ է, պետականացած Հայաստանի պաշտօնական լեզուն Հայերէնն է, որ ենթադրուած է հանրապետութեան տարածքին դառնալու տիրող արտայայտամիջոցը, իր ճշգրիտ, անսխալ ու կատարեալ լեզուաբովանդակութեամբ:

Սակայն, իրօ՞ք այդպէս է, երբ պետական հաստատութիւններու, քաղաքային ցուցատախտակներու, ժողովրդային խաւերու, մտաւորական շրջանակներու մօտ, Հայերէնը կը փոխարինուի օտար լեզուներով, անգրագէտ տառադարձութեամբ, բարբառային խառնիճադանճութեամբ կամ վիրաւոր լեզուախօսակցութիւններով:

Նոյնը չէ՞ Սփիւռքի պարագային, ուր իւրաքանչիւր համայնք կամ գաղութ, կազմակերպութիւն կամ շրջանակ, կը գործածէ իր “հայերէն” ը, հանդէս գալով իր “հայերէն” ով, ստեղծելով ամբողջական քառս մը:



Ասոնց ամենէն “պերճախօս” դաշտերը կը նկատուին, դպրոցական ու թերթային հայերէնները, որոնք ամէն ինչ կրնան ըլլալ, բացի հայերէնէ, իրենց այլանդակութեամբ ու անճոռնիութեամբ:

Ասոնք չափազանցութիւններ չեն, այլ՝ տխուր ճշմարտութիւններ, որովհետեւ անաչառ եւ անկեղծ աչքերը կը հաստատեն անոնց իրական պատկերը, մանաւանդ երբ “կ’ապրինք” ու “կ’ըմբռնենք” զանոնք, ժամանակի ընթացքին զգալով անոնց աւերիչ դառնալու հետեւանքներն ու հեռանկարները:

Ինչո՞ւ այս արագ մատնանշումները:

Վերջերս, Հայաստանի Սփիւռքի նախարարութիւնը կազմակերպած էր “Հայերէնն իմ սրտում է” համահայկական երիտասարդական համաժողով մը, որուն ներկայ գտնուած է նաեւ վարչապետ Տիգրան Սարգսեան, հանդէս գալով ողջոյնի խօսքով:

Անշուշտ, խիստ գովելի նախաձեռնութիւն մըն է ասիկա, սակայն, հետաքրքրական է, Սփիւռքը ինչպէ՞ս մասնակցեցաւ եւ որո՞նք էին անոնք, իսկ, ամենէն կարելորդ, այդ համաժողովէն բան մը ծնա՞ւ, թե՞ “կայացաւ” ի սահմաններուն մէջ մնաց:

Առ այդ, Պրն. վարչապետը կ’ըսէ. “Ինքնութեան պահպանութեան առանցքի կարելորագոյն երաշխիքը մայրենի լեզուն է”:

Բացարձակ ճշմարտութիւն մը, արդարեւ, բայց, Պրն. վարչապետը որպէս կարգախօս՝ կը յայտարարէ այդ միտքը, երբ այդ “երաշխիք” նկատուող մայրենի լեզուն, ինք սկսած է վտանգուիլ:

Երեւանի Պետական Համալսարանի մուտքի քննութիւններուն, վկայութեամբը հայրենական դասախօսական-մասնագէտներու, հայերէնագիտութեան խիստ մտահոգիչ յետադիմութիւն կայ, տակաւին պիտի չխօսինք այլ բնագաւառներէ ներս արձանագրուող Հայերէն լեզուի նահանջին մասին:

Սարգիսեան ինչպէ՞ս կը բացատրէ ու կ’արդարացնէ այդ “երաշխիք” ին հօգրութիւնը, երբ հայաստանցիք կը լքեն հայրենիքը, որովհետեւ դժգոհ են վարչակարգը շահագործողներէն եւ վստահութիւն չունին անոր նկատմամբ:

Ուրիշ տեղ մը, Սարգսեան կը յաւելու. “Մեր լեզուն է, որ մեզ միաւորելու է եւ դարձնելու մէկ միասնական բոլունք”:

Հոյակա՛պ, պիտի գոռային շատեր:

Մեր լեզուն ինչպէ՞ս կրնայ միաւորուիլ, երբ՝

ա. Անիկա համապատասխան գործնական գուրգուրանքի չ’արժանանար, ըլլայ Հայաստանի, ըլլայ Սփիւռքի մէջ, ուր եղած փորձերը այնքան թոյլ եւ անշօշափելի են, որքան բարիկամեցողութեան ու լոգունգային... առաձգական տրամադրութիւնները:



բ. Սփիւռքի իւրաքանչիւր գաղութի մէջ, Հայերէն լեզուն, համայնքայինի, կուսակցականի, քաղաքականի չափ, “բաժանարար” միաւոր մըն է, վկայ՝ մեր դասագիրքերը, մամուլը, մտաւորականները, շարունակե՞նք...:

գ. Արեւելահայ լեզուն կը մնայ Մեսրոպեանին “դաւաճանող” ուղղագրութիւն մը, նախապատուելով “Աբեղեանական”ը, ոչ միայն դրական քայլ մը չառնելով այդ ուղղութեամբ, այլեւ՝ անտեսելով միաւորումի բոլոր կոչերը, որոնք կը հնչեն Հայաստանի ու Սփիւռքի կարգ մը նախանձախնդիր կողմերէն:

դ. Արեւմտահայ լեզուին պահպանումը, իր գործածելիութեամբ ու կենդանութեամբ, ինչպէ՞ս իրականութիւն կրնայ դառնալ, այնքան ատեն որ՝ որեւէ գերագոյն մարմին ի վիճակի պիտի չըլլայ ՄԷԿ ամպիոփանիի տակ պահել զայն, հեռու համայնքային, կուսակցական, գաղութային ու հատուածական նկրտումներէ:

Պրն. Սարգիսեան նաեւ կը յիշեցնէ երիտասարդութեան. “Մեր ուժը մեր միասնութեան մէջ է” եւ համոզմունք կը յայտնէ, որ անոնք իւրացնելով մայրենի լեզուի իմացութիւնը՝ կը կարողանան այս կարեւոր գաղափարը հաղորդել ապագայ սերունդներուն:

Այս “միասնութեան” կոչը, Սփիւռքը մինչեւ հիմա չէ կրցած իրականացնել, ոչ ալ պիտի կրնայ, իսկ ներկայիս ատիկա կը հնչէ Հայաստանէն, Բայց, որքան օգտակար ու շինիչ պիտի ըլլար, որ “միասնութիւն” փնտռողն ու շեփորողը, առաջին անգամ հայրենիքի մէջ յաջողցնէր զայն, ուր կուտակուած ու կուտակուելիք ինչպիսի՛ անկատար գործօններ կան եւ ինչպիսի՛ աւերներու դուռ կը բանան անոնք:

Բաց աստի, մեր երիտասարդութիւնը, ամենուրեք, Պրն. վարչապետ, ինչպէ՞ս եւ ո՞ր պիտի խորացնէ մայրենի լեզուն, յետոյ ալ այդ գաղափարը փոխանցէ յետագայ սերունդներուն:

Միթէ աչք եւ ունկ չկա՞յ, պետական այրեր եւ ազգային գործիչներ:

Հայերէնը քառասմբակ կը նահանջէ, Հայաստանէն մինչեւ Սփիւռք:

“Միաւորում”, կ’ըսուի:

Ի՞նչը, ո՞րը, հարց չտա՞նք:

Եթէ իսկապէս լեզուն է միաւորողը, եւ այդպէ՛ս է, ապա, որպէս առաջին քայլ, սկսելու է ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՅՆԱՑՆԵԼՈՒ,

ՀԱՐԱԶԱՏԱՑՆԵԼՈՒ քաղաքականութենէն:

Կարգախօսը ասիկա պիտի ըլլայ, Պրն. վարչապետ, Բայց ոչ... համաժողովները:



Հայ Ժողովուրդին Թուական Աճը Հիմնական Անհրաժեշտութիւն Մը

ՍԱՐԳԻՍ Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

Հայրենիքի թէ՛ Սփիւռքի մէջ, երբ պետականութիւն, պատմաբաններ, կազմակերպութիւններ, ղեկավարներ, պատասխանատուներ, անհատ ազգայիններ կամ պարզ հայեր պատրաստուելու վրայ են լաւագոյն կազմակերպութեամբ ոգեկոչելու Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակը, կը տարուինք կատարելու հետեւեալ հիմնական հարցադրումը. նպատակային, շօշափելի արդիւնաւորութիւն ունենալիք ո՞ր մէկ ազդակը ամենէն աւելի կշիռ պիտի ունենայ մեր գոյատեւումի պայքարին մէջ:

Օսմանեան Կայսրութեան մէջ, 19-րդ դարու վերջաւորութեան ու 20-րդ դարու սկիզբը, հայերու հանդէպ գործադրուած կոտորածներէն, բռնագաղթներէն ու մեծ ցեղասպանութենէն ճողոպրած մեր հայրենակիցները, վերապրումի գերագոյն զոհողութիւններով, յաջողեցան վերականգնել իրենց ընտանեկան, ընկերային, կրթական ու մշակութային կեանքը այն գաղութներուն մէջ, ուր հանգրուանած էին: Չենք խօսիր աշխարհի փոքր ու մեծ այն երկիրներուն կամ քաղաքներուն մասին, ուր հաստատուած անհատ հայեր կամ նոյնիսկ փոքրաթիւ հայ խմբաւորումներ, հետզհետէ կորսնցուցած են իրենց պատկանելիութիւնը, եւ առյաւէտ կորած հայութեան համար: Խօսքը կը վերաբերի հայահոծ կամ յարաբերաբար ստուար գաղութներու մասին, ինչպէս՝ Սուրիա, Լիբանան, Ֆրանսա, Անգլիա, Միացեալ Նահանգներ, Քանադա, Արժանթին, Պրագիլ, Ուրուկուէյ, Եգիպտոս, Իտալիա, Ռուսաստան, եւլն.: Ասոնցմէ շատեր, ոչ միայն բաժին կը վերցնեն տեղական, հասարակական կեանքին ներս, այլ յառաջ կը տանին ազգաշէն ծրագիրներ: Յիշատակենք, այս առիթով, հայկական դատի ուղղութեամբ ձեռք ձգուած պատուաբեր որոշումնագրեր, մինչեւ իսկ՝ Ցեղասպանութեան պետական, պաշտօնական ճանաչում 1965-էն սկսեալ աւելի քան երկուսասնեակ մը երկիրներու կողմէ: Գնահատելի եւ յոյժ գովելի են այս բոլորը:



98 տարիներ անցած են Հայոց Ցեղասպանութենէն, եւ սակայն դանդաղ է այս ուղղութեամբ թափուած շօշափելի, արմատական արդիւնաւորումը մեր պահանջատիրութեան ուղղութեամբ: Ահաբեկիչ պետութիւնը՝ Թուրքիան, այսօր հզոր պետութիւն դարձած է, ու Միջին Արեւելեան շրջանին մէջ՝ կարելոր դերակատար: Շնորհիւ իր աշխարհագրական դիրքին, յենուելով զարգացող իր տնտեսութեան ու զօրաւոր բանակին վրայ, անիկա կ'ուրանայ իր դահիճի դերը՝

դիւանագիտական լայնածաւալ նախաձեռնութիւններով, ինչպէս նաեւ՝ տեղական ու միջազգային հակազդեցութիւններով:



Շուրջ 10 միլիոն հաշուող փոքրաթիւ հայութեան կը մնայ, իր վերոյիշեալ աշխատանքներուն մէջ, այսուհետեւ շեշտը դնել հայ ժողովուրդի թուաքանակի բարձրացման վրայ: Այս նպատակակէտին արդիւնաւորումը մասնաւոր իմաստ պիտի ունենայ յատկապէս Հայաստանի մէջ: Հայութիւնը իր ամբողջութեան մէջ, լրջօրէն մտահոգուելու է իր հայրենիքի բնակչութեան սակաւութեան թիւով: Հայրենի իշխանութիւնները, ի մասնաւորի, ծրագրեալ եւ առաջնային իրենց նպատակակէտը դարձնելու են հայ ժողովուրդի թուային բարձրացումը: Բնականաբար, նախապէս ստեղծուելու է բարենպաստ ենթահող ու միջավայր, նման արդիւնաւորման հասնելու համար: Տնտեսական ծաղկում յառաջ բերելու համար, գործ հայթայթուելու է զանգուածներուն: Առարկութիւնները կամ ինքնարդարացումի պատճառաբանութիւնները ընդունելի չեն: Հայաստանի մէջ գոյատեւող ժխտական բոլոր երեւոյթները անձնագերծուելու են: Փորը անօթի զինուորը ո՛չ ինքնապաշտպանութեան եւ ոչ ալ յարձակումի ատակ է. ի սկզբանէ վիժած է անոր զինուորական դերակատարումը: Կտրուկ կերպով, միանգամընդմիջտ առաջքը առնուելու է զանգուածային արտագաղթին:

Միաժամանակ, Արցախի զօրացումը եւ ինքնապաշտպանութիւնը անյետաձգելի թիւ մէկ օրակարգը դառնալու է հայրենի պետութեան: Անոր անկախութիւնը ձեռք ձգուեցաւ շուրջ 22,000 մարտիկներու արեան յեղումով, ու մենք վերատիրացանք այդ շրջանի պատմական մեր հողերուն: Օգտուելու է ցարդ մեզի ընծայուած անփոխարինելի թիկունքէն, միաժամանակ վստահելով միայն տեղական հայորդիներով կազմուած քաջարի բանակին: Լեռնային Ղարաբաղը, Հայաստանի մէջքին, կը զօրացնէ հայրենի ընդլայնուած ցամաքամասին դիմադրականութիւնը:

Հայոց Ցեղասպանութեան նախօրեակին, մեր պահանջատիրութեան կողքին, եւ իբրեւ անոր լրացուցիչ, երկու հիմնական եւ առաջնային նպատակակէտեր այսուհետեւ մեր առօրեայ օրակարգին մաս կազմելու են.-

1.- Բարձրացնել հայաբնակչութեան թուաքանակը հայրենիքի մէջ:

2.- Զօրացնել Արցախի պաշտպանութիւնը, տեղի չտալով միջազգային պարտադրութեանց:

Իրականացնելու համար վերոյիշեալ երկու նպատակակէտերը, ստեղծուելու են բարենպաստ, անհրաժեշտ պայմաններ ու տնտեսութեան բարելաւում՝ բարձր գործազրկութեան վերջ տալով: Արգելակել արտագաղթը Հայաստանէն:

Եկեք ազգովին լծուինք վերոյիշեալ առաջնային եւ անյետաձգելի նպատակներու իրականացման եւս:


Լոս Անճելըս

Կիրակոս Գույումճեանի Կեանքի

«Կայանները» Եւ Էութեան «Դիրքորոշումները

ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Արաբական ծոցի երկիրներու հայկական իրականութիւնը սկսած է դառնալ կազմակերպուած եւ մնայուն գաղութային կեանք: Գաղութը սկսած է ստանալ կազմակերպուածութեան պատկեր՝ եկեղեցի, դպրոց, մշակութային եւ հաւաքական կեանք:



Կիրակոս Գույումճեան աւելի քան քանի մը տասնամեակէ ի վեր կ'ապրի Քուէթի մէջ: Ան ծնած ու մեծցած է Հալէպ, ուր ստացած է ազգային-քրիստոնէական դաստիարակութիւն, կերտած է հայկական նկարագիր եւ տիրապետած՝ արաբերէնին: Ան այսօր Քուէթի մէջ ունի լաւ ասպարէզ, յաջող գործարար է, բայց նաեւ կազմակերպած է իր կեանքի ազգային-հասարակական եւ հրապարակագրական բնագաւառները: Ան կ'ապրի հայութիւնն ու հայկականութիւնը, բայց նաեւ կը հաւատայ արաբական իրականութեան բացուելու անհրաժեշտութեան: Այս նպատակով ալ կը ստեղծէ հայկական-արաբական բարեկամութիւն՝ միեւնոյն ատեն հայը,

անոր տագնապը, իրականութիւնները ներկայացնելով արաբին:

Ահա թէ ինչո՞ւ Կիրակոս Գույումճեան դարձած է ծանօթ անուն մը արաբական հրապարակագրութեան մէջ, ուր իր յօդուածները, բաց նամակները յաճախ երեւցած են արաբական մամուլին մէջ, ինչպէս՝ քուէթեան «Քապաս» եւ «Ուաթան», լիբանանեան «Նահար» թերթերուն մէջ: Թարգմանաբար նոյն, նաեւ տարբեր յօդուածներ հրատարակուած են նաեւ հայկական մամուլին մէջ՝ Լիբանան եւ այլուր:

Կիրակոս Գույումճեանի հրապարակագրութեան միտք բանիին ծանօթանալու համար պէտք է կարդալ արաբերէնով հրապարակուած հրապարակագրական-յօդուածներու հաւաքածոն հանդիսացող «Կայաններ եւ դիրքորոշումներ» գիրքը, հրատարակուած Քուէթ, 2012-ին:

Երբ կը սկսիս կարդալ գիրքը, կը սկսիս ապրիլ Կիրակոս Գույումճեանին հետ՝ իր տարբեր «կայանները»... Կայաններուն առաջինը Կիրակոս հայն է, անոր ազգային նկարագիրն ու անոր հպարտութիւնը: Այդ կայանին մէջէն կը տեսնես Կիրակոսին «պահանջատէր»-ի «դիրքորոշումները»: Գրած է Հայոց ցեղասպանութեան մասին՝ տարբեր ոգեկոչումներուն առիթով, բաց նամակներ յղած է նախագահներու եւ Եւրոպական միութեան, երախտագիտութիւն յայտնած է այն երկիրներուն, որոնք ճանչցած են Ցեղասպանութիւնը, ինչպէս՝ Քանադա եւ Ֆրանսա: Ան կ'ապրի Արարատ լեռան սերը եւ իր էութեան



դիրքորոշումը կ'արտայայտէ իր մտորումներուն ճամբով՝ վերահաստատելով պահանջատիրութեան հրամայականը: Կ. Գույումճեան կ'ապրի նաեւ Քուէթի թրքական դեսպաններուն հետ Հայկական հարցին առնչութեամբ եղած «քաջքշուքները»: Արաբական մամուլին մէջ լոյս տեսած այս նիւթով յօդուածները բնականաբար կ'անհանգստացնեն թուրք դեսպանը, որ կը հակադդէ յօդուածներուն, որոնց եւս կը պատասխանէ Կ. Գույումճեան՝ բացայայտելով իր մտքին ու հոգիին էութեան մէջ գտնուող հրատապ եւ վճռական դիրքորոշումները:

Գիրքին մէջ կը շարունակես հետեւիլ Կիրակոս Գույումճեանի կեանքին յաջորդական կայաններուն, հայ մշակոյթի հպարտութեան, քրիստոնէական ինքնութեան՝ Նարեկացիի ու «Մատեան Ողբերգութեան»-ի ընդմէջէն, հայերէն տառերուն նկատմամբ ունեցած գուրգուրանքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին Քուէթ տուած այցելութիւններուն, որոնք կը հանդիսանան հպարտութեան առիթ:

Կիրակոս Գույումճեան կը սիրէ արաբը, կը հաւատայ ու կ'ապրի հայ-արաբական յարաբերութիւնն ու պատմական բարեկամութիւնը: Թէեւ ինք Հայկական հարցին ջատագովն է, սակայն կառչած է նաեւ արաբական իրաւունքին, կառչած է Հալէպին, միեւնոյն ատեն երախտապարտ է վերջին տարիներուն միացած իր գաղութին եւ Քուէթի պետականութեան, իր յարգանքը կ'արտայայտէ անոր իշխանապետին՝ Ժապեր Ահմետ Ժապեր Սապահի:

Կիրակոս Գույումճեան կը հաւատայ, թէ՛ «այն, ինչ որ սրտէն կ'ելլէ, կը հասնի սրտին»: Իր յօդուածներուն եւ գիրքին միտք բանին ալ ա՛յդ է՝ ընթերցողին սիրտին հասնելու փորձ մը:

Կիրակոս կը փոխանցէ իր սրտին «կայանները»՝ հատիկ-հատիկ: Ան դիտել կու տայ, որ Հայոց ցեղասպանութիւնը ապրուած իրականութիւն ու փորձառութիւն է, Հայաստանն ու հայրենի անկախութիւնը հայուն հպարտութիւնն են՝ իր մշակոյթով ու պատմութեամբ: Ան անդրադարձած է սփիւռքահայութեան երախտագիտութիւնը՝ արաբ ժողովուրդին նկատմամբ, լուսարձակի տակ առնելով գոյութիւն ունեցող բարեկամութիւնը:

Գիրքը հրատարակուած է Քուէթի մէջ, հոն տեղ գտած է Հայաստանի արտաքին գործոց նախկին նախարար Վարդան Օսկանեանի խօսքը, հալէպահայ ծանօթ մտաւորական-գրող Թորոս Թորանեանի արժեւորումը, որուն մէջ կը մատնանշէ, թէ գիրքը արաբերէն գրուած է, որովհետեւ հայն ու արաբը վարպետ են կամուրջ կառուցելու արուեստին մէջ:

Կիրակոս Գույումճեանին աշխատանքը պէտք է տեսնել այս «կամուրջ կառուցելու» իրականութեան մէջ: Ան յաջողած է այս մէկը ընել, որովհետեւ կրցած է իր սրտէն բխածը հասցնել սրտին ընթերցողին՝ հայուն ու արաբին, կրցած է «կայանները» ամուր պահել հայուն կեանքին մէջ եւ հայկական իրականութեան մէջ: Անոր էութեան «դիրքորոշումները» դարձեալ անխախտ են, որովհետեւ կը հաւատայ հայուն արժէքներու պահպանման եւ փոխանցման իրականութեան:

Արդարեւ, հայուն յաջողութեան գրաւականը նոյնինքն այս «կայաններուն» եւ «դիրքորոշումներուն» շարունակականութեան մէջ է: Կիրակոս Գույումճեան կը յաջողի

ընթերցողը կամրջել այս շարունակականութեան միտք բանիին եւ հրամայականին: Վարձքդ կատար, գրիչդ դալար, Կիրակոս Գույումճեան:

Գրական-Մշակութային

ԼՈՒՍԱԻՈՐ ԹԱԽԾԻ ՆԿԱՐԻՉ

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ

Կեանքից հեռացաւ ֆրանսահայ նկարիչ Ժանսեմը

Հայ գեղանկարչութիւնը ցաւալի կորուստ ունեցաւ: Կեանքից հեռացաւ ֆրանսահայ նկարիչ Ժանսեմը (Յովհաննէս Մեմերճեան), մէկը սփիւռքի մեր անուանի արուեստագէտներից, որի



արուեստի ներքին տրամադրութիւնները որքան ազգային, նոյնքան համամարդկային են, եւ որից բխող զգացմունքների աշխարհը մտերիմ-հաղորդական կարող է լինել իւրաքանչիւրին: Ֆրանսիացի տեսաբանները նրան համարել են միգրացիայի թշուառների նկարիչ: Սա թերեւս նրա նկարչութեան ընդհանուր ոգուց, պատկերած պերսոնաժներից եկող տպաւորութիւն է: Նրա վրձինը փնտռում էր մարդու հոգու տխրութեան մեղեդին: Կեանքի թշուառութիւնը, դառնութիւնը կամ զրկանքը, որ ապրում է մարդկային էութիւնը, նկարիչը վերափոխում էր բանաստեղծական-քնարական թախծի: Նա կարծես ցաւի բանաստեղծը լինէր նկարչութեան մէջ:

Սուր զգացմունքները, անկուսման տրամադրութիւններն արուեստում աւելի ներագողդ ուժ ունեն իհարկէ, սակայն այս պարագայում նկարչի ներքին վիճակն է այդպիսին, որի հարազատ ունկնդիրն է եղել նա միշտ:

Տարագիր արեւմտահայի ճակատագիրը կրող նկարիչը կեանքի՝ իրեն բաժին ընկած վիշտը



կտաւին գունանկարեց զարմանալի մեղմութեամբ: Նրա յատկապէս կանացի կերպարների փխրուն աննիթայնութիւնը, դէմքի դալուկ արտայայտութիւնները, մարմինների զծապատկերի նրբութիւնը իրականի ու վերացականի սահմաններին են պահում նրանց, որ բացարձակապէս համակրանքի զգացում է արթնացնում, եւ բնաւ՝ խղճահարութեան: Ժանսեմը մարդկային կեանքերի նկարիչ է, մարդկային խորը ապրումների ու զգացողութիւնների արտայայտողը: Նրա տխրութիւնը,

անկասկած, քնարական է, գունային թափանցիկութիւնը միայն հրճուանք է ծնում, չնայած կիսատ ապրած կեանքի զգացողութեամբ նրա հերոսների, կտաններից ուղղակիօրէն հոսում է լոյսի մեղեդին: Նրա բաց կապոյտի, դեղնի ու կանաչի սքանչելի համադրութիւնները կեանքի ցաւը վերածում են բանաստեղծական այնպիսի տխրութեան, որ դիտում է իբրեւ ձօն գեղեցկութեան, ձօն բարութեան ու յոյսի՝ առաւօտուայ օդի մաքրութեան հանգոյն: Նա նկարիչ էր, որ կեանքի ստուերագծերի արանքում անպայման լոյսն էր տեսնում:

Իբրեւ ցեղասպանուած ժողովրդի զաւակ, այդ ցաւն իր մէջ մշտապէս կրող արուեստագէտ, նրա կտաններին 1915-ի սոսկալի արձագանգը յայտնուեց գեղարուեստական նաթուրալիզմի ընդգծուած ոճով, սակայն դաժան, դժոխային պատկերների մէջ անգամ թաքնուած է Ժանսեմին հատուկ գոյնի լուսաւորութիւնը: Նկարների այդ շարքը՝ 34 կտաւ, 2001-ին Հայաստան կատարած իր երկրորդ այցելութեանը Ժանսեմը նուիրեց Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին, որտեղ հիմա դրանք ցուցադրուած են:

Առաջացած տարիքը մեծ արուեստագէտի պարագայում նկատու՞մ է արդեօք: Իհարկէ՞ ո՛չ: Այդպէս երբեք չի լինում: Մեծերի կորուստը մշտապէս ամայութեան զգացում է բերում, մեծ ավառանք է ծնում: Այսպէս է նաեւ Ժանսեմի հեռացումը: Կեանքին հրաժեշտ տուեց նա 93 տարեկանում՝ ապրած կեանքը թողնելով իր կտանների թափանցիկ լրութեան մէջ, վրձնի գունագեղ հետքերում...



Ժանսեմը ծնուել է Սելեզում, (Թուրքիա), շատ չանցած ընտանիքը գաղթում է Յունաստան, Սալոնիկ, 1931-ին մայրը ամուսնու մահից յետոյ տեղափոխւում է Ֆրանսիա, բնակութիւն հաստատում Փարիզի Իսի լէ Մուլինէօ արուարձանում: Նրա մասնագիտական առաջին դպրոցը Մոնպառնասի ազատ ակադեմիաներն էին, ապա սովորել է Փարիզի տեկորատիվ արուեստի բարձրագոյն դպրոցում:

Առաջին ցուցադրութիւնը 1944-ին «Անկախների սալոնում», «Ջութակահարը» կտաւն է եղել: 1956-ին ընտրուել է երիտասարդ նկարիչների միութեան նախագահ, անհատական բազմաթիւ ցուցահանդէսներ է ունեցել Փարիզում, Նիւ Եորքում, Շիգակոյում, Լոնտոնում, Թոքիոյում, Հռոմում, Պրիւսելում, Լոզանում, Պէրթուրում եւ այլուր: Ժանսեմը նկարչական թեմատիկ շարքերով մտածող արուեստագէտ է՝ ոճական անհատական նախասիրութեամբ՝ «Պարուհիներ», «Յլամարտ», «Դիմակահանդէս», ուշագրաւ են նաեւ դիմանկարների շարքը եւ յատկապէս ինքնատիպ, նուրբ նաթիրմոթները: Նրա աշխատանքները պահւում են աշխարհի մի շարք հեղինակաւոր թանգարաններում եւ մասնաւոր հաւաքածոներում: Նա այն բացառիկ նկարիչներից է, ում անունով կենդանութեան օրոք բացուել է երկու թանգարան, երկուսն էլ Ճապոնիայում: Ժանսեմը արժանացել է միջազգային հեղինակաւոր մրցանակների, այդ թւում՝ Ֆրանսիայի «Պատուոյ լեգէոն» շքանշանի: 2010-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հրամանով նրան շնորհուել է «Պատուոյ շքանշան»:


Արժեքաւոր Նոր Հրատարակութիւն

Պարոյր Աղպաշեանի «Հրապարակախօսական-Բանախօսական-Գրախօսական Ընտրանի Էջեր»ը

(Պէրուք-2012)

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

287 էջերու վրայ տարածուող այս գիրքը մեզի կը ներկայացնէ հրապարակագիր Պարոյր Աղպաշեանի այս հատորին մէջ ամփոփուած քննարկումները, վերլուծումները, դիտարկումներն ու հաստատումները, բոլորն ալ նկատի ունենալով հայ կեանքը եւ մեր օրերու աշխարհին վիճակը:



Գիրքը ունի երեք բաժին.-

ա. Հրապարակախօսական - 24՝ խօսք ու յօդուած

բ. Բանախօսական - 8՝ հարցազրոյց, դէմքեր եւ ելոյթներ

գ. Գրախօսական - 13՝ գիրք

Վերջաւորութեան՝ հայերէն, անգլերէն եւ արաբերէն՝ ամփոփումներ:

Կարդալով ամբողջ հատորը կու գանք մէկ եզրակացութեան, որ, հրապարակագիր Պարոյր Աղպաշեանը իր բոլոր ելոյթներուն ու վերլուծումներուն մէջ ունեցած է մէկ սկզբունք ու եղած է անաչառօրէն հետեւողական իր այդ սկզբունքին:

Ո՞րն է այդ.- «Մեծերուն հետեւիլը ու անոնցմէ օրինակ առնելը առաքինութիւն է, իսկ զանոնք մեծարելը՝ կրկնակի բարեմասնութիւն»:

Ու այս հատորը իր առաջին էջէն մինչեւ վերջին տողը հաստատումն է բիրեղային այդ սկզբունքին:

Խօսելէ առաջ հատորին բովանդակութեան մասին հաստատենք, որ այս գիրքը Կարպիս Լ. Նազարեան հիմնադրամի 18րդ հրատարակութիւնն է, որուն կ'երթայ հեղինակին շնորհակալական խօսքը:

Հատորը բացող իր «Երկու խօսք»ին մէջ հեղինակը կը գրէ.- «Պահելու համար արժեչափերն ու մակարդակը ընտրուած նիւթերուն, խստապահանջութիւնն ու բժախնդրութիւնը ունեցայ կրկնութիւններէ խուսափելու, ընթացիկները նկատի չառնելու, նոյնիսկ կիսաժամանակավրէպները մէկդի դնելու»:



Այս խօսքին կը հետեւի վեց էջերու վրայ տարածուող վկայութիւն մը ուղղեալ հեղինակին, որ կու գայ գրիչէն հայրենի հանրաժանօթ գրականագէտ Դաւիթ Գասպարեանէն՝ «Կեցցե՛ս Պարոյր...» խորագիրով:

Դաւիթ Գասպարեանը ճանչցած է Պարոյրը Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական ճիւղի ուսանողական օրերէն, երբ ան դասընկերը եղած է Պարոյրին:

Գասպարեան կը գրէ.- «Պարոյրը ուր էլ որ աշխատել է՝ արժանացել է գնահատականի, տիտղոսների, պարգևների... սիրելի Պարոյր, ուրախ եմ որ ես՝ քո ուսանողական տարիների ու յետագայ ժամանակների մտաւոր կեանքի ընկերդ, առիթ ունեմ գրելու քո մասին եւ քեզ ասելու իմ ոգեշնչող խօսքերը: Եւ առաջին բառը, որ պիտի ասեմ՝ կեցցե՛ս է:

Կեցցես, որ Սփիւռքի դժուարին պայմաններում, Լիբանանի քաղաքացիական պատերազմի երկարաձիգ տարիներին մնացիւր դիրքերում, կեցցե՛ս, որ խօսքի արժեզրկման, գերարժեզրկման այս տասնամեակներին, ծախսու եւ ուղղորդուող մամուլի ու լրագրութեան այս ամօթալի ժամանակներում, մնացիւր շիտակ եւ բարձր պահեցիւր գրաւոր խօսքի, բանաւոր ելոյթի արժանապատուութիւնը»:

Այդ կը վկայեն նաեւ Աղպաշեանի 17 տարի «Զարթօնք» օրաթերթի խմբագրութիւնը վարելու ընթացքին գրած խմբագրականները:

Ա. ԲԱԺԻՆ

ԳԻՏԱԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Նիւթ կա՞յ որուն շուրջ իր կարծիքը յայտնած չըլլայ այս հրապարակագիրն ու հրապարակասօրը, շրջելով Սփիւռքի բոլոր հայաշատ կեդրոնները ու Հայաստան ու հնչեցուցած չըլլայ իր ձայնը բազում համագումարներու ընթացքին Կիլիկիան Աթոռէն մինչեւ Հալէպ, Դամասկոս, Ամման, Աթէնք, Երեւան, Ամերիկա, Գանատա եւ այլուր, մինչեւ Ծաղկաձոր ու Ստեփանակերտ:

Միշտ ճշմարիտին ի խնդիր, միշտ վասն հայութեան, Հայ Դատին, հայ պահանջատիրութեան աշխարհի բոլոր ամպիոններէն:

Հօրը՝ Յովհաննէս Աղպաշեանի եւ յեղափոխաշունչ Մարիի գաւակն է, ժառանգակիրի իր խօսքը պիտի հնչեցնէ հոն ուր մեր ժողովուրդին համար յանուն իր դատին մէկտեղում մը, համագումար մը կայ:

Ահա գիրքին Ա. բաժինը.- «Գիտագեղուցումներ, հրապարակումներ»: Ա. յօդուած.- «Սփիւռքահայ միջ-կուսակցական եւ միջ-գաղութային փոխարաբերութիւններու մարզէն ներս հարցադրումներ».- Ահա Պարոյրին շեշտադրած ելոյթը.- «(Մեր) Միջ-կուսակցական յարաբերութիւնները եթէ չգտնուին իրենց փոխադարձ, անշահախնդիր ու գործակցական ծիրէն ներս, շօշափելի ու տեսանելի տուեալներով ու արդիւնաւորութեամբ, միայն պատուհաս կը հասցնեն ու կը դառնան փորձանք»:

Յիրաւի ճիշդ ախտորոշում:



Ու աւելին.- «Մակայն մեզի՝ անպետական Սփիւռքին համար, անհրաժեշտ է որ անհատական, հատուածական ու մենասիրական փառատենչութիւններէ վեր ու հեռու մնանք, որպէսզի հայապահպանման մեր գոյապայքարին մէջ ըլլանք աւելի արդիւնաւոր, օգտաբեր ու նպատակային»:

Ասկէ ծնունդ կ'առնէ ընկոյզի ծառը՝ միասնականութիւնը, որ իր ամրակոտ հասակը կը ստանայ:

Այս անգամ Աղպաշեանին նիւթը «Համահայկական Համագումար»ի մը կազմակերպումն է, «Համահայկական Գոնկրէս»ի կազմակերպումը, որ հատորին մէջ յոյժ կարեւոր ըլլալուն կրկնուած է:

Ի՞նչ կ'ուզենք: Ո՞վ պիտի ըլլայ ուզողը: Միաձայն ենք, թէ բազում ձայներ ոչ թէ կը գումարուին, այլ՝ զիրար կը խանգարեն:

Ապա, Աղպաշեան շեշտը կը դնէ պատասխանատուութեան եւ յանձնառութեան ամրապնդումին վրայ, խօսքը ուղղելով մեր բոլոր կազմակերպութիւններուն.- «Որպէս մեր ընդհանրական ուխտին կրողն ու կիրարկողը, լաւ է որ այս պահէն սկսեալ, ամէնուրեք, հայ ժողովուրդը դառնայ իր անժամանցելի դատին հետապնդողը»: Խօսելով Վարդանանց պատերազմի ռազմաքաղաքական երեսին մասին, Պարոյրը կ'եզրակացնէ.- «Ասոնց լաւագոյն ապացոյցները չէ՞ն Սարդարապատն ու Արցախը, որոնք հայ ժողովուրդին տուին ոչ միայն միասնական դառնալու դասը, այլեւ՝ վերապրելու ու վերածաղկելու ազգային առաջադրանքները»:

Ազգային միասնականութեան հասնելու միջոցներուն մասին խօսելով, Պարոյրը կ'ըսէ.- «Միասնականութիւնը այլեւս լոգունգ կամ կարգախօս ըլլալէ պէտք է դադրի, ինչպէս նաեւ պէտք է դադրի ցանկատեսութիւն կամ հաճոյախօսութիւն ըլլալէ»:

Նիւթ ունենալով «Հայ մտաւորականութիւնը, Արեւմտահայերէնը եւ հայ մամուլը», հեղինակը կ'ըսէ.- «Այնքան ատեն որ հայ մտաւորականը կը լուսանցքուի պատասխանատու թէ պարզ հայ հաւաքականութենէն ու հայ թերթը կ'արհամարհուի, հայ լեզուն կ'աղաւաղուի, կը նշանակէ թէ՝ ապականած բան մը ըլլալէ զատ, կայ նաեւ խաթարուած կացութիւն մը»:

Ու կը յաւելու.- «Լեզուն՝ արեւմտահայերէն լեզուն, մեր անգերազանցելի գանձը, այսօր ամենէն խոցոտուածն ու այլանդակուածն է...»:

Նոր այլ հին նիւթ՝ «Փանթուրանիզմը եւ հայ հրապարակագրութիւնը» - «ինչպէս սիոնիզմը, փանթուրանիզմը եւս աղէտ մըն է աշխարհին ու մարդկութեան, մանաւանդ երբ երկուքին ալ արմատները ամրացած են, եւ, իրենց այլասերող հետեւանքներով, կերպարանափոխող նոր պարտադրանքներու կ'առաջնորդեն ազգութիւններն ու վարչաձեւերը»:

Անոնք միշտ կ'ընդարձակեն իրենց ազդեցութեան գօտիները սպառնալիքներով եւ հարեւան երկիրներ խուժելով երկինքէն ռմբակոծելով զանոնք:



Հրապարակագիրին համար նիւթ է նաեւ «Հայ քաղաքական կազմակերպութիւններուն դերը Մփիւռքահայ կեանքին մէջ», - երբ.- «Հրապարակի վրայ տեսլապաշտ մարդոց բացակայութիւնը մեծապէս կը վնասէ հայ ազգային գործընթացի կիզակէտին»:

Պ. Աղպաշեան կոչ կ'ընէ վարել ինքնաքննադատութեան եւ ինքնասրբագրումի աշխատանքին մղել մեր բոլոր կազմակերպութիւնները:

Աղպաշեան արդարօրէն պաշտամունքի կը հասցնէ հայ մարդուն սերը Աճառեան գիտնականին ու լեզուաբանին հանդէպ, երբ անոր.- «Լիակատար հայերէնի քերականութիւն, 562 լեզուների համեմատութեամբ, եօթ հատորեայ գործը, անտարակոյս, ընդհանուր լեզուաբանութեան եւ մասնաւորաբար հայ լեզուաբանութեան մէջ կոթողային հրատարակութիւն մըն է, ուր գիտականօրէն լոյսին կը բերուին հայերէն լեզուի ամբողջական կառոյցներու դրուածքը, իր համեմատական հնչեղութեամբ, օրինաչափութեամբ ու լիարժէքութեամբ»:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահակալ Արամ Ա. Կաթողիկոսը 2007 թ.ը հռչակեց «հայ լեզուի տարի»: Բարի՛, քանի՞ հոգի օգտուեցաւ այդ խորապէս համազգային կոչէն: Քանի՞ հայերէն գիրք վաճառուեցաւ ու հայ թերթերու բաժանորդներուն թիւը քանի՞ վ աւելցաւ...:

Կը տօնուի 100ամեակը տեսլական ունեցող ՀԲԸ Միութեան: Պարոյր Աղպաշեանին ու շատերուն համար.- «ՀԲԸ Միութիւնը մէկ դարուան իր պատմութեան ընթացքին տուաւ ապացոյցը իր գոյութեան անհրաժեշտութեան եւ անփոխարինելիութեան, ազգային իւրաքանչիւր մարզ նկատելով իր սրբազան պարտականութիւնն ու պարտաւորութիւնը»:

«Տարագիր հայութեան համազգային գոնկրէս» մը յառաջացնելը Աղպաշեանի համար հիմնահարց է.- «Ժամանակը աւելի քան հասունցած է հայկական ցեղասպանութեան իրաւական եւ արդարացիական լուծումին տալու նոր բովանդակութիւն, որպէսզի ան դառնայ ազդու փաստաթուղթ մը, ի նպաստ անոր միջազգայնացումի ընդունման ու հաստատման, ուր մեր հողային պահանջքն ու հատուցման իրաւունքը դառնան առաւել շօշափելի առաջադրանքներ»:

Բայց այդ բաղձալիին հասնելու միջոցը Տարագիր հայութեան համաշխարհային գոնկրէս մը առաջացնելն է, որուն մասին յաճախ խօսք կայ բովանդակ հայ մամուլին մէջ, առանց որ որեւէ կողմ նախաձեռնէ այդ սրբազան գործին:

Պարոյր Աղպաշեան կը յամենայ նաեւ բանասէր Ժիրայր Դանիէլեանի հրապարակած «Գրական Որոնումներ» հատորին վրայ, ըսելով.- «Այս օրերուն, գրականագիտական, գրադատական կամ գրաքննադատական գործ հրատարակելը իրապէս բարացուցական երեւոյթ մըն է, թէ՛ հեղինակին, թէ՛ ընթերցողին եւ թէ՛ գրական աշխարհին համար»:



Բայց եւ այնպէս Ժիրայր Դանիէլեան «Բանասերը, մատենագէտը, գրականագէտն ու հրապարակագիրը վարպետութեամբ իր դիտումներն ու դատումները հիւսած է, իր իւրաքանչիւր գործին տալով ինքնատիպութիւն մը»:

Հեղինակի մտածողութեան տեսադաշտին է՛ն կարելոր նիւթերէն է.- «Հայագիտական նիւթերու ուսուցումը ու հայ մամուլը».- «Հանրամատչելի դասագիրքերու պատրաստութիւնը, մասնագէտ ուսուցիչներու կազմակերպումը, արդի կրթադաստիարակչական մեթոտաբանութեան կիրարկումը, տնտեսական ապահով պայմաններու ստեղծումը, կը հանդիսանան հիմնահարցեր, որոնց բարւոք լուծումները տակաւին չեն հասած իրենց լրումին»:

«Ամբողջական գրագէտը՝ Զապէլ Եսայեան» հատորին ամենափայլուն էջերուն մաս կը կազմէ.- «Ահաւասիկ հայ կին գրող մը, որ Պոլսոյ մէջ հասակ առած է, ուսանած, աշակերտած՝ յայտնի գրողներու, ծանօթացած՝ հայ եւ օտար գրականութեանց, տիրապետած՝ թրքերէն ու ֆրանսերէն լեզուներու, այցելած՝ մշակոյթի ոստաններ (Մոսկուա, Փարիզ, Թիֆլիս, Պաքու, Իրան, Միջին Արեւելք) ստեղծագործած՝ գրեթէ բոլոր գիտական սեռերը փորձելով, ականատես եղած՝ տեղահանութիւններու, հանդէս գալով յուշագրութիւններով ու տպաւորութիւններով»:

Հոս կը գտնենք թուարկումը Զապէլ Եսայեանի բոլոր գործերուն՝ հեղինակին կողմէ բնորոշ վերլուծումներով:

Իսկ Եսայեանի «Աւերակներուն մէջ» վաւերագրական գրականութեան պատկանող գործը փաստաթուղթ մըն է, ուր թուրքին վանտալիզմը պարզորոշ կը բացայայտուի:

Հայոց վրայ գործադրուած Յեղասպանութիւնը եւս հատորին առանձնայատկութիւններէն է՛ն կարելորն է:

Հեղինակը կը շեփորէ Անդրանիկ Անդրեասեան գրողին, խմբագիրին, հասարակական գործիչին նուիրուածութիւնը ամբողջ հայութեան: Հոս են Անդրեասեանի բոլոր գործերը, անսահման նուիրումը:

Համահայկական Գոնկրէսի մը հարցը վերստին կ'արծարծուի.- վերջ տալ տարակարծութեանց եւ ունենալ համահայկական գոնկրէսը որպէս բանալի միջոց Հայկական Դատին:

Մփիւռքի մէջ մեր խօսակցական լեզուին աղճատումը հեղինակին նիւթերէն, ցաւալի նիւթերէն մէկն է.- «Անցնող քառորդ դարուն, յարաճուն մագլցումներով, արեւմտահայերէնը ենթարկուեցաւ (ու կ'ենթարկուի) ցնցումներու...»:



Բ. ԲԱԺԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Ահա խիստ հետաքրքրաշարժ հարցազրոյց մը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա.ի հետ, որուն յատկացուած է 18 էջ, ուր Վեհափառը հանդարտօրէն մտածուած պատասխանած է տրուած բոլոր լրջամիտ հարցերուն, խօսելով նաեւ փոխադարձ անվստահութեան վիճիւր փակելու հարցին շուրջ ու անշուշտ այս մէկը հայ կազմակերպութիւններուն միջեւ:

Աղպաշեան մեզի սիրով ներկայացուցած է նաեւ հրապարակագիր ու ազգային գործիչ Անդրանիկ Փոլատեանը, որմէ ետք անդրադարձած հայ մամուլի ծառայութեան հրատապ նիւթին շուրջ, Սփիւռքի մէջ, ապա որդիական սիրով անդրադարձած իր հօր Յովհաննէս Աղպաշեանի երգիծագրութեան, տալով օրինակներ:

Անկասկած, Յովհաննէս Աղպաշեանը պիտի հասներ գրական բարձունքներու եթէ իր բոլոր ուժերը նուիրաբերած չլլար հանրային ու քաղաքական հարցերու:

Ջերմ են հեղինակին խօսքերը խմբագիր, հրապարակագիր, պատմաբան եւ ուսուցիչ Գերսամ Ահարոնեանի մասին, որ ՌԱԿի շարքերուն մէջ կրցաւ սերունդ մը պատրաստել:

Պարոյր Աղպաշեանի մտատիպարն է, ինչպէս իր հայրը, նաեւ Գերսամ Ահարոնեանը:

Պարոյր Աղպաշեանը չի մոռնար մեր անցեալի նուիրեալները: Հոս՝ Վանի պարծանք՝ Մկրտիչ Փորթուգալեանը, ապա անցնելով «Հայ մամուլի դերին ու անոր առաքելութեան լիբանանահայ կեանքէն ներս».- «Հակառակ լսատեսողական, համացանցային կամ համակարգչային արդիականութեան եւ արագութեան գործընթացին, մամուլը՝ իր տպագրական-հրատարակչական թաւալքով, կը մնայ անտարբերակելի եւ անկրկնելի այն մարզը, որ չի կրնար փոխարինուիլ նոյնիսկ նորագոյն զարգացումներով, ոչ ալ կրնայ ի սպառ ջնջուիլ»:

Գ. ԲԱԺԻՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Պարոյր Աղպաշեան իր այս գործին Գ. բաժինին մէջ գրախօսած է 12 գիրք:

Ա. Ռուբէն Ս. Ղազարեանի «Հայ բառարանագրութեան մէջ նշանակելի ներդրում մը՝ «Գրաբարի հոմանիշների բառարան», Անթիլիաս, 2006:

Բ. «Հրաչեայ Աճառեանի գործերը Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան վերարժէտութեամբ»:

Գ. «Հայկենց պատմութեան հրապաշտական ինքնատիպ արձակը» - «Անորոշ գետին կամուրջները», Նիւ Ճրրզի, 2007:



Դ. «Կանաչ ու սեւ» Արցախեան Օրագիր» Թաթուլ Յակոբեան, Երեւան-Ստեփանակերտ, 2008:

Ե. «Հայ-Եգիպտական Հայեացքներ» - Պատմութեան-քաղաքականութեան եւ մշակութային ժառանգութեան մէջ», Պերճ Թերզեան, Գահիրէ, 2008:

Զ. «Բոլորանուէր հրապարակագիր՝ Մեր Գասպար Տէրտէրեանի «Հայեացք ու կեցուածք» հատորը», Պէյրութ, 2008:

Է. «Հայկական Սիւնակ... Անհաճոյ ըլլալու երանութիւնը», Երուանդ Հ. Քասունի, Պէյրութ, 2009:

Ը. Վարդգէս Համապասպեան մարդը եւ գործը - «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ Հայաստանը»:

Թ. «Արեւմտահայերէն-Արեւելահայերէն նոր բառարան» Ռ. Կ. Սաքապետոյեան - Երեւան, 2011:

Ժ. Արժէքաւոր մը՝ «Ամերիկահայ Գիրքի Պատմութիւն» Յովսէփ Նալպանտեան - Լոս Անճելըս, 2011:

ԺԱ. «Հայոց Յեղասպանութենէն առաջ եւ ետք» - Զաւէն Մսրրլեան, Անթիլիաս, 2011:

ԺԲ. «Հայկական Հարցի Հոլովոյթը՝ 1939-2010» - Զաւէն Մսրրլեան, Պէյրութ, 2012:

ԺԳ. «Յիշատակելի Դիմաքանդակներ» - Վաչէ Սեմերճեան, Կլենտէյլ, 2012:

Ապա՝ ամփոփում ու կենսագրական գիծեր հեղինակէն:

Պէտք է յայտնենք, որ վերոյիշեալ բոլոր գրախօսականները գրուած են կարելի անաչառութեամբ ու յաճախ մեծ սիրով եւ գնահատումով, բոլոր հեղինակները իրենց արժանի տեղը գետեղելով:

Այս հատորը Պարոյրին հերթական նոր վկայութիւնն է իր մտաւորականի, հրապարակագիրի ու գրողի

արժանիքներուն, որ ընթերցողը կը մղէ ըմբռնանալու զայն:

Բարի վերերեւում Պարոյրի յետնեալ գործերուն:

Պէյրութ, Լիբանան

Տեսակէտ

Ողբ Հայաստանեայց Եկեղեցւոյ Վրայ

Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 20 Յուլիս 2013

«Կ'ողբամ քեզ հայոց աշխարհ, կ'ողբամ քեզ, բոլոր հիւսիսային ազգերու մէջ վեհագոյնդ, որովհետեւ վերացան թագաւորդ ու քահանայ, խորհրդականդ ու ուսանողդ, վրդովուեցաւ խաղաղութիւնը, արմատացաւ անկարգութիւնը, խախտեցաւ ուղղափառութիւնը, հիմնաւորուեցաւ տգիտութեամբ չարափառութիւնը»

(Խորենացի)



Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ եւ անոր ներքին կեանքին մէջ կատարուող աննախադէպ պատահարները, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ ու հայ հոգեւորականութեան հանդէպ ունեցած բծախնդրութիւնս ու նախանձախնդրութիւնս կը ստիպեն զիս անգամ մը եւս լրջօրէն անդրադառնալու այնքան յոյժ կարելոր՝ Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան հրատապ հարցին:

Որքա՛ն աժմէական է տասնեօթ դարեր առաջ Խորենացի Պատմիչին գծած տխուր նկարագրականը հայ կրօնաւորներու մասին. «կրօնաւորները կեղծաւոր, ցուցամոլ, սնափառ, պատուամոլ՝ քան թէ աստուածասէր: Վիճակաւորները հպարտ, դատարկապորտ, դատարկախօս, ծոյլ, գիտութիւններն ու վարդապետական գրուածքները ատող, առեւտուր եւ կատակերգութիւններ սիրող»: Կրնա՞նք անտարբեր մնալ, երբ ամէն օր, ամէն ժամ նոր նիւթ

մը կայ համացանցի վրայ, մեր հոգեւորականութեան կեանքն ու վարկը շօշափող՝ ամօթալի բայց եւ յուզիչ երեւոյթներու մասին. «Ինչպէ՞ս դիմանամ այս ցաւերուն եւ ինչպէ՞ս ամրապնդեմ միտքս ու լեզուս» (Խորենացի): Անկասկած ՈԶ:

Եկեղեցին այսօր իր հոգեւորականներով եւ աշխարհական ղեկավար դասով, յանուն հայ ժողովուրդի միասնական գործակցութեան, պարտաւոր է եւ հրամայական, որ այս եկեղեցական տագնապները դիմագրաւէ, եւ կանոնական սահմաններու մէջ պահպանելով հանդերձ աւանդութիւնները՝ արդիական ժամանակակից միջոցներով ու նոր լոյսի տակ անյապաղ հանրութեան ներկայացնէ տրամաբանական լուծումներ: Երկխօսութեան պակասը մեզ հասցուցած է անդունդի եզրին, եւ եթէ այսպէս շարունակուի՝ Եկեղեցին տակաւ առ տակաւ, եւ ի վերջոյ ամբողջութեամբ, կը կորսնցնէ իր հեղինակութիւնն ու ազդեցութիւնը մեր հասարակական կեանքի մէջ: Թէեւ ոմանք պիտի պնդեն անշուշտ, որ այդ հեղինակութիւնը վաղո՛ւց կորստուած է արդէն:

Երջանկայիշատակ Վազգէն Կաթողիկոսէն ետք, եւ մանաւանդ վերջին տասներկու տարիներուն, Մայր Աթոռը կ'ապրի տարօրինակ եւ անկաշկանդ «եռուզեռի» մէջ: Այն



ակնածանքն ու յարգանքը, թէկուզ ծպտեալ եւ ծածկեալ, գոր հայ ժողովուրդը կ'արտայայտէր հակառակ համայնավարական խիստ ռեժիմի հսկողութեան, չկան այսօր՝ ազատ անկախ հայրենիքի երկնքի տակ: Հիասթափուած է ժողովուրդը, եւ ո՛չ թէ միայն յարգանք կամ ակնածանք չունի, այլ բացայայտօրէն արհամարհանք ունի իր Եկեղեցւոյ եւ հոգեւորականութեան նկատմամբ: Այս իրողութեան մեծագոյն վկաներն են մամուլին մէջ լոյս տեսնող խայտաբղէտ յօդուածները, գրուած՝ մեր դարաւոր Եկեղեցւոյ, անոր գահակալներուն, եւ եպիսկոպոսաց դասէն մինչեւ ամենափոքր համեստ եկեղեցականի մասին (Տե՛ս Կճոյանը հերքում է ամեն ինչ):

Ինչ՞ պատահեցաւ յանկարծ, որ այս հսկայական գահավիժումը տեղի ունեցաւ, եւ հայ ժողովուրդին հաւատքը խախտեցաւ մասնաւորաբար հանդէպ իր հոգեւորականներուն, որոնք Ս. Սեդանին առջեւ ուխտած են ծառայել Աստուծոյ եւ իրենց ժողովուրդին: Տեղին չէ այստեղ մանրամասնօրէն անդրադառնալ այն ժողովրդական խօսակցութիւններուն, որոնցմէ ոմանք նոյնիսկ մամուլի մէջ եւս տեղ գտած են (ամուսնացած է. կին եւ երեխաներ ունի. գողական շրջապատի մէջ է. հարուստ է. «Բենթլի» կը քշէ. առեստուրով կը զբաղի. կալուածային շահարկումներու մէջ է. միլիոնաւոր տոլարներ արժող տան մէջ կը բնակի. եկեղեցականի ոչ-վայել կեանք կը վարէ, -- եւ նմանօրինակ արտայայտութիւններ, որոնք տհաճ են եւ ուղղակի սրտխառնուք կը պատճառեն): Բայց եւ այնպէս, հարցը շա՛տ աւելի խորունկ է եւ անմիջական արմատական լուծումի կը կարօտի:

Անոնցմէ առաջինը, հոգեւորականաց կենցաղն է, որուն մասին յաճախ մանրամասնութիւններով կը կարդանք մամուլի մէջ, կը ցաւինք ու կ'անցնինք: Ասկէ առաջ առիթը ունեցած ենք մամուլի ճամբով բազմիցս արտայայտուելու այս մասին, եւ սակայն այնքան ատեն որ գործնական քայլ մը չենք առներ լուծելու այս թնճուկը՝ կը մնանք ժողովուրդի խօսակցութեան մայր էջին վրայ, ինչպէս նաեւ անոնց ծաղրանքի առարկան:

Ընդհանրապէս երբ կենցաղի մասին կը խօսինք, կարծէք թէ կ'ակնարկենք կուսակրօնութեան մասին: Այս է ժողովրդային ընդհանուր հասկացողութիւնը: Կուսակրօնութեան գլխաւոր ջատագովը եղած է Պօղոս Առաքեալ եւ սակայն անոր տուած պատճառաբանութիւնները հիմնաւոր չեն կրնար ըլլալ այսօր, երբ մարդկութեան ընկերային պայմանները ամբողջովին փոխուած են եւ աշխարհագրական հեռաւորութիւններն ալ ջնջուած, իսկ կնոջ ներկայութիւնը իր ամուսնոյն կեանքին մէջ ունեցած է աւելի դրական ներդրում՝ իր մասնակցութեամբ անոր հոգեմտաւոր աշխատանքներուն մէջ, քան ժխտական:

Կուսակրօնութեան հարցը վարդապետական ըլլալէ առաջ եւ աւելի՝ կարգապահական է: Կուսակրօնութեան մուտքը Հայց. Եկեղեցիէն ներս՝ ժողովական կանոններու սեղմումներուն ենթարկած է զանոնք, եւ արգիլած՝ անոնց պաշտօնավարութիւնը թեմերէ ներս: Անշուշտ հասկնալի է թէ նման արգելքի դրութիւն մը կուսակրօններու վերաբերմամբ կարելի պիտի չըլլայ շարունակել, նկատի ունենալով որ ընկերային բարքերու թուլացումը, բարեկեցիկ տուններու ազգակցութիւնը կուսակրօն վանականներու հետ, եւ մանաւանդ



ամուսնացեալ եկեղեցականներու կրթական անկեալ վիճակը պիտի դիւրացնէին կուսակրօններուն վազքը դէպի քաղաքներ եւ դէպի թեմական պաշտօններու բարձրացում:

Ահաւասիկ այս նորաստեղծ կացութիւնը որուն ականատես վկաներն ենք,--այսինքն կուսակրօնութեան վանական կեանքէն հեռացումն ու քաղաքներուն մէջ մուտքը,-- պատճառ դարձաւ որ ամբողջութեամբ անտեսուի ամուսնացեալ քահանաներուն զարգացման կարելորութիւնը (բացառութիւնները միշտ յարգելի), որու հետեւանքով ամուսնացեալ քահանայութեան շարքերը ստուարացան մեծաւ մասամբ անուս, անմշակ, բարոյական արժանիքէ ու նկարագրէ զուրկ կարգ մը մարդոցմով -- ժամկոչներով, իրենց արհեստներուն մէջ ձախողած, սնանկացած, կոչումէ զուրկ անհասներով, որոնք քահանայութիւնը նկատեցին որպէս նոր ասպարէզ՝ ապահով կենցաղ մը ունենալու համար: Եւ այս բոլորին տխուր արդիւնքը եղաւ այն՝ որ կուսակրօններ, հակառակ եկեղեցական կանոններու, մենատէրերը դառնան եկեղեցական բարձրագոյն աստիճաններուն եւ պաշտօններուն:

Այնքան ատեն որ Հայց. Եկեղեցին կը շարունակէ եկեղեցական դասակարգի այս երկուութիւնը, որքան ատեն որ եկեղեցական բարձրագոյն պաշտօններն ու աստիճանները (Եպիսկոպոսութիւն, պատրիարքութիւն, կաթողիկոսութիւն) վեղարաւոր կուսակրօնութեան առանձնաշնորհումը կը շարունակեն ըլլալ, Եկեղեցին պիտի չկարենայ տոկալ 21-րդ դարու մարտահրաւերներուն եւ պիտի չկարենայ մատակարարել իր ժողովրդին հոգեմտաւոր կարիքները:

Դժբախտաբար, վերջին հարիւրամեակին, չգտնուեցաւ հոգեւոր հեղինակութիւն մը (Եպիսկոպոսական Ժողով, Գերագոյն Խորհուրդ, Ազգային Ընդհանուր Ժողով -- իրենց բոլոր յարակից մարմիններով), որ գործադրէր Շահապիվանի Ժողովին 14-րդ կանոնը, որ կը հրամայէ «կարգալոյծ ընել եպիսկոպոսը, երեցը կամ սարկաւազը, որ կին կը պահէ»: Վերջին յիսուն տարիներուն, մեր միաբանական կեանքի տարիներու ընթացքին,-- անկէ ներս եւ դուրս, -- եւ անկէ ետք ալ, տեսած ենք եւ կը տեսնենք կուսակրօններ բոլոր նուիրապետական Աթոռներէ ներս, որոնք անպատկառ շնականութեամբ գլխէ հանած են իրենց բարեկամներուն եւ պաշտօնեաներուն կիները, պատճառ դարձած են ընտանեկան քայքայումի, ուրիշներ՝ մանկապիղծ եղած են, չհաշուած այս բոլորէն վեր ու անդին, եւ աւելի սարսափելին՝ միասեռականները,-- ըլլան անոնք արուամուլ թէ՛ իգացեալ:

Այստեղ դարձեալ կը վկայակոչեմ 1920-ական թուականներուն Բենիկ Վարդապետի՝ «Իմ պատասխանը բոլոր զրպարտիչներին» խորագրով հրապարակած նամակ-յօդուածը, ուր կ'արտայայտուի այսպէս. «Տասն եւ հինգ տարի է ամուսնացած եմ անթաքչելի կերպով. ընտանիքով ապրել եմ նաեւ Էջմիածնի վանքի մէջ, ուր ապրում էին եւ ապրում են իրենց ամուսինների հետ Ներսէս Արքեպիսկոպոս Խիւղավերտեանը, Ադամ Վարդապետը, Եղիշէ Վարդապետը, Գեորգ Վարդապետ Զեօրէքճեանը, Դանիէլ վարդապետը, եւ Հայրապետներից եւ ո՛չ մէկը չպահանջեց, որ անոնք բաժնուին իրենց ամուսիններից: Այժմու Վեհափառը (Գեորգ Ե.) երբ հրաւիրեց Գեորգ Եպիսկոպոսին վարդապետանալ, վերջինս ազնուութիւն ունեցաւ նախապէս յայտնելու, թէ կին ունի: Իսկ այս հանգամանքը Կաթողիկոսը արգելք չհամարեց, որ նա վարդապետանայ, եպիսկոպոսանայ,



արքեպիսկոպոսանայ, առաջնորդ դառնայ: Սակայն նոյն Կաթողիկոսը պաշտօնական թղթով 1919 թուին հրամայեց վանական անառակներին, որ երեք օրուայ ընթացքում աղախիններին եւ մանկահասակ տղայ ծառաներին հեռացնեն վանքից...»:

Ահաւասիկ ախտաբոյր իրականութիւնը որ կը տիրէր Ամենայն Հայոց Հայրապետութեան աթոռանիստ Ս. Էջմիածնի վանքին մէջ: Բենիկ Վարդապետին յօդուածը պարզապէս ցոյց կու տայ որ հայութեան հոգեւոր կեդրոնը, Էջմիածինը՝ դարձած էր ապականութեան բոյն մը: Արդեօք տարբէր է պատկերը այսօր...:

Այս բոլորը մեզի ցոյց կու տան որ կուսակրօնութիւնը ժամանակավրէպ իրողութիւն մըն է, եւ բոլոր անոնք որոնք կը տապալտկին այդ կեանքին մէջ՝ կ'ապրին իսկական ինքնախաբէութեամբ: Կուսակրօնութիւնը որպէս պարտադիր կենցաղ պահպանել ու շարունակել՝ կը նշանակէ քաջալերել շնութիւնն ու պոռնկութիւնը, կը նշանակէ կրօնապէս վաւերացնել եւ հովանաւորել անբարոյականները, ուստի եւ ուրանալ ամուսնութեան սրբութիւնը եւ ստորադասել զայն ապօրէն յարաբերութեան եւ կամ կենակցութեան:

Մարդկայնօրէն անհնարին է պայքարիլ մարմնական-բնախօսական կարիքներուն դէմ: Բնութեան օրէնքը անտեղիտալի է եւ միշտ յաղթական ամենագորաւոր կամքին դէմ: Հետեւաբար, երբ Եկեղեցւոյ արգելիչ կանոնները չեն կրնար յաղթել բնութեան օրէնքին, կուսակրօններուն օրինաւոր ամուսնութիւն կնքելն արգիլելով՝ քաջալերած կ'ըլլանք անոնց մեղապարտ եւ ապօրէն կենակցութիւնը: Այս բոլորը քաջաբար գիտնալով, անհրաժեշտ է բարեփոխել տարաբախտօրէն շնութեան համագոր դարձած կուսակրօն կենցաղը, եւ ազատ թողուլ բոլոր փափաքողները՝ օրինաւոր ամուսնութիւն կնքելու, իսկ կամաւոր կուսակրօններուն թելադրել եւ պարտադրել որ ապրին աղօթանուէր վանական կեանք մը, եթէ իսկապէս կ'ուզենք պահպանել եւ պարտադրել Աւետարանին բարոյականը, եթէ կ'ուզենք պահպանել ամուսնութեան սրբութիւնն ու ընտանեկան պարկեշտութիւնը եւ ունենալ իրենց կոչումին գիտակից եւ մտքով ու նկարագրով հաւասարակշիռ եկեղեցականներ: Չմոռնանք անգամ մը եւս շեշտելու, որ Աստուծոյ գործին նուիրուած ծառայական կեանքը՝ անպայմանօրէն չէ՝ կապուած կուսակրօն կենցաղի հետ: Կը յուսանք եւ կը մաղթենք որ այս տարուան Սեպտեմբեր ամսուն տեղի ունենալիք Եպիսկոպոսական Ժողովը լրջութեամբ կը մօտենայ այս հարցին, արմատական լուծում մը գտնելով:



Երկրորդ.- Փաստուած իրողութիւն է որ մեր նուիրապետական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հոգեւոր եւ նուիրապետական իր դերին մէջ ձախողած է այն պատճառով որ արտաքին ու ներքին քաղաքական միջամտութիւններ եւ հետամտութիւններ թոյլ չեն տար որ Եկեղեցին առողջ գործունէութիւն ունենայ եկեղեցական-ազգային կեանքին մէջ, ինչ որ իր առաքելութեան կորիզը կը կազմէ: Հայաստանեայց

Առաքելական եկեղեցին պէտք է գերծ մնայ քաղաքական եւ շուկայական-առեւտրական որեւէ գոնաւորումէ, հակառակ պարագային ան կը դառնայ հաւաքական խաթարումի եւ այլասերումի թատերաբեմ:



Այս իրողութեան լաւագոյն փաստը վերջերս յայտնաբերեց Ամենայն Հայոց Հայրապետութիւնը իր անսանձ գործունէութեամբ: Նուիրապետական աթոռի վրայ բազմող հովուապետը, թէեւ ի պաշտօնէ կը նախագահէ մեր ազգային ժողովներուն, բայց եւ այնպէս պարտաւոր է գործել Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն եւ ոչ ըստ կամս: Չկայ ոեւէ անհատ հեղինակութիւն, որ ինքզինք աւելի բարձր կը նկատէ կամ կրնայ նկատել քան օրէնքը. «Ո՞վ կրնայ հաւատալ, որ Աստուած մէկ անձի միայն պիտի ուզէ տալ արդար դատելու այդ իրաւունք-իշխանութիւնը»: Եւ սակայն հակառակ այս մեծ ճշմարտութեան մեր նուիրապետական Մայր Աթոռի վրայ բազմած հովուապետը կը յանդգնի անտեսել եւ ոտնակոխել օրէնքի տարրական պարտաւորութիւնները: Ահա այս բոլոր անկանոնութեանց որպէս հետեւանք կը հանդիպինք անարդար եւ անբնական կարգազրկումներու, որոնք միայն կը նսեմացնեն փայլը հազարամեայ Հայ Եկեղեցւոյ եւ զայն կը վերածեն շուկայական առեստրական հաշիւներու:

Եկեղեցին անկասկած՝ ունենալով օրէնսդրական իրաւունք, ունի նաեւ օրէնքները գործադրելու իրաւունք՝ յանցաւորներու եւ զանցառուներու նկատմամբ: Բայց իւրանքանչիւր յանցանք պէտք է քննուի, պարզուի, ապացուցուի ու ապա ենթարկուի դատաւարտութեան: Սակայն այդպէս չեն պարագաները այսօր, որովհետեւ մեր նուիրապետական Մայր Աթոռէ ներս դէմ յանդիման կու գանք կամապաշտութեան եւ քինախնդրութեան, որոնք մեզ կը յուզեն եւ շփոթի մատնելէ ետք պոռթկում կը յառաջացնեն իր Եկեղեցիով լրջօրէն մտահոգ իւրանքանչիւր հայու մօտ: Այս պարագային, լուռ մնալը ո՛չ թէ անտարբերութիւն է, այլ մեղսակցութիւն, որովհետեւ իւրանքանչիւր հայ, որպէս մէկ մասնիկը Հայց. Եկեղեցիին, եւ նամանաւանդ իւրաքաքանչիւր եկեղեցական, -- բաժրաստիճան թէ փոքրաւոր-- կրկնակի բարոյական պարտաւորութիւնը ունի իր ձայնը լսելի դարձնելու, բողոքելու եւ զգաստութեան կոչ ուղղելու յանուն արդարութեան, ապա թէ ոչ Հայց. Եկեղեցին կը դառնայ բացարձակ կղերապետութիւն:

Յոյժ կարեւոր եւ հրամայական է որ անխախտ եւ անխտտոր պահպանուին ժողովրդապետական կարգերը Հայց. Եկեղեցւոյ եւ ազգային-եկեղեցական կեանքին մէջ: Հայց. Եկեղեցւոյ գերիշխան հեղինակութիւնը, որ օրուան կաթողիկոսն է, պարտաւոր է յարգել սահմանադրական կարգերը, որովհետեւ ժողովրդավարական կարգերու անտեսումը արհամարհանք մըն է հայ ժողովուրդի նուիրական եւ անկապտելի իրաւունքներուն հանդէպ:

Երբ ժողովուրդի մը կեանքին մէջ կը պակսի օրէնքի տիրապետութիւնը, երբ հանրային կարծիք եւ դեկլարներ ուս թօթուելով կ'անցնին, սահմանազանցումները կը շարունակուին աւելի շեշտակի կերպով եւ կը դառնանք անդեկլար խուժան հասարակութիւն մը:

Այսօր՝ բոլոր ժամանակներէ աւելի, մեր ժողովուրդի առօրեայ կեանքէն բխող հրատապ հարցերը բազմաթիւ են եւ կը սպասեն արդար լուծումի: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ հոգեւոր իշխանութիւնը եկեղեցականութիւնն է եւ սակայն վարչական-ժողովական կեանքի մէջ՝ կաթողիկոսներ, պատրիարքներ եւ առաջնորդներ գործադիր իշխանութիւնը կը ներկայացնեն եւ որեւէ օրէնսդրական յաւակնութիւն չեն կրնար ունենալ,



Եւ պէտք չէ ունենան, որովհետեւ օրէնքէ վեր ոչ մէկ իշխանութիւն գոյութիւն ունի եւ, դարձեալ, որեւէ հանգամանք պէտք չէ զիրենք մղէ ինքնիշխան դառնալու յանձնապատասխանութեան, որուն վերջին զոհերէն է, Ֆրանսայի Թեմի Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան: Բոլոր անոնք, որոնք կը փափաքին աւելին իմանալ, թող կարդան Նորվան Սրբազանի զգայացունց հրաժարականի մասին:

Նուիրապետական Աթոռներու գահակալներ, առաջնորդներ, կուսակրօն թէ ամուսնացեալ քահանայութիւն՝ հաշուետու են ազգին եւ անկէ ընտրուած ժողովներու: Որեւէ շեղում եւ օրինազանցութիւն անընդունելի է՝ ի՛նչ ձեւի չքմեղանքներ ալ յառաջ քշուին զանոնք արդարացնելու համար:

Երրորդ.- Անհասկնալի բայց իրաւ. սփիւռքեան թեմեր կարելի եղածին չափ կը փորձեն հեռու մնալ Մայր Աթոռի ոսնձգութիւններէն, որուն արձագանքը կը լսենք Ֆրանսայէն մինչեւ Անգլիա, Զուիցերիա, Պուլկարիա, Գանատա եւ այլուր: Մամուլի մէջ յաճախ կը կարդանք որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսեան կ'ուզէ բոլոր թեմերու վրայ տեսնել իրեն հլու-հնազանդ ծառայող եկեղեցականներ, որոնք, թէկուզ անգիտակ սփիւռքեան կառոյցներուն եւ Արեւմտահայերէնի, պատրաստակամութիւնը ունին յաջողցնելու իր ծրագիրները, այլ խօսքով՝ ղեկավարելու սփիւռքեան թեմերու նիւթական միջոցները: Մեկնաբանութիւնը կը թողունք մեր ընթերցողներուն:

Չորրորդ.- Նոյնքան անհասկնալի է այն իրողութիւնը որ մեր երկու պատրիարքական Աթոռներն ալ ո'չ միայն կը փորձեն հեռու մնալ Մայր Աթոռէն, այլեւ սառն են իրենց յարաբերութիւնները Էջմիածնի հետ: Պոլսոյ պարտիրաք Մեսրոպ Արքեպիսկ. Մուրաֆեանի 3 Նոյեմբեր 2000 թուակիր նամակը ուղղուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին խօսուն եւ փաստացի վկայութիւնն է այդ ցուրտ յարաբերութեան: Նոյնպէս՝ Երուսաղէմի վերջին պատրիարքական ընտրութիւններու առիթով, միջամուխ ըլլալու անյաջող փորձերը Ամենայն Հայոց Հայրապետին՝ շատ հաշտ աչքով չէին դիտուած Երուսաղէմի զինուորեալ միաբանութեան կողմէ, ինչպէս կ'արտայայտուին եւ կը վկայեն կարգ մը ծանօթ միաբաններ:

Հինգերորդ.- Կիլիկիա-Էջմիածին փոխ-յարաբերութեանց հարցը եւս մասնաւոր կերպով օրակարգի նիւթ դարձաւ յընթացս Ազգային Ժողովին, որ տեղի ունեցաւ Անթիլիասի Մայրավանքին մէջ տարւոյս Յունիս 13-15-ի օրերու ընթացքին, ուր Արամ Ա. Կաթողիկոս յայտարարեց. «Կրկին անգամ վերահաստատուեցաւ մեր Ս. Աթոռին յանձնառութիւնը՝ եղբայրական ոգիով շարունակել գործակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ, ի խնդիր մեր եկեղեցւոյ ու ազգի ներքին միասնականութեան պահպանման»: Հաւատա՞նք կատարուած շրթնային ծառայութեան, որ ոչ մէկ ձեւով կը համապատասխանէ իրականութեան: Ցեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին, բոլոր ժամանակներէ աւելի պարտաւոր ենք ցոյց տալ համերաշխութիւն եւ ներդաշնակութիւն՝ արդարօրէն համազգային ճիգերով պաշտպանելու եւ պահանջելու մեր արդար իրաւունքները:

Եւ վերջապէս, վերջին քսանամեակին, մեր հայրենիքին մէջ երեւան եկան նաեւ աղանդներ, որոնք փորձեցին եւ տակաւին կը փորձեն պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ, օգտուելով երկրին



ռամկավարական արդի քաղաքական պայմաններին: Դժբախտաբար մեզի կը պակսի համարձակութիւնը, Ռուս Եկեղեցւոյ հեղինակութեան ցուցաբերած քաջութեան նմանողութեամբ, ճակատաբաց յայտարարելու՝ թէ Հայաստանեայց Եկեղեցին բացարձակապէս կը մերժէ որեւէ ոտնձգութիւն եւ քրիստոնէական մարդասիրական անուան տակ կատարուած որեւէ մոլորեցուցիչ հաւատորսութիւն՝ որոնք կը հեռացնեն հայը իր պապերու հաւատքէն եւ Հայ Եկեղեցւոյ բազմաշարժար խորանէն, ո՛ր կրօնական-մարդասիրական կազմակերպութեան անունով ալ կատարուած ըլլան անոնք:

Ապահովաբար, մեր կատարած ախտաճանաչումները կրնան հաճոյ չթուիլ ո՛չ եկեղեցական բաժրաստիճան իշխանութեանց, եւ ոչ՝ ալ տիտղոսաւոր, շքանաշանակիւր ժողովականներու եւ ազգայիններու, որոնք սովոր են ուս թօթուել ու անցնիլ՝ “այսպէս ալ կ’ըլլայ, այնպէս ալ կ’ըլլայ”-ի հոգեբանութեամբ, գէշ մարդ չըլլալու “վարչագիտութեամբ”: Հայց. Եկեղեցին ամենէն ամուր կռուաններէն մէկն է ազգային մեր գոյութեան, եւ մեր ժողովրդական կարգերն են անոր ապառաժեայ խարխիւր: Վա՛յ մեզի, եթէ զայն ըմբռնենք լոկ որպէս ծիսական արարողութեանց վայր:

Եթէ Հայց. Եկեղեցին չկարողանայ ինքզինք պատշաճեցնել մարդկային ազատ մտածումին եւ ըմբռնողութեան գաղափարին, պիտի չկարենայ խաղալ իր մեծ դերը մարդկային հոգեմտաւոր եւ ընկերային կեանքի բոլոր մակարդակներուն վրայ

Ազգային Հրատապ Հարցեր

Առողջ Քննադատութիւնը Ճի՛շդ Ուղին Է

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Քննադատութիւն հասկացողութիւնը կամ եզրը, որուն «Ճերմակ-սեւ» երեւոյթներուն յաճախ անդրադարձած եմ

հրապարակագրական երկարամեայ ասպարէզիս մէջ, տակաւ սխալ ու թիւր կ’ըմբռնուի շատ-շատերու կողմէ:



Մարդիկ կան, որոնք կը սարսափին քննադատութենէն, ուրիշներ՝ կը խրտչին, ոմանք անհանդուրժելի կը գտնեն զայն, բոլորն ալ այն մտածում-համոզումը ունենալով, որ անիկա «փշրող-քանդող» մտրակ մըն է:

Թերեւս ոմանք (շատ քիչեր) կրնան իրաւունք ունենալ խորշելու կամ խուսափելու քննադատութենէն, սակայն ո՞վ ըսաւ որ անիկա օգտակար ու շահեկան չէ, երբ տեղին կը կատարուի, կառուցողական ու սրբագրողական նպատակով, այս կամ այն հարցին (անձնաւորութեա՞ն) անդրադառնալու պարագային:



Դժբախտաբար, մեր իրականութենէն ներս, Հայաստան թէ՛ Սփիւռք, ոչ ոք կը հանդուրժէ քննադատութեան, ոչ ոք կ'ընդունի զայն, ոչ ոք կ'ախորժի անկէ, մանաւանդ երբ մերկապարանոց, հատու ու խայթող է ան:

Մինչդեռ, մեր հայեցողութեամբ ու դատողութեամբ, քննադատութեան առողջ ու շինարար տեսակետը դեղամիջոց է, դարման է, մեր հասարակութեան եւ ընկերութեան մէջ գտնուող թերացումները, սխալագործութիւնները, սայթաքումները, անիրաւութիւնները, վերիվայրումները, այլանդակութիւնները, ուղղակի թէ՛ ոչ, գիտակցաբար թէ՛ ոչ, սրբագրելու, վերատեսութեան ենթարկելու կամ բառնալու:

Ինչո՞ւ իւրաքանչիւր քննադատական խօսքի կամ սլացքի առիթով, կը փնտռուի յետին միտք մը, անարդարութիւն մը կամ աժանութիւն մը, երբ «թիրախ» դարձող նիւթը արժանի է հրապարակային մատնանշումի, բացայայտումի ու քննարկումի, քննադատական համապատասխան մօտեցումով:

Ատկէ նպաստաւորուող ըլլալ թէ՞ ոչ եւ կամ՝ ատիկա օգտակար ըլլայ թէ՞ ոչ, եթէ նպատակը բարեկարգութիւնն է, սխալականը՝ վանել, անարժանը՝ հեռացնել, անպիտանին՝ չեզոքացնել, իսկ ամենէն կարեւորը՝ անարդարութիւնները պախարակել, իսկ ցեցերը՝ ոչնչացնել, ալ ինչո՞ւ բարդոյթանալ:

Դժուար է, բայց ոչ անկարելի, բարդ է, բայց ոչ անլոյծ, անշուշտ եթէ կ'ուզենք, առաւելագոյն կարելիութիւններով ու գերագոյն ճիգերով, մեր հայրենական ու սփիւռքեան կեանքին մէջ, նուազագոյնի իջեցնել տագնապները, փոքրագոյնի հասցնել պատեհապաշտները:

Իսկ այս բոլորը ինչպէ՞ս կրնան ըլլալ, եթէ ոչ քննադատական նշդրակով ու ճիպոտով, որոնք մի գուցէ, ցուցնող ու խոցող են, բայց, անպայմանօրէն, նաեւ զգաստացնող, հուսկ, վերագարթնող գիտակցութեամբ, բարեփոխող:

Քննադատութիւնը, իր ծառայողական, բարեկարգչական ու նորարարական յղացքներով, պէտք է նկատել անխուսափելիութիւն մը եւ ոչ թէ... ուրուական մը, որ կը դեգերի հոս ու հոն, զբաղելով բամբասանքներով, խժբժանքներով ու չարախօսութիւններով, պառակտիչ ու քանդիչ դերակատարութիւններ ունենալով:

Խօսքը երբեք չի վերաբերիր քննադատութեան այսպանելի յիշեալ տարբերակին, որ քիչ մը ամէն տեղ կայ եւ քիչ մը ամէն տեղ իր տխուր հետքերը կը ձգէ, այլ անոր որ՝ անհկա տիրող յոռիութիւնները պէ՞տք է թօթափել ու վերագարթօնքի մղէ, այժմու տխրահոչակ դերակատարները պէ՞տք է արմատախլէ եւ արժանաւորներով փոխարինելու պարտադրէ:

Քննադատութիւնը ա՞յս «առաքելութեան» պիտի ծառայէ, անայլայլ եւ անհաշուենկատ խոյանքներով ու միջամտութիւններով, ուր անաչառ եւ անկողմնակալ մօտեցումները կը մնան ի պատուի, այլապէս ահագանգ հնչեցնելով, անսաստողները՝ սաստելով, անկարգապահները՝ կարգաւորով, ապականութիւնները՝ հականեխելով, փտածութիւնները՝ վերացնելով:



Մփիւռքեան մեր գաղութային կեանքին ու գործունէութեան մէջ, ո՞ր չկան քննադատելի երեւոյթներ, կը պակսի՞ն քննադատելի պատասխանատուներ, աննշմարելի՞ են քննադատելի բացթողումներ, անտեղի՞ են քննադատելի բարքեր:

Բնական է՝ ոչ, հազար անգամ՝ ոչ, սակայն ո՞վ կ'ուզէ տեսնել զանոնք, ո՞վ ինքզինք կը նկատէ այդ դերակատարութեան մէջ, այնքան ատեն որ՝ քննադատութիւնը այդ երեւոյթներուն կամ դերակատարներուն նկատմամբ, իրենց իսկական ախտաճանաչումներով ու բնութագրումներով, բացառուած է, որովհետեւ կը դպնայ... արժանապատուութիւններու, կը վիրաւորէ... ինքնասիրութիւններ:

Մամուլը, օրինակի համար, չի՞ կրնար (իրաւունք չունի՞) քննադատելի երեւոյթները (ազգային, համայնքային, գաղութային, կրթական, մշակութային, ընկերային, քաղաքական, եւայլն) լուսարձակի տակ առնելու, իրենց լայնածիր, բայց հրատապ խնդիրներով:

Նոյն հետեւողութեամբ, ո՞վ կրնայ այս կամ այն առաջնորդին, ղեկավարին յիշեցնել իր «աչք ծակող» թերութիւնները, ապիկարութիւնները, արկածախնդրութիւնները կամ մենանշորհալիութիւնները, որոնք ոչ միայն կը ստուերեն ու կը վարկաբեկեն իր գլխաւորած կառոյցը, այլեւ՝ ազգային շահերը:

Ասոնք ամենէն աւելի թշուառականներն են, իրենց գաճաճութեամբ ու կարճատեսութեամբ, իրենց միջակութեամբ եւ ամլութեամբ, որոնք չեն կրնար դիմանալ նոյնիսկ... երազային քննադատութեան ահագնագոռութեան:

Կը կարծէ՞ք որ Հայաստանի պարագային պատկերը տարբեր է:

Քա՛ւ լիցի:

Պետական ո՞ր այրը, իշխանաւորը կամ աւագը կ'ընդունի նուագագոյն քննադատութիւն մը իր հասցէին, երբ մեծ մասին ուսերուն կայ ապօրինութիւններու ՀՄԿԱՅ թղթածրար մը, ոչ միայն անձնական, այլեւ պատասխանատուական մարզերէն ներս:

Անկախաբար կաշառակերութեան, փտածութեան եւ իւրացումներու պարագաներէն (որոնք հատորներ կը լեցնեն, ներհայաստանեան տուեալներով ու վկայութիւններով), ապա, ինչպէ՞ս բացատրել ընկերային-հասարակական կեանքին մէջ արձանագրուած, մեղմ ըսած, անհարթութիւնները, ժողովուրդին կարիքները չպաշտպանելու ու չհետապնդելու գնով (գէթ յիշելու համար՝ անպատասպարեալներու, գաղթականներու, անգործներու յամեցող գերխնդիրները):

Քննադատել թե՞՞ համրանալ:

Քննադատել թե՞՞ համակերպիլ:

Քննադատել թե՞՞ անգիտանալ:

Քննադատել թե՞՞ անտեսել:

Մեր կարծիքով, առաջինները՝ ՔՆՆԱԴԱՏԵ՞Ն, միշտ յոռին վերացնելու, իսկ յոռեգործը սաղմախեղդելու պայմանով:

Պէյրուք, Լիբանան

ՀԱԼԷՊԸ ԵՒ ՍԻՆԿԱՓՈՒՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԱՆՈՒԷԼ ՔԵՇԻՇԵԱՆ,

Հալէպ

- Ի՞նչ կ'անկալուի հովիւէ մը:

- Անշուշտ հօտին պաշտպանութիւնը նախ եւ առաջ:

Հովիւը նախ եւ առաջ հօտին պաշտպանն է, եւ զարմանալի պիտի ըլլար, եթէ ամէն ճիգ ի գործ չդնէր պահելու ամբողջ հօտը, եւ եթէ այդ հօտը որեւէ պատճառով սկսած է տարտղնուիլ, ապա ինք պիտի փորձէ անպայման ետ հաւաքել բոլորը մէկ յարկի տակ,



նոյնիսկ եթէ հօտին մէկ մասը հարազատ բայց «այլ» տան մը մէջ ապահով վիճակ ունի, որովհետեւ հովիւը ամէն պարագայի պարտաւոր է հօտին ԱՍԲՈՂՋՈՒԹԵԱՆ մէջ փնտռել անոր հաւաքական ապահովութիւնը...

Անշուշտ բոլորս, ամբողջ հայութեան մասին է խօսքը, մեր հաւաքական ապահովութիւնը կրնանք գտնել միայն մեր հայրենիք Հայաստանի մէջ, սակայն

ոչ ի զին գաղութներու խուճապահար փախուստին, որովհետեւ հարցը հոս միայն ՀԱՅ ԱԶԳԻ գոյատեւումը չէ, որն ապահովված է, փառք Աստուծոյ, որովհետեւ եթէ սփիւռքեան բոլոր գաղութներն ալ անէանան, Հայաստանի մէջ պիտի շարունակուի ազգին գոյատեւումը:

- Պէ՞տք է բոլորս հաւաքուինք Հայաստանի մէջ:

- Անշուշտ:

- Ուրեմն ինչո՞ւ այս աւելորդ «փիլիսոփայախօսութիւնը»:



- Մտորել փորձելուս առիթը Հալէպի (եւ ոչ միայն Հալէպի) Հայ Աւետարանական համայնքի համայնքապետ Յարութիւն Սելիմեան վերջերս Հայաստանի «Առաջին Լրատուական»ի հետ ունեցած զրոյցի մը ընթացքին ըսածն էր.

«Պետք չէ քաջալերել սիրիահայերին, որ նրանք իրենց կյանքը շարունակեն Հայաստանում թեկուզ երբեմն ընկերային կյանքի մեջ տկար չափորոշիչներով Սիրիայից դուրս: Նրանք պետք է վերադառնան Սիրիա, եւ սիրիահայությունը պետք է վերագտնի իր կենսունակությունը Հալէպում: Մեր եկեղեցիները, տները, գործարանները, դպրոցները պետք է վերականգնվեն, պետք է դուրս գալ «շտապօգնության» հոգեբանությունից եւ ունենալ վերականգնողական հոգեբանություն...»:

Այս համարձակ եւ անկեղծ հրաւեր-մարտահրաւեր-արտայայտութիւնը ընդվզեցուցած էր, անկեղծօրէն ընդվզեցուցած էր շատեր: Ինչպէ՞ս թէ, Վերապատուելին ո՞վ է որ ինքզինքին իրաւունք կու տայ առաջարկել սուրիահայերուն Հայաստանի մէջ չտեղաւորել:

- Բայց որո՞նք իրաւունք ունին համայնքներու ներկային եւ ապագային մասին առաջարկութիւններ ընել:

- Անշուշտ բոլորը, անոնց շարքին՝ նաեւ համայնքապետերը:

Ինչպէս բոլոր ժողովուրդները, մենք հայերս ալ մեր ղեկավարներուն մօտ նախ եւ առաջ կը փնտռենք անձնական շահ, ահա թէ ինչու վերապատուելին առաջարկը կը դիտուի այդ դիտանկիւնէն եւ խօսքը ընդհանրացուելով մեր ղեկավարները կը մեղադրուին իշխանամոլութեան մէջ.

Մօտաւորապէս կ'ըսուի՝ «անշուշտ անոնք պիտի ուզեն, որ համայնքը մնայ, որպէսզի չկորսնցնեն իրենց իշխանութիւնը»...

- Եթէ քիչ մը աւելի լրջանանք, ասկէ միամիտ կարծիք դժուար թէ արտայայտենք: Սուրիահայ ղեկավարները (ոչ միայն եկեղեցական, առաւել եւս եկեղեցական), քիչ մը ամէն տեղ կրնան պահել իրենց դիրքն ու իշխանութիւնը, առաւել եւս ունենալ ապահով կեանք: Այստեղ պարզապէս հարկ կը տեսնեմ արձանագրել, որ մեր համայնքապետերը պայթող ռումբերուն դէմ նոյնպէս ապահովութիւն մը չունին, անոնք կ'ապրին իրենց ժողովուրդին հետ՝ կրակի գիծին վրայ, եւ իրենց ՎԱՐՔՈՎ ու ՕՐԻՆԱԿՈՎ կը գօտեպնդեն ժողովուրդը՝ խուճապի չեն մատնուիր, իրենց հետ նաեւ իրենց հօտը խուճապի չի մատնուիր: Պիտի արձանագրեմ նաեւ, որ երբ Վերապատուելին այս խօսքերը կ'արտասանէր, իր դպրոցին դասասենեակներուն վրայ արկեր կ'իյնային, դպրոցին մէջ, եկեղեցոյ կից, իր բնակարանին մօտիկը... Իսկ ինք կը խօսէր եւ կը խօսի վերականգնումի մասին, եւ կ'ուզէ որ վերականգնումի պահուն սուրիահայերը վերադառնան, վերականգնումի պահը երբ գայ, եւ ոչ թէ ԱՅՍՕՐ՝ երբ դեռ ռումբերը կը տեղան, երբ մեր տնտեսութիւնը քայքայուած է, իսկ մինչ այդ Սուրիա մնացած հայերը կը պահպանեն մեր ունեցուածքը: Այո՛, հոս մնացողները, որոնց մէջ քիչ չէ թիւը նաեւ անոնց, որոնք կրնային երթալ, բայց նախընտրեցին մնալ, եւ կ'աշխատին իմաստաւորել իրենց հոս մնալը՝ տէր կանգնիլ փորձելով մեր ազգային արժէքներուն, մեր միութիւններուն, մեր դպրոցներուն,



եկեղեցիներուն, կը փորձեն իրենց հոս մնալուն իմաստը գտնել նաեւ իրար օգնութեան ձեռք մեկնելուն մէջ...

Սուրիան՝ Հալէպը եթէ կորսնցնենք որպէս գաղութ, կորսուելու վտանգին առաջ կը կանգնի Սփիւռքի արեւմտահայ դիմագիծը. չէ՞ որ մանաւանդ լիբանանեան քաղաքացիական պատերազմէն ետք, Հալէպն է Արեւմտահայ Սփիւռքին (այսօր արդէն երկու Սփիւռք կայ, երկրորդը Արեւելահայ)՝ մշտապէս հայկական արիւն ներարկողը Մայր գաղութն է մայրենիի ուսուցիչներ, թերթերու խմբագիրներ, հայախօս սերունդներ հասցնողը գրեթէ բոլոր գաղութներուն։ Միւս կողմէ, խուճապահար Հայաստան տեղափոխուելով չենք կրնար սատարել Հայաստանի տնտեսական զօրացման, չէ՞նք տեսներ, որ հայրենի պետութիւնը ապաստանեալ սուրիահայերուն բնակարանով ապահովելու համար կը դիմէ բարեգործներու եւ նուիրատուներու. չենք կրնար օգնել Հայաստանի մարդկային թիւի զգալի աճին նաեւ, ընդհակառակը՝ կրնանք ծանրացնել անոր արդէն ծանր տնտեսական վիճակը, որուն պատճառաւ ամէն տարի ամբողջ սուրիահայերուն քանակի չափով հայեր կը լքեն իրենց եւ մեր հայրենիքը։

Ահա պատճառներ, որոնք կը ստիպեն Վերապատուելիին ըսել, թէ Հայաստան ԱՊԱՍՏԱՆԱԾ եւ ոչ թէ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ սուրիահայերը պէտք է վերադառնան Սուրիա։

Ծայր աստիճան դժուարին տարի մը անցուցինք։ Մեզմէ շատեր հեռացան, մեծ մասը Հայաստան, ուրկէ շատեր կը փորձեն հեռանալ դէպի եւրոպական երկիրներ։ Ոչ մէկը այպանելու, մեղադրելու, կամ ոեւէ մէկ անհատի արարքը քննարկելու իրաւունք չունինք։ Սակայն հաւաքական վարքագիծ մը պէտք է ունենանք, իսկ մեր հաւաքականութեան ղեկավարները, ինչպէս բոլորը, իրաւունք ունին իրենց մտածելակերպը բարձրաձայնելու։

Հարիւր տարի Սփիւռքի մէջ չենք յաջողած միասնական ռազմավարութիւն մը որդեգրել։ Միակ դիրքինը՝ «դժուար է, անկարելի է» ըսելն է, աւելի դիրքինը՝ «որովհետեւ հեռատես ղեկավարներ չենք ունեցած» ըսելն է։

Մտորենք՝ այսօր սուրիահայութիւնը ըլլալ-չըլլալու պայքարի՞ մէջ է, երէկ իրաքահայութիւնն էր, լիբանանահայութիւնը... Վա՞ղը.. ո՞վ գիտէ։ Միշտ անպատրաստ եղած ենք։ Դժուար, շատ դժուար տարի մը անցուցինք, բարեբախտաբար առանձին չէինք, աշխարհի ամբողջ հայութիւնը սուրիահայերուն հետ կը տառապէր, իսկ ամենաանքուն գիշերները հաւանաբար մեր համայնքապետերը անցուցին...

Հիմա նստած եմ մեր դպրոցի բակին մէջ, աշակերտները, որոնք ամբողջ տարին արկերու պայթիւններու եւ փամփուշտներու սուլոցին տակ դպրոց յաճախեցին, իրենց հետ դպրոց բերելով լուսաստու լապտերիկները... լիցքաւորելու դպրոցի ելեկտրականութիւն հայթայթող մեքենայէն (generator), որպէսզի գիշերը անոր աղօտ լոյսին տակ կարենան քիչ մը դաս սորվիլ... Հիմա այդ աշակերտները աւարտելէ ետք պետական պրովէի քննութիւնները շուրջս նստած են եւ մենք աւարտական հանդէսի պատրաստութեան մէջ ենք... Կը նայիմ շուրջս, կը դիտեմ մեր դպրոցին եւ միութեան նորակառոյց հոյակապ շէնքը... Այսօր ինչպէս միշտ հզօր եւ ոչ թէ լալկան սփիւռք մը կրնայ ինչպէս հարկն է զօրավիգ կանգնիլ Մայր հայրենիքին, որուն բոլորս ալ նախապատուութիւն կու տանք անկասկած... Իսկ Հայաստան

պետք է երթանք, անպայման, բայց պետք է երթանք կազմակերպուած որպէս ներգաղթող, որպէս հայրենադարձ... առանց թողլքելու մեր սեփական ինչքն ու ազգային հարստութիւնը...

Միլիոնաւոր Մարդիկ Դիտեցին Հայոց Ցեղասպանութեան Մասին Եզիպտական Ժողովրդական Զրոյցը

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

Եզիպտոսի նախագահ Մոհամետ Մուրսիի տապալումէն ի վեր Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան խիստ քննադատաբար կ'արտայայտուի նոր կառավարութեան մասին՝ պահանջելով իր իսլամական գործընկերոջ՝ Մուրսիի իշխանութիւն վերադարձը:

Նկատի առնելով Էրտողանի անբաղձալի միջամտութիւնը Եզիպտոսի ներքին գործերուն՝ միլիոնաւոր եզիպտացիներ իրենց զայրոյթն ու դժգոհութիւնը արտայայտած են Թուրքիոյ եւ անոր վարչապետին դէմ: Եզիպտական թերթերը լի են հակաթրքական գրութիւններով եւ խմբագրականներով: Տասնեակ յօդուածներ կը հրապարակուին՝ դատապարտելով Հայոց ցեղասպանութեան նկատմամբ թրքական ժխտողականութիւնը եւ յորդորելով Եզիպտոսի նոր ղեկավարները՝ ճանչնալու Ցեղասպանութիւնը: Նաեւ կոչեր կը հնչեն՝ Գահիրէի մէջ Հայոց ցեղասպանութեան նուիրում յուշարձան տեղադրելու եւ Թուրքիոյ ուղղուած պահանջներ՝ հայոց զոհերուն համար փոխհատուցում վճարելու: Եզիպտոսի Ժողովրդական ճակատ հիմնարկի ղեկավար, փաստաբան Մոհամետ Սաատ Խէյրալլա, աննախադէպ քայլ առնելով, դատական հայց ներկայացուցած է՝ Թուրքիան մեղադրելով հայերուն դէմ գործած ցեղասպանութեան համար:



Խէյրալլա եւ Գահիրէի համալսարանի միջազգային իրաւունքի փրոֆեսէօր, տոքթ. Այման Սալամա Սեպտեմբեր 4-ին եղան հիւրերը Լիւիան Տաուտի "Մուրա քամիլա" (Ամբողջական պատկերը) նշանաւոր յայտագիր-զրոյցին, <ՕՆ> պատկերասփիւռի կայանէն, որուն կը հետեւին միլիոնաւոր ակնդիրներ՝ Եզիպտոսի եւ ամբողջ արաբական աշխարհին մէջ: Զրոյցին հեռաձայնով կը մասնակցէին նաեւ Թուրքիոյ խորհրդարանի նախկին երեսփոխան, Էրտողանի իսլամական Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան անդամ Ռեսուլ Թոսունը եւ "Քալիֆորնիա Քուրիեր" թերթի հրատարակիչ Յարութ Սասունեանը: 36 վայրկեան տեւած հաղորդումը կը կատարուէր արաբերէնով, զոր եւ հազուադէպօրէն կ'օգտագործեմ մանկութեանս տարիներէն ի վեր:



Փրոֆ. Սալամա ակնդիրներուն տեղեկացուց, որ 1919 թուականին Թուրքիոյ ռազմական դատարանը մեղադրած էր Հայոց ցեղասպանութեան պատասխանատու ռճրագործները: Տասնեօթը թուրք պաշտօնեաներ մեղաւոր նկատուած էին, իսկ երեքը կախաղան բարձրացուած էին: Տոքթ. Սալամա նշեց, որ Ֆրանսան, Բրիտանիան եւ Ռուսիան 1915 թուականին հանդէս եկած էին միացեալ հռչակագիրով՝ նախազգուշացնելով, որ իրենք պատասխանատու պիտի նկատեն թուրք ղեկավարները՝ հայերը կոտորելու եւ "մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ յանցագործութիւններ" կատարելու համար:

Փաստաբան Խէյրալլա պնդեց, որ Հայոց Ցեղասպանութեան հարցին բարձրացումը Եգիպտոսի մէջ երկար ժամանակէ ի վեր հասունցած է եւ որեւէ քաղաքական ենթաիմաստ չունի: Ան յոյս յայտնեց, որ իր բացած դատը պիտի ստիպէ Եգիպտոսը՝ "Մերձաւոր Արեւելքի մէջ սիւննի մահմետական մեծագոյն պետութիւնը" ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը՝ օրինակ ծառայելով արաբական այլ երկիրներու:

Խէյրալլա յայտարարեց, որ իր հայցը եգիպտական դատարանին կողմէն պիտի քննուի Նոյեմբեր 5ին: Ան յոյսով է, որ դատարանը պատմական որոշում պիտի կայացնէ "մարդու իրաւունքներու" այս կարեւորագոյն հարցին վերաբերեալ:

Երբ հաղորդավարը հարցուց, թէ ի՞նչ է իմ կարծիքս եգիպտական դատական հայցին մասին, ես մեծ գոհունակութիւն արտայայտեցի՝ յուսալով, որ դրական դատավճիռ կը տրուի Հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի նախօրէին, եւ ըսի, որ անհամբեր կը սպասեմ Եգիպտոսի կառավարութեան կողմէ Ցեղասպանութեան ճանաչման:

Նաեւ նշեցի, որ Էրտողան ինքզինք կարգած է իբրեւ Մերձաւոր Արեւելքի նոր սուլթան եւ բոլոր մահմետականներու, արաբներու ու պաղեստինցիներու միակ պաշտպան: Սակայն Էրտողանին խեղաթիւրումները վերջապէս բացայայտուեցան, երբ արաբական աշխարհը հասկցաւ, որ ան պարզապէս կը փորձէ իշխել տարածաշրջանի մէջ՝ հետապնդելով Թուրքիոյ, եւ ոչ թէ արաբներուն եւ մահմետականներուն շահերը:

Թուրքիոյ խորհրդարանի նախկին երեսփոխան Ռեսուլ Թոսուն, ծրագիրին միանալով հեռաձայնով, անմիջապէս իր դէմ տրամադրեց դիտողները, պնդելով, որ՝ "ներկայիս եգիպտական կառավարութիւնը, որ իշխանութեան տիրացած է ռազմական յեղաշրջման միջոցով, օրինական չէ, ուստի ներկայացուած հայցը չի կրնար օրինական նկատուիլ": Թոսունը շարունակեց թութակի պէս կրկնել իր թուրք ղեկավարներուն անհիմն ժխտումները Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ:

Փրոֆ. Սալաման, զայրացած Թոսունի ելոյթէն, Էրտողանը կոչեց " իրաւայաջորդը օսմանեան մարդասպաններու, որոնք գործադրած են Հայոց ցեղասպանութիւնը":

Այնուհետեւ հաղորդավարը հարցուց, թէ ի՞նչ է իմ արձագանգս Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ Թոսունի արտայայտած աղաւաղուած տեսակէտներուն նկատմամբ: Ես ակնդիրներուն յիշեցուցի, որ Քեմալ Աթաթուրքը "Լոս Անճելես Էքզէմինըր" թերթին մէջ 1 Օգոստոս 1926ին հրապարակուած հարցազրոյցի մէջ պահանջած էր, որ երիտթուրքերը "հաշիւ տան կեանքին համար մեր միլիոնաւոր քրիստոնէայ հպատակներու, որոնք

դաժանորէն եւ զանգուածաբար քշուեցան եւ կոտորուեցան": Ես նաեւ յիշեցուցի, որ Ազիզի շէյխը՝ Գահիրէի մէջ գործող իսլամական հետազօտութիւններու համաշխարհային նշանաւոր կեդրոնին առաջնորդը, 1909 թուականին արձակած է կրօնական հրամանագիր (ֆաթուա) մը, որով դատապարտած է թուրք պաշտօնեաները Կիլիկիոյ Ատանա քաղաքին մէջ 30 հազար հայերու կոտորածին համար:

Յայտագիր-գրոյցի աւարտին փաստաբան Խէյրալլա յայտարարեց, որ շուտով հանրահաւաքներ տեղի պիտի ունենան ցոյց տալու համար, որ իր խումբին բարձրացուցած դատը կը բխի համաժողովրդական պահանջէ, եւ որ եզիպտացիները կը պահանջեն իրենց կառավարութենէն "ճանչնալ, որ հայերը կոտորուած են թուրք ոճրագործներու ձեռքով":

Լիբանանը առայժմ միակ արաբական երկիրն է, որ ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը: Եթէ Եզիպտոսը հետեւի անոր օրինակին, արդեօք կարելի՞ է, որ Սուրիան եւ միւս արաբական երկիրները անոնցմէ ետք շատ չուշանան:

Ահա այդ ծրագրի յղումը.

Թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱԻԱԳԵԱՆ

Արեւմտահայերէնի վերածեց՝

«Եռագոյն» կայքէջը



<http://www.youtube.com/watch?v=teAKr6Psl0>

«Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է» (Մադնոս 115)

«Ոմն տաճկացեալ վարդապետ կոչեցեալ »

(Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի)

Հայ հաւատացեալին մի անգամ եւս շնորհուում է առիթը՝ յիշելու եւ խօսելու հայ հոգեւորականի «հանեսողեան» արարքի համար: 1930 թ. Երեւանի քաղաքի խորհրդի նախագահ Գ. Հանեսողեանը քանդել տուեց Աբովեան փողոցում գտնուող 7րդ դարի Ս.Պօղոս-Պետրոս եկեղեցին: Մեղադրել Հանեսողեանին, որ նա տգէտ է ու գռեհիկ, չի հասկանում եկեղեցական կառոյցի արժէքը, դժուար չէ: Սակայն այդ կիսագրագէտ տգէտին չէ՞ որ նշանակել էին Երեւանի քաղաքագլուխ: Եւ ահա, նա ցանկանում է այնպիսի մի արարք կատարել, որ իրենից յետոյ մարդիկ երկար յիշեն ու խօսեն իր գործած «սխրանքի» մասին: Ոչ թէ ստեղծել, կառուցել, արարել, այլ շուտափոյթ քանդել-ոչնչացնել, ընդհանրապէս ջնջել երկրի երեսից դարեր առաջ ժողովրդի հանճարով ստեղծած ճարտարապետական կոթողը: Այո, պատմութեան մէջ հանեսողեաններն էլ են յիշուում, բայց յիշուում են անէծքով ու նզովքով (Ստեփան Ստեփանեանց, Հայ Առաքելական եկեղեցին Ստալինեան բռնապետութեան օրոք, Եր., 1994, էջ.81): Հայ եկեղեցին այսօր ունի իր նորօրեայ «հանեսողեանները»:



Եկեղեցին, իբրեւ աստուածային հաստատութիւն, ունի իր յաւիտենական սկզբունքները, որոնցից չպէտք է շեղուել երբեք: Որեւէ եկեղեցական, կաթողիկոսից բռնած մինչեւ եկեղեցու դռնապանը, իրեն իրաւունք չպիտի վերապահի պատահական հովերին՝ առաքաստ բանալով եկեղեցու նաւը ալեկոծութեան մատնել:

Անհատական նախաձեռնութեամբ «բարեկարգութեան» մանկունակ փորձերը եկեղեցու մէջ անկարգութիւն եւ անիշխանութիւն են առաջացնում՝ այն քայքայելու աստիճան: Հայաստանեայց Եկեղեցու դարաւոր, նախանձելի եւ պատկառելի աւանդութիւններն անլուրջ եւ անխոհեմ արարքներից պէտք է պաշտպանել՝ նրա տեւականութեան եւ բարգաւաճման սիրոյն: Հայ եկեղեցականը պէտք է իր ուժն ու կորովը դնի ուղիղ վարելու իր ակօսը եւ զգուշանայ «յաջ եւ յահեակ խոտորելով. զառաջնոցն մեղանչելով. եւ վերջնոցն չար նշուակ գոլով» (Ժամագիրք): Իր ձեռքը հոգեւոր մաճի վրայ դնող մշակը պէտք չունի ոտքի տակ պատուանդան դնելու: Եթէ ունի ծառայելու կոչումը, պէտք է խթանի զինքը դէպի գործ եւ ոչ թէ նուիրուի իշխելու եւ տիրելու սին փառամոլութեանը:

Փառամոլութեան կիրքը շատ եկեղեցականների գահավէժ ամկումի պատճառ է եղել: Փառամոլութիւնը, որ դատապարտելի յատկանիշ է, քառիցս դատապարտելի կը դառնայ, երբ մի առաջնորդ չի վարանի անուղիղ եւ անխոստովանելի միջոցներ կիրառել՝ գոհացնելու



համար իր անյագուրդ ցանկութիւնները: Աշխարհիկ տէրերից ետ չեն մնում նաեւ հոգեւոր տէրերից շատերը, որոնք փարիսեցիների նման «մորթովք ոչխարի իբրեւ զգայլ արաբացի ծածկէն զգարշտութիւնս իւրեանց եւ անողորմաբար արձակին ի վերա հօտին Քրիստոսի»: Մի առաջնորդի արհամարհական ու բռնակալական վերաբերմունքի հիմքում ընկած է չար նախանձի եւ վեհութեան պակասի զգացումը: Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի ականաւոր աստուածաբան վարդապետը գրում է. «կամիս խոնարհեցուցանել զամենեսեան քեզ, խոնարհեցո զքեզ, քանզի թուի ինձ, թէ ոչ միայն մարդ խոնարհի խոնարհին, յայլ թէ ոչ իցէ յանդգնութիւն յասելս, թուի թէ Աստուած եւս խոնարհի խոնարհին» (Գիրք Մրբագնագործութեան, էջ. 258): Մի առաջնորդ, որ ստախօսութիւնը համարում է առաքինութիւն եւ այն կիրառում իր գործունէութեան մէջ, օգտակար եկեղեցական չի կարող լինել եւ պէտք է զրկել նրան հոգեւոր ծառայութիւնից ճիշդ այնպէս, ինչպէս ինքն անարդարօրէն նենգապէս պաշտօնից հեռացնում է քահանային: Առաջնորդի անպաշտպանելի արարքի պաշտպանութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, դժբախտաբար նոյնքան անընդունելի է: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակութիւնը այնքան թուլացել է, որ ի վիճակի չէ նոյնիսկ պաշտպանելու հոգեւոր ծառայութիւնից քահանաժօրէն, անիրաւաբար հեռացնած քահանային՝ իր նուիրեալ հոգեւոր աշխատանքից. «պարզապէս անոր համար,որ անոնց ներկայութեան ու նուիրեալ աշխատանքին մէջ վտանգ կը տեսնուի» [Ն.Ս.Օ.Տ.Տ.Վազգէն Ա, Վաւերագրեր]: Այսօր Լոնտոնի համայնքը զրկուած է իր ծխատէր քահանայից եւ եկեղեցուց, որովհետեւ եկեղեցու բարերարն ունի համարձակութիւնը, ըստ Լոնտոնի առաջնորդին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրահանգելու, որ «եկեղեցին ինձ է պատկանում եւ ես կ'որոշեմ այդ եկեղեցու հոգեւորականի ով լինելը»: Եթէ Հայոց եկեղեցու գերագոյն պէտքը, իր կողմից նշանակուած առաջնորդը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատած կանոնադրութեան համաձայն, օրինական կերպով ընտրուած Համայնքային եւ Եկեղեցական խորհուրդը չի կարող պաշտպանել իր ընտրած հովուին, ուրեմն մեր եկեղեցին դարձել է ծաղրանքի հաստատութիւն: Մի բարերար, որ յանդգնում է կաթողիկոսին, օրինականօրէն ընտրուած եկեղեցական համայնքային մարմնին ստիպել կատարել իր քահանայքը, արժանի չէ «բարերար» տիտղոսին: Մէկը պէտք է, որ մեր նորօրեայ բոլոր «բարերար» կոչումին ցանկացողներին յիշեցնի անցեալի հայ մշակոյթի, եկեղեցու եւ ազգի բազմահազար երախտաւորների աղօթքը. «ի հալալ արդեանց իմոց ետու սուրբ եկեղեցիս նուէր, եւ մի ոք իշխեսցէ զսա հեռացուցանել կամ ծախելով, կամ գրաւելով, կամ իւր սէպիականելով. Եւ որ յանդգնի մասն զՅուդայի առցէ, եւ զխաչանուացն, եւ զհերձուածողացն զԱրիոսին եւ զՆեստորին, եւ նմա թողութիւն մի լիցի կամ փրկութիւն, ոչ ի յայս կեանքս եւ ոչ ի հանդերձեալն, ամէն,եղիցի» [Յիշատակարան «Մաշտոց»,Ձեռ. Համար 4787]:

Ժնեւի,Նիսի,Մարսելիայի,Գանատայի եւ վերջերս Լոնտոնի եկեղեցական եւ համայնքային կանոնադրութիւնների նկատմամբ ցուցաբերած զուարթաբարոյ վերաբերմունքը պէտք է մտահոգի ամէն հայի եւ յատկապէս Հայաստանեայց եկեղեցու եպիսկոպոսական դասին, որի ամդամները բաղկացած են 57 եպիսկոպոսներից եւ ընդ որում 27-ը կրում են Արքեպիսկոպոսի աստիճանը: Մինչդեռ Աւետարանը յուսադրում եւ խրախուսում է նրանց, որ «հալածեալ իցեն վասն արդարութեան», բայց նաեւ դատապարտում եւ նախատում է նրանց բոլորին, որ «ապշտութիւն ունի զսիրտ ձեր, աչք զոն եւ ոչ տեսանէք, ականջք են եւ ոչ



լսէք»։ Յիսուսի այս բանադրանքը վերաբերում է Հայ եկեղեցու եպիսկոպոսական դասին։ Ամենայն Հայոց կաթողիկոսը ոտնահարում է մի արքեպիսկոպոսի արժանապատուութիւնը, գետնին հաւասարեցնում եկեղեցու ամենահին պաշտօններից մէկը օտարերկրեայ մի օղակայարանի սպասասրահում, անարգանք է նաեւ Հայ եկեղեցու ողջ հոգեւոր դասին։ Ամենայն հայոց Կաթողիկոսի բարձրացրած ճիշդ, թէ Ֆրանսիական դատարանի կողմից յանցագործութեան մէջ դատապարտուած «Վաչէ քահանայի [Հայրապետեանի] սքեմը իմ պատիւս է, քուկդ ալ պէտք է ըլլայ, իւրաքանչիւր հայ եկեղեցականինը պէտք է ըլլայ», ցուցաբերում է շշմելի աստիճան կողմնապահութիւն։ Մինչդեռ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատրաստ է ամեն գնով պաշտպանել Լոնտոնի ստախօս, նենգամիտ եւ նախանձով տառապող առաջնորդին՝ ի գին տեղի հոգեւոր հովուին եւ անպատուել նաեւ Ֆրանսիայի Հայրապետական պատուիրակ եւ առաջնորդ արքեպիսկոպոսին, որովհետեւ վերջինս ի վիճակի չէ պաշտպանելու մի քահանայի, որ դատական հետապնդումի տակ է։ Այս հոգեւորականին վայել կեցուածք չի։

Շահապիվանի ՇՀԱ կանոնը սահմանում է. «Եթէ եպիսկոպոս ոք գտի ի պղծութիւն կամ զինչ ի վատթար գործս եւ զառաքելական զպատիւն եւ սուրբ աթոռն անարգեաց, այսպիսումն ասէ գիր. Ընդ գողս ընթանայիր եւ ընդ շունս դնէիր զբաժին քո» (Սաղմոս ԽԹ.18) եւ վկայութեամբ ի յայտ եկեաց՝ յաթոռոյն եւ յիշխանութենէն մերժեցի ... «Զի մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ» (Սաղմոս ԽԸ.13)։

Հայ եկեղեցու իշխող դասակարգը որդեգրել է «Արեւ արքային» վայել «Եկեղեցին այդ ես եմ» հանրայայտ կեցուածքը։ Հայ եկեղեցու մեծաւորները վարում են ըստ այն սկզբունքին «թէ որպէս ունէի իշխանութիւն ի տալն, նոյնպէս ունիմ եւ յառնուլն»։ Բայց այդպէս չէ իրականութիւնը. «Այլ եւ ես անարժանս յանդգնիմ, թէ եւ անզգամութիւն է, Աստուած որ է էստեղծ զարարածս, ոչ կարէ առանց իրաւանց եւ պատճառանաց առնուլ զկարգս եւ զաստիճան, զորս տուեալ է, թէպէտ անհուն է զօրութեամբ»։ Հայ աստուածաբանութեան քաջագիտակ Յովհաննէս Զուղայեցիին այսօրուայ յետադէմ կղերականների դիրքը որակել էր որպէս «անզգամութիւն» ու «յանդգնութիւն»։ Նա պաշտպանում է քահանայական ձեռնադրութիւնը հետեւեալ յանդուգն եզրակացութեամբ. «Եթէ Մեծն աստուածն անգամ մարդուն պարգեւատրելիս ու պարգեւազրկելիս իրաւունք չունի ու չի կարող գործել անձնիշխանաբար, ապա այդ իրաւունքից զուրկ են առաւել եւս երկրային «աստուածները»՝ լինեն դրանք Էջմիածնի կաթողիկոսները, արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները»։ Նա իր խօսքն ուղղելով հայոց կաթողիկոսին, գրում է. «...Մի քեզ համարեցես զտալն եւ զառնուլն, վասն զի կարի յիմարութիւն է ցասելն, ես ետու եւ ես առնում... աղաչեմ հայեաց ի զուխս քո եւ արա, որպէս նա արար եւ գործեա, որպէս եւ ասացն. ոչ իմ տալ, նոյնպէս եւ տնտեսիդ Աստուծոյ պարտ է զայս ասել եւ բարբառել եւ ոչ յանձնէ ինչ վարկանել»։ Քրիստոնէական կրօնքի մեծագոյն ներդրումը մարդկային բարոյական վարուելակերպի ոլորտում, պաշտպանումն էր մարդ անհատի՝ ընդդէմ կամայականութեան ու անձնիշխանութեան, որով կոպտօրէն տրորւում ու ոտնհարւում էին մարդ անհատի իրաւունքները։ Հրաժարականը յանձնող Գերաշնորհ Նորվան Արք. Զաքարեանի այս խօսքերը. «Հայ առաքելական եկեղեցւոյ բարեկարգումը եթէ միայն ուղենիշ է կամ կանոնադրութիւն, նպատակը եթէ միայն վարչական կարգապահութիւն երաշխաւորելն է,

ապա Հայոց Մայրավանքի մէջ բացակայ է շնորհքի եւ սիրոյ մթնոլորտը, յոգնեցուցիչ է անհատի պաշտամունքը» դառը փորձից ելնող համարձակ ու լուսաւոր խորհուրդ է:

Իսկապէս յոգնեցուցիչ է հայ հաւատացեալի համար ականատես լինել «պիզնես»ի հոգեբանութիւն ունեցող առաջնորդների եւ նրանց անկուշտ անձնապաշտութեան կարեկցանքին:

Դկ. Տ.Ներսէս աւագ քին.Ներսեսեան

Նախկին հովիւ Ս.Եղիշէ եկեղեցու

Լոնտոն

18.07.2013

ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

ՈՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ...ՎԵՐԱԴԱՐՁ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆ



Կիպրոսի Յունաց Չատկուան արձակուրդը եւ հայկական-յունական Չատիկներու հինգ շաբթուան տարբերութիւնը այդ տարի, 1986-ին, Նիկոսիոյ «Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Երգչախումբ»-ին համար ի վերջոյ ընծայած եղան պատեհ առիթը ատենէ մը ի վեր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութենէն ներկայացուած պաշտօնական հրաւերին ընդառաջելու եւ Մայիս ամսուան սկիզբը Սուրբ Քաղաք մեկնելու, հին տոմարով նշուող տեղւոյն հայոց Չատկուան տօնախմբութիւններուն մասնակցելու համար:



Երգչախումբը, թէեւ ոչ իր լրիւ կազմով, այսուհանդերձ քառասուն անդամներով եւ իրեն ընկերակցող նոյնքան մըն ալ Կիպրահայ ուխտաւորներով ճամբայ ելաւ դէպի ԹԷԼ-Ավիվ, 1 Մայիսին, Երուսաղէմ ժամանեց երեկոյեան ուշ ատեն եւ հաստատուեցաւ Ս. Յակոբայ վանքին կողմէ տրամադրուած ժառանգաւորաց Վարժարանի շէնքին մէջ: Ուխտաւորները տեղաւորուեցան հին քաղաքէն դուրս, Ձիթենեաց Լեռ-ան մօտ Ալքազար պանդոկը:

Տեղին է նշել որ թաւական թարգմանիչներ ծագեցան ԹԷԼ-Ավիվի օդակայանին մէջ: Լիբանան ծնած թայց կիպրահայատակութիւն ստացած կարգ մը անդամներու մուտքը կարծուածին չափ հեզասահ չընթացաւ: Ընդհակառակը կողմնակի սենեակներու մէջ երկար-թարակ հարց ու փորձի ենթարկուեցան, նեղութիւն պատճառելու աստիճան մինչեւ որ ստուգուի անոնց «մաքուր» ըլլալը եւ արտօսուի մուտքը՝ Իսրայէլ: Ո՛չ մեր հայկական ծագումը, ո՛չ մեր այցելութեան նպատակը, ո՛չ մեր կեցութեան վայրը եւ ո՛չ ալ մեր թողութիւնը տարափը կրցան դեր խաղալ, մեղմելու՝ տիրող կասկածն ու կարծրութիւնը: Իշխանութիւններուն համար կարելորդ՝ իրենց միջոցներով հաստատելն էր որ ենթակային մուտքը ունէ վտանգ չէր սպառնար երկրի ներքին ապահովութեան: Օրէնքը օրէնք էր, հրահանգը՝ հրահանգ, որպէսզի անգգոյշ վրիպում մը տուն չտար ահաւոր աղէտի:

Յաջորդ օրը, առաւօտուն, Պատրիարքարանին կողմէ տրամադրուած երկու հանգստաւետ օթօպիւսներով եւ մի քանի հայ կղերականներու ընկերակցութեամբ նախ այցելեցինք Երուսաղէմէն 10 քլմ. հարաւ Բեթղեհէմ քաղաքը, ուր Ծննդեան տաճարի այրին մէջ, երգչախումբը «Սուրբ-Սուրբ»-ով եւ Տէրունական աղօթքով հոգեպարար անակնկալ մը պարգեւեց այդ ժամուն հոն գտնուող երանաւոր գրօսաշրջիկներուն: Ապա անցանք Ձիթենեանց Լեռ, պտտեցանք 72 լեզուներով «Հայր Մեր»ներու արձանագրութիւնը կրող վանքը եւ յետոյ ճամբայ ելանք դէպի Մեռեալ ծով, Երուսաղէմէն 45 քլմ. արեւելք, ծովու մակերեսէն 400 մէթր վար, ցամաքի վրայ աշխարհի ամենէն ցած կէտին վրայ մեր ոտքերը դպցնելու:

Արտասովոր աւազամորրիկի մը լուսնուցանք հոն: Աւազի հատիկները աչք, քիթ, լսելու լաւ մը գնդահարելէն ետք, ոչիլի պէս փական նաեւ թռող մեր մագերուն վրայ: Հակառակ ասոր, խումբին մէջէն թաւական թիւով «քաջ»եր, իրենց ուխտին հաւատարիմ իջան մինչեւ Աղի Լիճ, ոտք, ձեռք, երես լուալու «օրհնուած» այդ ջուրով եւ շիշեր լեցնելով յիշատակ հաւաքելու, որպէսզի ոտնալայէն կարենային օգտուիլ նաեւ իրենց հարազատները Կիպրոսի մէջ:

Փորձութեան Լեռ-ան լանջին՝ 10 հազար տարուան կեանք ունեցող աշխարհի ամենահին քաղաքին՝ Երիքովի մէջ արաբական Ֆուլի եւ Ֆէլէֆիլի փառաւոր ճաշկերոյթէն ետք վերադարձանք Երուսաղէմ, այցելեցինք Գեթսեմանիի Պարտեզը եւ Հայկական կալուած՝ Աստուածամօր Տաճարը, որուն 50 սանդուխներէն իջնելով մոմ վառեցինք Մարիամ Աստուածածնի գերեզմանին վրայ: Երեկոյեան ժամը 6-ին վերադարձանք հայոց վանք եւ Ս. Յակոբայ տաճարին մէջ ներկայ եղանք թաղման յատուկ կարգին, որուն կը հանդիսապետէր Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտէրեանը:

Շաբաթ օր, թուր ուխտաւորները եւ երգչախումբի անդամներս վանք հաւաքուեցանք դարձեալ եւ այնտեղէն առաւօտեան ժամը 10-ին քաֆասներու առաջնորդութեամբ աւանդական տպաւորիչ թափօրին հետեւելով ուղղուեցանք Ս. Յարութեան տաճար, Յիսուսի Յարութիւնը աւետող լոյսը տեսնելու:



Տեղատարափ անձրեւը ստիպեց շատերուն որ ամէն լինէ առաջ մեկական հովանոց գնեն իբրեւ յուշանուէր քաղաքի հին շուկայէն: Տաճարէն ներս թէ դուրս աննկարագրելի էր խճողումը հայ, յոյն, ասորի, դպտի, մարոնիթ, եւ այլ ազգի ուխտաւորներու, կրօնաւորներու, գթասաշրջիկներու եւ այս թուրքի վրայ կարգ ու կանոն հաստատելու վիճակուած ոստիկանութեան: Երեք ժամէն աւելի ոտքի գամուած, յափշտակութեամբ, շփոթութեամբ աջ ու ձախ, վեր-վար դիտող անսովոր այդ տեսարանին դերակատար ժողովուրդին համբերութիւնն ու յոգնութիւնը ի վերջոյ վարձատրուեցան ժամը 1:10-ին երբ Յիսուսի գերեզմանէն լոյսը երեւցաւ ու իրարու փաթթուած մոմերու փունջին վրայ, անգամ մը եւս հայերու առաջնորդութեամբ հասաւ վերնատուն, Հայոց Պատրիարքին ձեռամբ Յարութեան լոյսը սփռելու հաւատացեալներուն եւ համայն աշխարհին:

Չանգերու ղողանջը, թմբուկներու շառաչը, ժողովրդային լացազանչութիւնները, աղմուկը եւ հազարամեայ տաճարին քարերը սարսող լաքիրինթոսային վիճակը թերեւս Զրիստոնէական հաւատքի պահանջներէն եւ լրջութենէն քիչ մը կը շեղէին, սակայն աւանդութիւնը ինքը՝ կը թաւեր ոգեւորութիւն ստեղծելու եւ ականատեսի վկայութեան երանութիւնը հրահրելու:

Կեսօրէն ետք, Ս. Յակոբայ Տաճարին մէջ, ճրագալոյսի Տօնին, երգչախումբս երգեց քառածայն իր առաջին Պատարագը, դեկավարութեամբ մեր սիրելի խմբավարին՝ Հայրապետ Թորոսեանի եւ երգեհոնի ընկերակցութեամբ՝ Օրդ. Նորա Գրիգորեանի: Պատարագիչն էր Փարիզի Առաջնորդ Տ. Գիւտ. Եպիսկ. Նազգաշեանը:

Երգեհոնի ներկայութիւնը հոն եկեղեցիին մէջ, գիտցողին համար գուցէ զարմանալի թուի: Պատճառը այն է, որ տարիներ առաջ, ինչ որ կը պատմեն, յոյները ջանացած են փոխ տրուած դաշնամուրի մը մէջ պահուիլու, գիշերուան մութին Ս. Յակոբայ գլխադիրը գողնալ տաճարին մէջէն: Մուրճի հարուածներուն ձայնը եւ արթնամիտ պահակի մը հսկողութիւնը ձախողեցուցած են այդ փորձը: Ապացոյցը մինչեւ այսօր կ'երեւայ շիրմաքարի մարմարին վրայի ճաթռուքի հետքերով: Յաւալի այս դէպքէն ետք որոշում կայացուած է լացարձակապէս արգիլելու դաշնամուրի կամ երգեհոնի գործածութիւնը եկեղեցիին մէջ, ինչ որ ալ ըլլայ պարագան: Չեմ գիտեր ինչպէս թաւ երբ առանց մեծ յոյսի մեր երգչախումբին կողմէ անհրաժեշտ այդ կարիքի գոհացման դիմումը կատարեցինք, մեծ եղաւ մեր զարմանքը երբ թարեհաճ եւ լացառիկ կարգադրութեամբ մը՝ հոյակապ երգեհոն մը գտանք վերնատան մէջ, Պատրիարք Հօր հաւանութեան եւ հրահանգին վրայ...

Հրաշալի գեղեցկութիւն եւ գրաւչութիւն ունի Ս. Յակոբայ Տաճարը իր հարիւրաւոր կանթեղներով, ջահերով, վեց խորաններով, հին ու արժեքաւոր իրերով, գորգերով, սարոյքներով եւ հարկաւ Ս. Յակոբայ գլխադիրով: Խորհրդաւոր իր կեդրոնամասը եւ դասը նստարան չունին երբեք: Ժողովուրդը արարողութեանց կը հետեւի յոտնկայս, լացի ծերունի մամիկներէն, որոնք գետինը կը նստին, գորգերուն վրայ ոտնածալ՝ ապրումով ու երկիւղածութեամբ հետեւելու եւ հաղորդուելու շարականներու երգեցողութենէն:

Կիրակի առտու՝ Ս. Չատկին, աւանդական սովորութեամբ եւ իրաւունքի պաշտպանութեան գծով, Հայոց Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն Տաճարին մէջ, Յիսուսի գերեզմանին մուտքին, առտուան ժամը ճիշդ 6-ին: Այո՛, առտուան կանուխ այդ ժամուն, կիսախուփ աչքերով այս պարտականութիւնն ալ



կատարեցինք, քառաձայն սքանչելի երգեցողութեամբ: Այնպիսի միսթիք արձագանգ եւ աքուսթիք, տաճարին յարձրաբեկ սիւներուն ետին կիսամութ եւ գորշ անկիւններէն մումի եւ խունկի զգլխիչ յոյրին հետ ստեղծուեցաւ ոգեղէն սրբացած մթնոլորտ մը, ուր կարծես վայրկեանէ վայրկեան Տիրոջ որդին պիտի իջնէր վար եւ երեւար ուխտաւորներուն աչքին... արցունք կար դեմքերուն վրայ, վերացո՛ւմ, յուզո՛ւմ, Զրիստոնեական հաւատքի իսկական շո՛ւնչը, շարականներու կախարդական համանուագին հետ:

Ս. Յակոբայ Աթոռի միաբաններէն Տ. Դաւիթ Եպիսկ. Սահակեանի կողմէ մատուցուող այս պատարագը եւ արտասանուած քարոզը լրիւ ձայնասփռուեցան Խրայէլի ռատիօկայանէն:

Ժամը 9:30-ին, թափօրով վերադարձանք վանք եւ հոնկէ քալելով անցանք մօտակայ Զրեական Լացի Պատը, Օմարի Մզկիթը (Սողոմոն Իմաստունի Տաճարը) եւ Էլ Աքսա Մզկիթը, որ կը նկատուի մահմետականներու երկրորդ ամենակարեւոր սրբատեղին, Մեքքէն ետք: Զին քաղաքի Պարիսպին վրայ Ս. Ստեփաննոս Դրան մօտ դարձեալ լսուեցանք կարկուտախառն անձրեւի, սակայն օրհնուած այս երկրորդ ջուրի «լոգանքն» ալ արգելք չեղաւ որ քալենք խաչելութեան ճամբայէն (Via Dolorosa) շօշափենք դէպի գողգոթայ ճամբուն վրայ պատերուն հպած Յիսուսի ձեռքի հետքերը, հուսկ ապա ներկայ գտնուելու հայոց վանքին կեդրոնական թախան մէջ կատարուող Անդաստանի արարողութեան:

Այսպիսի փորձառութիւն մը սովորաբար պիտի զգետներ ուէն անձ, սակայն երեք տարբեր կրօնքներու սրբավայրերէն մատակարարուող անտեսանելի ուժը մեզ ոտքի պահեց եւ լիացուց մինչեւ գիշերուան ուշ ժամերը:

Երկուշաբթի առաւօտ, երգչախումբը երգեց իր երրորդ քառաձայն Պատարագը, կրկին Ս. Յակոբայ Տաճարին մէջ, Մեռելոցի Տոնին առթիւ, եկեղեցին ծայրէ ծայր լեցուցած խումներամ հաւատացեալներու ներկայութեան: Յայտնի եղաւ որ մեր համաւը սկսած էր տարածուիլ: Պատարագը մատուցեց եւ աւուր պատշաճի քարոզեց Տ. Գարեգին Արք. Գազանճեանը, յետագային՝ Կոստանդնուպոլսոյ Պատրիարք, որ այս առթիւ յանուն Պատրիարք Սրբազան Զօր եւ Երուսաղէմի

Միաբանութեան գնահատական եւ շնորհակալական իր ջերմ զգացումները յայտնեց Ս. Աստուածածին երգչախումբին, Երուսաղէմի այդ տարուան Չատիկը շէնցնող ու փառաւորող իր ուրոյն մասնակցութեան համար: Պատարագէն ետք, խօսքը գործի վերածելով, Գարեգին Սրբազան թացառիկ կարգադրութեամբ մը եւ նոյնիսկ Սաղիմացիներուն անձանօթ առանձնաշնորհումով Ս. Յակոբայ Տաճարին մէջ աւելի քան մէկ ժամ տեւողութեամբ վանքին ամենէն թանկարժէք գանձերը ցուցադրեց մեզի, իւրաքանչիւրին մասին տալով հարկ եղած թացատրութիւնները:

Ադամանդակուռ սկիհներու, թագերու, խաչերու, աւետարաններու եւ այլ մասունքներու մէջէն ամենէն յատկանշականը Զեթում Բ. Թագաւորի շուրջ երկու մէթր երկարութեամբ միակտոր քեփիպար գաւազանն էր, որուն նմանը չկայ աշխարհիս վրայ:

-Յայերուս համար- ըսաւ Սրբազանը- ամբողջ Երուսաղէմի հարստութիւնը մէկ կողմ եւ այս գաւազանը՝ միւս կողմ: Եթէ ասիկա կորսուի, մենք ալ կորսուած ենք եւ ինչ որ յարգի կը դարձնեն այս իրերը, անոնց վրայի քարերը չեն այնքան,



որքան աշխատուած ձեռագործները, որոնց վարպետները շատոնց մեռած են առանց արհեստավարժ ժառանգորդ թողելու իրենց ետին:

Շլացած էինք:

Գարեգին Սրբազան տակաւին հետաքրքրական նորութիւն մըն ալ յայտնեց, թէ ինչպէս քերիպար այս գաւազանը պաշտօնապէս խնդրուած է, Նուպար Կիւլպենկեանի անձնական միջնորդութեամբ գործածուելու համար Անգլիոյ Էլիզապէթ Թագուհիին թագադրութեան արարողութեան, 1953-ին եւ սակայն վանքը մերժած է ընդամաքել այդ դիմումին հաւանական արկածի մը հետեւանքով ստեղծուելիք աղետի մտահոգութեամբ...

Կես ժամ ետք մեր առջեւ յայտնեցան նաեւ վանքի Թանգարանն ու Գալուստ Կիւլպենկեան Մատենադարանը, ուր պատասխանատուներ Գ. Զինդեանի եւ Ս. Գալայճեանի անշատ յայտնութիւններով շահեկան նոր տեղեկութիւններ քաղեցինք Երուսաղէմի Զայոց Վանքին իսկական հարստութիւններուն մասին:

Այս սպառնիչ օրուան աւարտին ոչինչ կրնար փառատել մեր յոգնութիւնը յայտնաբերելու ճաշկերոյթէն, զոր Պատրիարք Սրբազան Զայոց սարքեց, Պատրիարքարանի փառաւոր դահլիճին մէջ ի պատիւ յիշուող հիւրերուն, ներառեալ Ամերիկայէն եւ Ֆրանսայէն ժամանած ուխտաւորներուն: Անգամ մը եւս Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբին վիճակուեցաւ մթնոլորտը շէնցնել, այլ մանաւանդ Պատրիարքին հիւանդութիւնը մոռցնել ժողովրդական եւ հայրենասիրական երգերով: Բաժակներու զարկերուն հետ հսկայ դահլիճը ծայրէ ի ծայր արծագանգեց «Սարդարապատ»ով, «Երեւան Երեքունի»-ով, «Զայրենիքիս Զետ»ով, «Խմենք Զայրենիք»ով, «Սիփանայ Զաշեր»-ով՝ նոր ոգի եւ աւին սրսկելով ամէն մէկ հայորդիի երակներուն մէջ: Իսկական քէֆ մը տիրեց իսկ եւ կղերական -աշխարհական միասնաբար ապրեցան անգուգական պահեր եղբայրական սիրոյ յարմար տրամադրութեան մէջ: Զրճուանքի մէջ էր մանաւանդ՝ Եղիշէ Պատրիարքը, որ այդ օրերուն լիարժեք թելադրութեամբ անկողինը լքելու չէր... Մեր խմբերգները սակայն լիարժեք յայտնուեցան, ինչ փոյթ թէ կարճ ատենուան մը համար, ժպիտ ճառագայթելով իր հիւանդկախ եւ ցաւատանջ դէմքին վրայ: Կարծես ինքն ալ յարութիւն առած էր տօնախմբութեան գերաստիճան այդ պահուն երբ կարգը եկաւ յիշատակի խմբանկարներ նկարահանուելու խումբի անդամներուն հետ:

Երեքշաբթի 6 Մայիսին, շուկայի գնումներէն ետք խումբին համար յատուկ կարգադրութիւն եղաւ շուրջ վեց ժամ խիստ հետաքրքրական պտոյտ կատարել դէպի Զրեական շրջանները, Արեւմտեան Երուսաղէմ, Թէլ Ավիվ եւ Եաֆա: Արդի Երուսաղէմի մէջ այցելեցինք Իսրայէլի Խորհրդարանի շէնքը՝ Քնեսէթ, վեց միլիոն նահատակ իրեաներու Վատ Եաշէմի յուշ թանգարանը, Զատասայի հռչակաւոր հիւանդանոցը, Այն Զերիմ Գիւղի եկեղեցին, ուր կը գտնուի Յովհաննէս Մկրտիչի Գերեզմանը եւ յետոյ Թէլ Ավիվ, Իսրայէլի առեւտրական եւ վաճառականական հսկայ քաղաքը: Զամբաւաւոր Տիֆէնկոֆ պողոտայէն անցնելով ուղղուեցանք ծովեզերեայ շրջանները եւ ապա՝ աշխարհի երկրորդ ամենահին քաղաքը, 5700 տարուան կեանք ունեցող Եաֆֆան: Յուզիչ էին Զայոց եկեղեցիին մեր այցը, մեր վերջին մոմավառութիւնն ու աղօթքները իբրեւ եզրափակիչ արարողութիւն ուխտագնացութեան մեր յայտագրին վրայ:

Եւ ուղղուեցանք օդակայան, մեր վերադարձին համար: Թէլ Ավիվի Պէն Կուրիոն Օդակայանը...



Եթէ կար տեղ մը, ուր գլխու մազերեդ մինչեւ ոտքի մատներդ մաղէ կ'անցնէին Միջին Արեւելքի թռնկած, լարուած, տագնապալի եւ վտանգաւոր այդ օրերուն, ահա այս օդակայանն էր, ուր հասանք երկու օթափուսներով, երեկոյեան ուշ ժամուն, դէպի Կիպրոս մեր օդանաւը առնելու համար, ըստ յանձնարարութեան՝ թռիչքէն չորս ժամ առաջ: Ամայութիւն էր ամէն կողմ: Մեզմէ զատ գրեթէ ճամբորդ չկար հսկայ այդ օդակայանին մէջ:

Տարիներ շարունակ ճամբորդութիւններու թրումով քանի մը տասնեակ օդակայաններէ անցած եմ, թայց չեմ յիշեր երբեք այս աստիճանի խստութեան, մանրակրկիտ քննութեան, կասկածամիտ աչքերու եւ կարծր վերաբերումի խառն փորձառութիւն մը:

Այս օդակայանին ապահովութեան միջոցառումներուն մէկ տասերորդը եթէ գոյութիւն ունենար ասկէ տասներկու տարի առաջ Պոսթընի օդակայանին մէջ, շատ հաւանաբար այսօր տակաւին կանգուն մնացած պիտի ըլլային Նիւ Եորքի երկրորեակ երկնասլացները, ինչպէս ըլլալով ահաբեկչական աշխարհացունց յարձակումէն:

Մեր ինքնաշարժներէն իջնելէն ետք, մայր շէնքի մուտքին մեզի դիմաւորեցին խումբ մը ոստիկաններ, իւրաքանչիւրը իրենց ձեռքին կամ՝ walky talky եւ կամ կաշեգօտիով սանձուած մարդու հասակով գամբր, սուր հոտառութեամբ օժտուած իրենց ֆշշացող քիթերուն եւ շնաձուկի մը խաճը յիշեցնող սեպածել ակռաներու ցուցադրութեամբ: Եթէ մարսած չըլլայինք Պատրիարքին արքայական փիլաւը մէկ օր առաջ, շատ դիւրաւ հո՛ւս, մեր վախէն կրնայինք դուրս տալ, այս արտասովոր ընդունելութեան դիմաց:

Ոստիկանապետ մը ձեռքով նշան ըրաւ որ կենանք: Երկու հոգի ուզեց, որ իրեն ընկերանան եւ հարցուց թէ ո՞վ է խումբին պատասխանատուն:

- Ես եմ- ըսի- ետեւի շարքերէն մօտենալով իրեն, երգչախումբին ատենապետի իմ հանգամանքովս:

- Ուրիշ մէկը կա՞յ- աւելցուց:

- Այո՛, այս պարոնը- պատասխանեցի, ցոյց տալով մեր խմբավարը՝ Թորոսեանը, որուն դէմքը սկսած էր ճերմկնալ:

- Ինձի հետեւեցէ՛ք, հրահանգեց, յանդիմանական նայուածքը՝ շունչերուն, կարծես ըսել ուզելով ՝հայտէ նայիմ, ինչի՛ կը սպասե՞ք հոտոտալու...՝

Մարդուն ետեւէն, հլու հնազանդ ոչխարներու պէս Զայրոն եւ ես մտանք օդակայանի շէնքը եւ սպասման սրահին խորը շարուած երկար սեղաններու ետին տեղ գրաւեցինք, իր ցուցմունքին վրայ:

-Կ'ուզենք որ դուք երկուքդ հաստատեք իւրաքանչիւր ճամբորդի անունը, ինքնութիւնը, պայուսակը, մէկ առ մէկ: Միւսները պետք է սպասեն, մինչեւ որ կանչուին: Արգիլուած է ո՛ւրե մէկուն խումբէն հեռանալ առանց արտօնութեան, նախքան քննութեան ամբողջացումը: Զասկցա՞ք: Յստա՞կ է: Վերջացողը կ'անցնի այդ կողմ- շէշտեց ոստիկանապետը մատով ցոյց տալով անցագրային ելքի խցիկները:

-ok,ok sir ...Յստակ է...



Ճամբուկները խառնշտկող չըսելու համար խոշտանքող ոստիկանները գրեթէ թուրն ալ երիտասարդ կիներ էին, սեւ սուր աչքերով, հայու եւ յոյսի խառնուրդ կորնթարդ քիթով, ո՛չ շատ տպաւորիչ ֆիզիքով, մայց թիփէ՛ր , որոնց karate-ական եւ զինուորական մարզումը անտարակոյս ձեռքի երկու ճարտար շարժումով գետին կրնար տապալել եւ անշարժացնել Արնոլտ Շվարցնեկերեան կառոյցով ոեւէ երկկ մարդ: Վա՛յ անոր որ սխալ դատողութեամբ ստորագնահատեր անոնց կարողութեան չափանիշը եւ փորձեր սանկ անմիտ ճարպիկութիւն մը: Չղջումը պիտի չուշանար:

Այսպէս մէկ առ մէկ, սահման նշանակուած կարմիր գօտիի մը ետեւէն խումբի անդամները սկսան յառաջանալ մեր սեղանը, իրենց պայուսակները զետեղել անոր վրայ եւ մանրակրկիտ քննութենէ ետք ուղղուիլ դէպի ներս, աջալուրջ հսկողութեամբ պաշտօնեայի մը, որ հեռախօսը ականջին կ'երթար կու գար շարունակ, անհանդարտ վիճակի մէջ:

Տակաւին տասը-տասնհինգ հոգի չէինք քննած, յանկարծ վլվուկ մը փրթաւ, խառնաշփոթութիւն մը, եւ ոստիկաններ ձեռքերնին իրենց մէջքի զէնքերուն տանելով սկսան վազել աջ ու ձախ, եւ մեր վրայ գոռալ շուններուն խլացուցիչ հաշոցին հետ:

-Go, go that way, that way, quick, hurry up, hurry up.

-What, what, what is happening sir? համարձակեցայ հարցնելու պոռացող ոստիկանապետին թունդ ելած:

-Պոմպ, պոմպ, տեղ ի՞նչ է թելողիստ պոմպ...

-Պոմպ՞ But where?

-There, there, go gooooo, run.

Ռոպէի մը մէջ սարսափը պատեց թուրք:

-Մամա՛, պապա՛, գացինք, պիտի մեռնինք, ա՛յ, ա՛յ...

Վալի՞զ, պայուսակ, տոպրակ ձգողը սկսաւ խուճապահար, ահաբեկուած յաճախողութիւններով, լացով, դողով, սողալով վազել դէպի մատնանշուած կողմը, իրարու զարնուելով, գետին գլորուելով, մահէն ազատելու մնազդական եւ մնական այդ ճիգին մէջ:

Յեռատեսիլի կայաններէն եւ կամ լուրերէն շարունակ լսուող ահաբեկչական արարքները եւ անձնասպանական պայթումները մեր տուններու յազկաթոռներուն հանգստաւտութեանը մէջ կը դիտէինք զարմանքով, ցնցումով, գլուխ օրօրելով, մայց երբեք չէինք կրնար երեւակայել որ կարգը մեզի պիտի գար արիւնլուայ մարմիններով նիւթ դառնալու միջազգային լրակալութեան, այդ ալ՝ շաբաթ մը շարունակ Աստուած փառաբանելէ ետք...իր իսկ այգիին մէջ... Ա՞յս էր մեր վերջը ուրեմն, ա՞յս էր մեր ճակատագիրը, ուխտագնացութեան ու մոմավառութեան. օրինուած շուրով լոգանքներու եւ անդադրում աղօթքներու վարձատրութիւնը ա՞յս պիտի ըլլար...

Սարսափը խրած էր իւրաքանչիւրին սրտին մէջ: Արեւներէն ու խմիչքներէն մկրտուած դէմքերու կարմիրը տեղի տուած էր լեմոնի գոյնին, օրհասական պահի լեռնի չորութեամբ եւ շրթունքներու դող- թրթիռով: Ոստիկաններու գոռում գոջումը, զամբերուն ոռնոցը, ճամբորդներուն ճչոցը, հրշէջներու եւ հիւանդակառքերու ճռնչները քանի մը վայրկեանէն ստեղծեցին խելագարիչ այնպիսի մթնոլորտ մը, որ մեզի համար խենթանոցի ճամբան թռնելը թան մը չէր:



Շնչասպառ կը սպասեինք խլացուցիչ պայթումին, առանց գիտնալու թե ո՞ր անկիւնէն պիտի գար խայտառակը: Ո՛չ ալ վստահ գիտեինք եթէ մեր վազած կողմը կամ խմբուած անկիւնը աւելի ապահով էր մեր լքած վայրէն: Մարդ մարդէ լուր չունէր եւ այսպէս suspense-ը մեր փորին մէջ, տագնապալի մեր նայուածքը իրարու դէմքին՝ մէկ վայրկեանը մէկ ժամի չափ կ'երկարէր...

Կաթուածային այս թոհուլտոհին մէջ, մէկէն ի մէկ, թարծրախօսներէն կարճ, կտրուկ, լակոնական անսպասելի հաղորդում մը արձագանգեց օդակայանի տարածքին:

-Stop, stop, false alarm, go back, go back, no bomb, all clear!

Ամա՛: Ի՞նչ է ասիկա: Ասանկ թան կ'ըլլա՞յ: Ի՞նչ է, փո՞րձ է ըրածնին, թե ոչ աչքիսփուք կը խաղանք: Սկսանք մէյ մը իրարու մէյ մը ոստիկաններուն նայիլ, մինչ կնոջական խռպոտ ձայնով յայտարարութիւնը կը կրկնուէր շարունակ, թունդ ելած մեր սիրտերը թեթեւ մը հանգստացնող եւ երես զովացնող սրսկուած պաղ ջուրի պէս:

-Ետ գացէ՛ք: Բա՛ն չկայ: Ամէն ինչ կարգին է...ապահո՛վ:

Չայրանա՞ս կամ ուրախանա՞ս:

Բարեբախտաբար մեր թերահաւատութիւնը երկար չտեսց քանի որ չուշացաւ պատասխանը մեր միտքը քերթող յանկարծական այս փոփոխութեան եւ կացութեան շուրջ առնուած նոր ոորոշումին...

Ուրեմն, մեր երգչախումբի երեց անդամներէն մին, համարձակութիւնը կ'ունենայ իր քովը կեցող ոստիկաններէն մէկուն հարցնելու թե ո՞ր կրնայ ըլլալ ռումբը:

-Հո՛ն, ճիշդ քիչ առաջուան ձեր կեցած տեղը, տիկին, կը պատասխանէ ոստիկանը:

-Մեր կեցած տե՞ղը:

-Այո, այնտեղի սիւնին վրայ հաստատուած ծակ-ծակ երկաթեայ աղբանոցին մէջ...

-Ո՞ր

Ոստիկանը կը մատնանշէ հեռուի գամբիւղը, որուն շուրջ կեդրոնացած էր ապահովութեան ուժերու ամբողջական ուշադրութիւնը:

-Բայց, ես այդ աղբանոցին մէջ իմ թերմոսս նետեցի...

-Թերմո՞սդ:

-Այո, թերմոսը: Մէջը աղի ջուր կար: Մեռեալ ծովէն լեցուցած էի: Բայց

վալիզներով սպասած ատեն ձեռքես ինկաւ եւ մէջի փայլուն ապակին ջարդ ու փշուր եղաւ: Ուրեմն եղածին պէս կափարիչը գոց աղբանոցին մէջ նետեցի:

-Իրա՞ւ կ'ըսէք տիկին, վստա՞հ էք:

-Ինչո՞ւ սուտ խօսիմ: Գացէք, տեսէք...

Ահա այսպէս օդակայանի լուսանկարող ծածուկ մեքենաներէն մին աղբանոցին մէջ այդ թերմոսին ռմբանման սիւնութեն տարուած՝ հնչեցուցած էր ահագանգը վախազդու գալիքին...

Ոստիկանը այս տեղեկութիւնը անյապաղ կը փոխանցէ իր մեծաւորին, ինչ որ տեղի կու տայ անմիջական նոր ստուգումի, եւ հաստատելէ ետք "ռումբին" պարզ թերմոս մը ըլլալը, իշխանութիւնները կ'որոշեն կասեցնել ահագանգային դրութիւնը:

Փա՛ռք Աստուծոյ, հազա՛ր փա՛ռք:

Անդիի աշխարհէն վերադարձած զոմպիներու պէս մեր քայլերը ետ ուղղեցինք մուտքի սրահը, ուր վալիզներու կիսաւարտ քննութիւնը շարունակուեցաւ տակաւին վախով ու դողով, նշանաւոր այդ աղբանոցին "շուքին" տակ, մինչեւ



որ անցնինք տուրքը ազատ մեր մեկնումի սրահը, Cyprus Airways-ի օդանաւին ջերմ կարօտով...

Օդանաւին չափ, եթէ ոչ աւելի մեր տրամադրութիւնն ալ թռիչք կատարեց եօթը ամպերու վրայէն եւ երբ Լառնազայի օդակայանը հասանք քառասուն վայրկեան ետք, մէկ մտածումով օրօրուեցան մեր զգացումները:

-Աչքը սիրենք Կիպրոսին...

30 Մայիս, 2013

Նիկոսիա

